



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ԱՊՐԻԼ 24-Ը ԿՈՉ ՈՒ ՀՐԱԻՐ Է ԱԶԳԱՅԻՆ ՍԹԱՓՈՒԹԵԱՆ.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
Ո՞Ր ԴԷՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԱԴՐԲԵԶԱՆԸ ԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱԻՈՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԸ՝ ԱԼԵՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ.....	8
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111Դ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.....	8
ՀԱՅԱՍՏԱՆԸ 2026 ԹՈՒՄԿԱՆԻ ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ.....	9
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	13
ԱՆՍՈՌԱՆԱԼԻ ԶԱՅՆ ՄԸ ԱԼՊԵԱՆ ԼԵՌՆԵՐՈՒ ԼՈՒԹԵԱՆ ՄԷՁ.....	13
(Արշակունիի թեոդիկի յիշատակին).....	13
ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԻՐ ՍԵՒ ՈՒ ՃԵՐՄԱԿ ԱՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԸՆԴՄԷՁԷՆ.....	21
«ԱՊԱԳԱՆ ՄԵՆՔ ԵՆՔ» (ՌՈԲ), ՄԻՆՉԴԵՌ ԴՈ՛ՒՆ՝ ԱՆՑԵԱԼ ԵՄ.....	21
ՍԻՏԻԷՆ ԳԱՀԻՐԷ՝ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ ՄԷՁԷՆ.....	25
ՓԱՇԵՆԵԱՆ ՔՐԵՍԼԻՆԻ ՄԷՁ ԿԸ ԿԱՏԱԿԷ ՓՈՒԹԵՆԻ ՀԵՏ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ՉԱՓԱԶԱՍՅ ՇԱՏ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ».....	32
ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԴԻՄԱՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԷՁ.....	35
ՏԵՍԱԿԷՏ.....	39
Ցեղասպանական Համասպանդի Լոյսին Տակ.....	39
ԲԱԶՄԱՍՈՒՐ ՈՒ ԲԱԶՄԱՂԷՏ ՄԱՐՏԱՀՐԱԻՐՆԵՐՈՒ ԴԻՄԱՅ,.....	39
Ո՞ՒՐ ԵՆ ԶԳԱՍՏԱՑՈՒՄՆԵՐՈՒ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒ «ԽԱՐԱԶԱՆ»ՆԵՐԸ.....	39
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ.....	43
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ՓՐԿԻՉՆԵՐԸ ՇԱՏ, ԲԱՅՑ ԿՈՏՈՆ Ո՞ՒՐ Է.....	47
Ս. Զատկուան ճշմարտությունը՝ վիրաւոր աշխարհի մը մէջ.....	49
«Ե՛ս եմ՝ մի՛ երկնյիք» – «Ես եմ՝ մի՛ վախնաք» (Յովհ. Զ, 20):.....	49
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՀԻՄՔ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ, ՍՓԻՒՌՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ.....	52
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	54
ՓՈՒՆՁ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	54
ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ.....	58
ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԶԵՐՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԻԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ.....	60
ԱԻԵԼԻ ՔԱՆ ԲԱՌ ՄԸ՝ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ.....	62

ՀԱՅԵԼԻՍ	64
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	65
ՔԱՌԵԱԿՆԵՐ	68

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՊՐԻԼ 24-Ը ԿՈՉ ՈՒ ՀՐԱԻԷՐ Է ԱԶԳԱՅԻՆ ՍԹԱՓՈՒԹԵԱՆ

*«Այսբան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թող ողջ աշխարհ հայուն կարոյայ նախատինք»:
Աւետիս Ահարոնեան*

Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցին առիթով, համայն հայութիւնը՝ միակամ եւ միասիրտ, կը խոնարհի մեր մէկ ու կէս միլիոն սրբադասեալ նահատակներու անմահ յիշատակին առջեւ, վերանորոգելով իր ուխտը հաւատարիմ մնալու իրենց սրբազան կտակին:



Այսօր աշխարհը դարձեալ կ'ապրի արիւնսարբու եւ կործանարար պատերազմներու մահասփիւռ յորձանքին մէջ: Անգամ մը եւս «արդարութիւն», «մարդկային իրաւունք», «միջազգային օրէնք» հասկացութիւնները կը կռիւկոտուին եւ բիրտ ոյժը

իր հրեշային քրքանին մէջ կը պահէ մարդկութիւնը առ հասարակ: Անպատիժ մնացած հայոց ցեղասպանութիւնը ծնունդ կու տայ շարունակ նորանոր ցեղասպանութեանց, որոնց վերջինները՝ Արցախի հայութեան բռնի հայաթափումն ու էթնիկ զտումն էր, Կազայի մէջ շարունակուող ցեղասպանութիւնը, Իրանի դէմ ԱՄՆ-ի եւ Իսրայէլի սանձազերծած լայնածաւալ պատերազմը եւ ուրիշներ: Եւ աշխարհ նոյն կրաւորական անտարբերութեամբ ականատեսն ու ականջալուրը կ'ըլլայ տեղի ունեցող ահաւոր ողբերգութեանց: Բիրտ ոյժի իրաւունքը կը մնայ տիրական նոյնիսկ 21րդ դարուն:

Ո՞ր է հայութիւնը այս բոլորին մէջ:

Սփիւռքը կամ սփիւռքները, մասնաւորաբար հայոց ցեղասպանութեան «մնացորդաց»ի շառաւիղները, սփռուած աշխարհի չորս ծագերը, տակաւ կը կորսնցնեն իրենց հայեցի դիմագիծը համաշխարհայնացման վիթխարի հոսանքին անձնատուր: Յետ-Եղեռնեան մի քանի սերունդ կրցաւ բազում զոհողութեանց գնով կենսունակ պահել յատկապէս՝ հայապահպանման եւ հայակերտումի գլխաւոր ամրոց, հայեցի կրթութեան օճախ՝ ՀԱՅ



ԴՊՐՈՑԸ, միշտ հաւատալով որ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ ու ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄԸ կարելի կ'ըլլար մասամբ հատուցել ՄՇԱԿՈՒԹԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՄԲ., քանզի ՄՇԱԿՈՑԹՆ է ոգեղէն պարունակը ՀՈՂԻՆ, իսկ Պահանջատիրութեան գաղափարախօսութեան հիմնական բովանդակութիւնը՝ ՀՈՂԻՆ վերատիրանալն է վերջ ի վերջոյ: Իսկ արեւմտահայ լեզուն, բառն ու բանը, արեւմտահայ մշակոյթը կրնան փոխանցուիլ սերունդէ սերունդ հայ դպրոցի յարկին տակ գերազանցօրէն: ՀԱՅԵՑԻ նման ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ թրծուած ՄԵՐՈՒՆԴՆ է որ կրնայ գերազանցօրէն ՏԵՐԸ դառնալ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ, ազատագրել զայն, իմաստաւորել եւ արժեւորել զայն: Ժամանակի թաւալումով, սակայն, կը նահանջէ հայ դպրոցը՝ իր աշակերտութեան թիւով, իր աշխարհատարած ցանցի նուազումով, իր հայկականութեան զիջումով եւ այսպէս շարունակ: Զուգահեռաբար, կը նահանջեն արեւմտահայերէնը, հայ բառն ու բանը, ազգային ոգին, հայ մնալու պայքարի կամքը: Կը նահանջեն ազգային մեր արւանդութիւնները, ազգային մեր մշակոյթն ու կենցաղը, ազգային արժէքները, հայը հայ պահող ընտանիքները, որոնք կ'օտարանան քայլ առ քայլ: Մա արդէն անարիւն, ՄՊԻՏԱԿ ԵՂԵՌՆ է, անտարակոյս:

Ինչ կը վերաբերի Հայ Դատին, սփիւռքը տասնամեակներ շարունակ բաւարարուեցաւ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ապահովելով աշխարհի մի քանի տասնեակ երկիրներու կողմէ, պետական թէ խորհրդարանական մակարդակներով: Սփիւռքը երբեք չկրցաւ, սակայն, միաւորել, խտացնել ու կազմակերպել իր տարտղնուած ոյժերը եւ կեանքի կոչել ՏԱՐԱԳԻՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՄԸ, (Մերք Գասպար Տերտերեանի եզրոյթով), որպէսզի կարենար այս ԻՐԱԻԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՈՎ ներկայանալ միջազգային ատեաններուն եւ հետապնդել իր արդար Դատը, որ գերազանցօրէն ՀՈՂԱՅԻՆ ԴԱՏ Է, ամրագրուած Ուիլսընեան իրաւական ոյժ ունեցող սահմանազծումով:

Միւս կողմէ, յետ-Խորհրդային, վերանկախացած Հայաստանը, ազատագրելով հայոց բնիկ օրրան Արցախը եւ հերոսական էջ մը արձանագրելով մեր նորագոյն պատմութեան մէջ, Հայ Դատի Պահանջատիրութեան գծով մասնաւորապէս, 2023 թուականին կորսնցնուց զայն, չկարենալով իր հպարտառիթ յաղթանակը ամրագրել հմուտ դիւանագիտութեամբ, ինչպէս նաեւ՝ ազատագրեալ Արցախը հզօրացնել ռազմական, տնտեսական, ժողովրդագրական եւ այլ առումներով: Եւ մինչ թշնամի Ատրպէյճանը երեսուն տարի շարունակ ամրացուց ինքզինք ռազմական գերակշիռ պատրաստուածութեամբ, մեր երկրի տէրերը պարարտացուցին իրենց սեփական գրպանները, իրենք հարստացան դղեակներով, տուլարային միլիարտներով, թալանելով երկրի հարստութիւնը եւ կեղեքելով սեփական ժողովուրդը, էսպէս անտեսելով՝ հայոց բանակն ու անոր սպառազինութիւնը ուժեղացնելու հրատապ հրամայականը: Մա է դառն իրականութիւնը, եթէ իրերը կոչենք իրենց անունով:

Հիմա ունինք ա՛յն ինչ ունինք՝ հայաթափուած Արցախ, բռնի տեղահանուած արցախահայութիւն, սրբապղծուած վանքեր, եկեղեցիներ ու գերեզմաններ, տարածքային զիջումներ նոյնիքն Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքէն, 5000-է աւելի զոհեր եւ իր յաղթանակով զինովցած Ալիեւ, որ տակաւին կը ժպրհի ՀՀ-ը կոչել արեւմտեան Ատրպէյճան եւ տարբեր ոտնձգութիւններով ահաբեկել մեր երկիրը: Ի գուր չէ ըսուած. «Ախորժակը ուտելով կը բացուի»: Այս կացութեան դեմ յանդիման, ՀՀ վարչապետ



Փաշինեան հետեւողական ջանասիրութեամբ կը հրապարակայնացնէ իր «Իրական Հայաստան»ի գաղափարախօսութիւնը, զայն ներկայացնելով որպէս խաղաղութեան փիլիսոփայութիւն եւ վարքագիծ: «ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ»ի խօսույթը կը միտի ջնջել հայութեան յիշողութենէն պատմական հայրենիքն ու Արցախը, ցեղասպանուած ու հայաթափուած հայկական գաւառները, քաղաքներն ու շէները, ուրանալ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու արիւնն ու կտակը, մեր պատմական իրաւունքները, ՀՀ վարչապետի բռնացի յայտարարութեամբ. «Հրաժարուիմ եմ պատմական արդարութեան վերականգնման օրակարգից»: Ըստ իրեն, պահանջատիրական պայքարը վտանգ է «Իրական Հայաստանի»ն: Ունինք ա՛յն ինչ ունինք եւ վերջ: Նոյնիսկ Արարատը պէտք է դադրի մեր տեսլականը, յաւերժութեան մեր խորհրդանիշը ըլլալէ...Սա կը նշանակէ սահմանափակել հայութեան պետական, քաղաքական մտածողութիւնը ՀՀ ներկայ վարչական քարտէսի նեղ սահմաններուն մէջ, վերասրբագրել կամ ձեւափոխել հայոց ինքնութիւնը, զայն կտրելով իր պատմական, մշակութային եւ քաղաքակրթական արմատներէն: Սա կը նշանակէ վերջ ի վերջոյ Հայաստանը պարպել իր բուն բովանդակութենէն, այսինքն իր հայկականութենէն: Կարելորը՝ հարկ վճարող ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ունենալն է, (ազգութեամբ հայ թէ օտար), ոչ թէ ազգային գիտակցութիւն ունեցող, հայոց լեզուն, հայոց մշակոյթն ու հայոց պատմութիւնը, հայկական եկեղեցին եւ ազգային արժէքները իրենց ինքնութիւնը համարող ՀԱՅԵՐ: Սա ուղիղ կը տանի դէպի «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐՈՒ» իրականութեան, խաղաղօրէն եւ անարիւն:

Դժուար չէ ենթադրել որ սա վստահաբար ստրպեճանաթրքական յանձնարարութիւն է եւ կը ծառայէ որոշապէս անոր շահերուն: Սա յանձնուողական քաղաքականութիւն է թշնամիին պահանջներուն, յանուն խաբուսիկ եւ ժամանակաւոր «խաղաղութեան»: Նման «խաղաղութեան» անարդար եւ ստրկացնող պայմաններուն համաձայնիլը որոշապէս կը յանգի վերջիվերջոյ թէ՛ հայկական ինքնութեան եւ թէ՛ հայկական պետականութեան կորուստին:

ԱՊՐԻԼ 24-ը յուշարար է սթափութեան Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի հայութեան համար, որոնք այնքան օտարացած են իրարու, փոխանակ սերտացնելու իրենց կապերը, միաւորուելու եւ բռունցքուելու որպէս ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒԴԴՐ, ՄԷԿ ՃԱԿԱՍՏԱԳԻՐ, ՄԷԿ ՏԵՍԼԱԿԱՆ: Սփիւռքը Հայաստանով միայն կրնայ զօրանալ, իսկ Հայաստանի միակ իրաւ դաշնակիցը Սփիւռքն է: Իրարմով ամրապինդ, մենք կրնանք կերտել ՀԱՅԿԱԿԱՆ հզօր պետականութիւն, որ լաւագոյն ՎՐԷԺՆ է թուրքին ու ազերիին կատարած ցեղասպանութեանց եւ երաշխիքը ազգային մեր իղձերու իրականացման: Պատմութիւնն է վկայ որ ո՛չ ոք կրնայ մեր ՈԳԻՆ կտորել, եթէ ԲՈՈՒՆՑՔՈՒԱԾ ենք որպէս արժանի յետնորդները մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն եւ՝ բոլոր անոնց, որոնք ինկան որպէսզի ԱԶԳՆ ու ՀԱՅՐԵՆԻՔԸ ապրին իրենց ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՄԲ եւ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՈՒԹԵԱՄԲ:

ԽՈՐԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԱԴՐԲԵՋԱՆԸ ԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱԻՈՐ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԸ՝ ԱԼԵՆ ՄԻՄՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ



«Մեդիալաբի» հարցերին պատասխանում է քաղաքական գիտությունների դոկտոր, ազգային անվտանգության հարցերով փորձագետ Հրաչեայ Արզումանեանը

– «Շատ է խօսուում երաշխավորի մասին, և մեր ընդդիմադիր գործընկերները նաև Ազգային ժողովում մէկ-մէկ ասում են՝ ո՞վ է

ձեր երաշխավորը, Ադրբեջանն է ձեր երաշխավորը, և չեն հասկանում, որ Ադրբեջանի անվտանգության ամենամեծ երաշխավորը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ Հայաստանի Հանրապետության երաշխավորը Ադրբեջանն է: Այս մտքի հեղինակը խորհրդարանի ղեկավար Ալեն Միմոնեանն է, պարոն Արզումանեան: Իսկապէ՞ս այս երկու պետությունը կարող են միմեանց անվտանգության երաշխավորը հանդիսանալ:

– Շատ դժուար է պատասխանել այդ հարցին, որովհետև մտքի հեղինակը Հայաստանի խորհրդարանի ղեկավարն է, իսկ Հայաստանը խորհրդարանական երկիր է, ու երկրի գլխավոր մարմինը խորհրդարանն է, ոչ թէ վարչապետը: Հետեւաբար, երբ ԱԺ նախագահը չի հասկանում անվտանգության խօսքի նշանակությունը, մի քիչ զարմանալի է, ես չեմ ենթադրում, թէ Ալեն Միմոնեանը չգիտի անվտանգության սկզբունքները կամ չգիտի՝ ինչ է նշանակում անվտանգություն:

Ադրբեջանը, Թուրքիան, Ռուսաստանը պատերազմ են յայտարարել Հայաստանին, հիմա մի երկիր, որի հետ դու պատերազմի մէջ ես, որովհետև այսօր դու ունես ընդամենը հրադադար, Թուրքիայի հետ բլոկադան նույնութեամբ կայ, ինչը պատերազմի շարունակության ձեւ է, այս պարագայում, երբ երկրի ղեկավարը յայտարարում է, թէ քեզ հետ պատերազմ վարող երկրները քո անվտանգության երաշխավորներն են, կարող է բացատրուել հետեւեալ կերպ. եթէ դու ընդունում ես, որ պարտուել ես, որ դու ստորագրում ես կապիտուլացիա և լրիւ ենթարկում ես Ադրբեջանին, այդ ժամանակ Հայաստանը



կորցնում է իր ինքնիշխանութիւնը ու դառնում է Ադրբեջանի մաս՝ որպէս «Արեւմտեան Ադրբեջան», ապա այդ ժամանակ «Արեւմտեան Ադրբեջանի» անվտանգութեան երաշխաւորը դառնալու է Բաքուն:

Կամ կարելի է մի ֆանտաստիկ պահ պատկերացնել, երբ Ադրբեջանը, Հայաստանը, Թուրքիան, Վրաստանը, Ռուսաստանը, Իրանը կը կազմեն մեծ կռաւիցիա, բայց, կրկնում եմ, սա անհաւանական սցենար է մեր ժամանակներում: Հետեւաբար, երբ դիտարկում ենք այն իրականութիւնը, որն այսօր կայ, ապա նման յայտարարութիւնը միայն մէկ դէպքում կարող է իրականութեանը համապատասխանել, երբ Հայաստանը ստորագրում է կապիտուլացիա ու կազմալուծում է, բայց այստեղ էլ խնդիր կայ:

Լաւ իմանալով այն թշնամանքը, որ Ադրբեջանի հասարակութեան մէջ կայ հայերի նկատմամբ, Հայաստանի փորձն էլ Բաքում, Սումգայիթում, Արցախում, չեմ էլ հասկանում, թէ որտե՛ղ պէտք է տեղափոխուի հայ հասարակութիւնը, որովհետեւ Ադրբեջանը դժուար թէ հայ հասարակութեան անվտանգութիւնն ապահովի: Արցախի փորձը ցոյց տուեց, որ նորմալ հայը չի կարող իր ընտանիքը թողնել Ադրբեջանի վերահսկողութեան տակ, փառք Աստծոյ, արցախահայութիւնը փրկուեց՝ տեղափոխուելով Հայաստան, բայց Հայաստանից ո՞ր պէտք է տեղափոխուենք:

Լուծումներից մէկն էլ սա կարող է լինել. «Արեւմտեան Ադրբեջան»՝ առանց հայերի: Խորհրդարանի ղեկավարին պէտք է հարցնել, թէ այդ երկու տարբերակներից ո՞րն է ինքը առաւել հաւանական համարում կամ ընդունում:

– Բայց Ալեն Սիմոնեանը ու իր քաղաքական թիմն ասում են, թէ Հայաստանն ու Ադրբեջանը այլևս խաղաղութեան մէջ են, չկայ՝ պատերազմ:

– Մենք խաղաղութեան մէջ չենք: Անգամ պայմանագիր չկայ ստորագրուած այդ մասին, ի՞նչ խաղաղութեան մասին են խօսում: Ես դեռ չեմ էլ խօսում այդ պայմանագրի կատարման, կայունութեան ու այլնի մասին, եթէ անգամ այն լինի էլ, բայց դա էլ չկայ: ՔՊ-ն ու նրա ներկայացուցիչներն ուղղակի խաբում են հայերին կեղծ խաղաղութեան խօսոյթով ու մօտեցումներով, Հայաստանը պատերազմի մէջ է, մենք ունենք ընդամենը հրադադար ու չունենք լայնածաւալ ռազմական գործողութիւններ:

Ռուսաստանը, Թուրքիան, Ադրբեջանը, Իսրայէլը հայ ազգի ու Հայաստանի դէմ տեղեկատուական դաշտում հիբրիդային պատերազմը շարունակում են: Մենք պատերազմի մէջ ենք, ու այդ երկու-երեք տնտեսական բեռի տեղափոխումը, հայկական



կողմի միակողմանի զիջումները, Արցախի յանձնումը չի կարելի ներկայացնել որպէս վերջնական խաղաղութիւն:

– *Այսինքն՝ այս պայմաններում նման յայտարարութեան իմաստը ո՞րն է, պարո՞ն Արզումանեան:*

– Անվտանգութեան երաշխաւոր դասական իմաստով՝ ո՛չ, բայց ես նշեցի մի քանի տարբերակ, որի դէպքում Ադրբեջանը կարող է դառնալ ՀՀ անվտանգութեան երաշխաւորը: Առաջին՝ երբ դու կազմալուծում ես պետութիւնը և դուրս ես գալիս Հայաստանից, ինչպէս արեցինք Արցախում, երկրորդ՝ ստորագրում ես կապիտուլացիա ու ենթարկում ես ադրբեջանական օրէնքներով ապրելուն, երրորդ՝ երբ Հարաւային Կովկասը դառնում է Եւրամիութեան մաս, բոլորը մտնում են մի կառոյցի մէջ ու ապրում են, ինչպէս ապրել են Սովետական Միութիւնում: Մնում է պարզել, թէ այս երեք տարբերակից ո՛րը նկատի ունի ՀՀ խորհրդարանի ղեկավարը: Դէ, վերջին տարբերակը ֆանտաստիկայի ժանրից է, մնում են այն երկուսը, այնպէս որ, ԱԺ նախագահը չի խաբում, մենք մօտենում ենք վերջնական խաղաղութեան:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՊՐԻԼ 2-ԻՆ ԱՆՈՒՄՆԵՐ ԿՐԻՍՏՈՍԻՆԻ ՄԵՋ



Հինգշաբթի, 2 Ապրիլ 2026

11:00 - Հայոց Ցեղասպանութեան 111-րդ տարելիցին առթիւ, Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը իր խօսքը պիտի ուղղէ Խորհրդարանի լիագումար նիստին – : Նիստը ուղղակի պիտի հեռասփռուի ՌԻՔ2 հեռատեսիլի կայանէն:

Շաբաթ, 18 Ապրիլ 2026

Արիննի Տուչութիւն

15:00 - 18:00 Նարեկ Վարժարան, Նիկոսիա:

Ուրբաթ, 24 Ապրիլ 2026

09:30 - Սուրբ Պատարագ հանդիսապետութեամբ՝ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեանի Սուրբ Աստուածածին Մայր Եկեղեցի, Նիկոսիա:

Ուրբաթ, 24 Ապրիլ 2026

The Hidden Map ֆիլմի ցուցադրութիւն՝

21:00 ՌԻՔ2

23:00 ՌԻՔ1

Ֆիլմը Անգլերէնով է եւ Յունարէն ենթագիրներ ունի:

Շաբաթ, 25 Ապրիլ 2026



17:30 - Երիտասարդական քայլարշաւ

(«Զինա Փալաս»ին կից գտնուող կանգառէն դէպի Արմենիաս Պողոտայ):

19:00 - Համայնքի քայլարշաւ

(Արմենիաս Պողոտային սկիզբը գտնուող Կիպրոս-Հայաստան Բարեկամութեան պուրակէն դէպի Ցեղասպանութեան Յուշակոթող):

19:30 - Ցեղասպանութեան Ոգեկոչման Ձեռնարկ

Ցեղասպանութեան Յուշակոթող (Եկեղեցւոյ շրջափակ):

- Ուղերձներ՝

* Կիպրահայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան:

* Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան:


* ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Իննա Թորգոմյան:

* Խօսք՝ Յարգարժան Սթրովոլոսի Քաղաքապետ Ստավրոս Ստավրինիտիս:

* Երգ՝ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Երգչախումբ:

* Ծաղկեպսակներու զետեղում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 2026 ԹՈՒԱԿԱՆԻ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ



16 Ապրիլ 2026-ին, կ.է. ժամը 6-ին, պաշտօնական գեղեցիկ միջոցառումով՝ Հայաստանը արժանատրապէս պատուուեցաւ որպէս 2026 թուականի զբօսաշրջութեան իտէլական վայր:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Նիկոսիոյ պատմական հին թաղամասին մէջ գտնուող SHOE FACTORY-ին մէջ, որուն մշակութային մթնոլորտը այնքան համահունչ է Օրուան նպատակին: Միջոցառումը կազմակերպուած էր գլխաւորաբար Կիպրոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան կողմէ, գործակցաբար՝ Կիպրոսի ճամբորդութեան հարցերով Գրողներու եւ Լրագրողներու ընկերութեան եւ «Ֆարոս» Արուեստներու Հիմնարկին (Pharos Arts Foundation):



Ներկայ էին Կիպրոսի մօտ ՀՀ Դեսպանութեան ներկայացուցիչներ, կիպրահայ համայնքի ներկայացուցիչներ՝ Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան, Պետ. Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան, հայ թէ տեղացի կառոյցներու եւ մամլոյ ներկայացուցիչներ եւ կիպրացի թէ օտար հասարակութեան ընտրանի մը: Կիպրոսի Գրողներու եւ Լրագրողներու պատկան ընկերութեան նախագահը պատուեց ՀՀ դեսպանութիւնը յատուկ պատուագիրով, Հայաստանը յայտարարելով որպէս միջազգային իտէլական զբօսաշրջութեան երկիր 2026 թուականին համար: Ան դրուատեց Հայաստանը որպէս հարուստ պատմութեամբ, բարձր մշակոյթով եւ արտակարգ բնութեամբ երկիր, որ ունի նաեւ տարբեր իւրայատկութիւններ, մասնաւորաբար հիւրընկալ եւ հիւրասէր ժողովուրդ:



Շնորհակալութեան խօսք ըսաւ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Ն.Վ. Տիկ. Իննա Թորգոմեան այս գեղեցիկ պատեհութեան համար, գնահատական ազնիւ խօսքերուն համար եւ միջոցառումը կարելի դարձնող անձանց եւ կազմակերպութեանց, շեշտելով Հայաստանի պատմական, մշակութային ժառանգութեան, բնական գեղեցկութեանց եւ այլ բարեմասնութիւնները որոնք զայն գրաւիչ կը դարձնեն զբօսաշրջիկներու ուշադրութեան:

Ներկաները հիացումով դիտեցոն՝ ներկայացուած տեսահոլովակով եւ բաժնուած գրքոյկներով, Հայաստանի տեսարժան վայրերը, որոնք իրաւամբ զայն կը բնութագրեն որպէս մշակութային պանծալի եւ փառաւոր ժառանգութեան տէր երկիր, որ ունի ամէն հնարատրութիւն եւ կարելիութիւն դառնալու համար միջազգային զբօսաշրջութեան հոյակապ վայր:

Արդարեւ, Հայաստանը իրեն կը քաջէ զբօսաշրջիկները մասնաւորաբար իր լեռնաշխարհի այլազան եւ գեղատեսիլ տեսարաններով, իր պատմամշակութային յուշարձաններով, իր 6000-ամեայ գինեգործութեան ասանդութիւններով, իր հնամեայ վանքերով, Դիլիջանով եւ այլ քաղաքներով, Սեւանայ լիճի փիրուզեայ հմայքով, Երեւանի կենսաշէն միջավայրով եւ իր ժողովուրդին ցուցաբրած ջերմ հիւրասիրութեամբ...

Միջոցառման յաւելեալ փայլ ընծայեց երաժշտական կատարումը կիպրահայ յայտնի եւ սիրուած երգիչ Յովիկին եւ իր նուագախումբին:



Ներկաները հիւրասիրուեցան հայկական համադամ ուտեստներով եւ ըմպելիքի հարուստ տեսականիով՝ հայկական տաքուկ մթնոլորտի մը մէջ:

:

Գնահատելի ձեռնարկ մը՝ արդարեւ, որ վստահաբար խթան պիտի դառնայ կիպրացի յոյն թէ օտարազգի ժողովուրդի լայն զանգուածներու զբօսաշրջութեան հոսքին դէպի մեր սիրելի հայրենիքը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՁԱՅՆ ՄԸ ԱԼՊԵԱՆ ԼԵՌՆԵՐՈՒ ԼՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Արշակունի Թեոդիկի յիշատակին)



Գարնանային պայծառ կիրակի մըն էր: Այն հազուագիւտ օրերէն մէկը, երբ բնութիւնը երկար ձմեռնաքունէ ետք կամաց-կամաց կ'արթննայ, կը բանայ իր քնահար աչքերը ու կը քաշէ զարթօնքի նոր շունչ մը: Ժընեւի եկեղեցիներու զանգերուն մեղմ եւ թախճոտ դողանջը տակաւին կը մնայ ականջներուս մէջ, երբ Ս. Պատարագէն ետք ընտանիքով դուրս եկանք քաղաքէն: Ինքնաշարժին մէջ կ'ինս կողքս նստած էր, իսկ ետեւի նստարանին՝ մեր երկու զաւակները. փոքրիկ տղաս՝ Արեգը, հազիւ հինգ տարեկան, եւ դուստրս՝ Գառնին, որ արդէն տասնմէկ տարիքը նոր թեւակոխած էր: Անոնցմէ ոչ ոք գիտէր, թէ ո՛ր կ'երթայինք այդ օրը:

Շաբաթ մը առաջ կրկին ձեռքս առած էի հայ ազգային-հասարակական գործիչ, մանկավարժ, հրապարակախօս, թարգմանիչ եւ ականաւոր գրող Արշակունի Թեոդիկի (1875–1922) սրտառու զիրքը՝ «Ամիս մը ի Կիլիկիա»¹ խորագրով: Հատորին ընթերցումը անգամ մը եւս աչքերուս առջեւ բացաւ այն դառն եւ արիւնտ էջերը, որոնց վրայ ան իր զգայուն հոգիով ու նրբակերտ լեզուով արձանագրած էր Կիլիկիոյ հայութեան տառապանքը: Սուլթանական նախընթաց կոտորածներու շարքին եւս սահմոկեցուցիչ աղէտ մը, որ 1909 թուականին առանձնապէս իրագործուած էր Ատանայի եւ Հալեպի վիլայեթներու հայ ազգաբնակչութեան դէմ՝ այս անգամ միանշանակ գաղտնի մէկ ձեռագործը երիտթրքական իշխանութեան: Արդարեւ, այս զանգուածային սպանդը, որուն զոհ դարձաւ շուրջ 30.000 հայ եւ որոնցմէ աւելի քան 20.000-ը՝ միայն Ատանայի վիլայեթին մէջ, աղէտագոյժ մըն էր այն մեծ եղեռնին, որ արեւմտահայութեան դէմ կը ծրագրուէր երիտթրքական «Միութիւն եւ Յառաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխներուն կողմէ:

Արշակունի Թեոդիկ, որ անդամակցած էր 11 ապրիլ 1879-ին Չապէլ Ասատուրի (Միպիլ, 1863–1934) նախաձեռնութեամբ Կ.Պոլսոյ մէջ հիմնադրուած «Ազգանուէր հայուհեաց ընկերութիւն» կրթական կազմակերպութեան, Ատանայի վերոգրեալ աղէտին ի լուր ուղղակի ինք անձամբ կը դիմէ երթալու ողբերգութեան վայրը՝ բերելով սպեղանի մը հազարաւոր կարեվեր ու անտերունչ որբերու, միաժամանկ միութեան անունով անոնց համար հիմնելու դպրոց մը: Այս առնչութեամբ Չապէլ Ասատուր հետեւեալ վկայութիւնը կը հաղորդէ Արշակունի Թեոդիկի յիշատակին ձօնած իր մահագրականին մէջ.

«Դեռահասակ օրիորդներու խումբ մը յանձն առաւ իսկոյն հանդէս մը սարքել ի նպաստ Ատանայի աղէտեալներուն, ինչ որ յաջողութեամբ գլուխ հանեց: Բայց կը խորհէինք թէ մինչեւ հանդէսը պատրաստուէր, մինչեւ հասոյթը հանգանակուէր,

¹ Արշակունի Թեոդիկ, «Ամիս մը ի Կիլիկիա – Կցկոտուր նօթեր», տպ. Վ. Եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կ.Պոլիս, 1910, 213 էջ:



ամիսներ պիտի անցնեն, եւ անդին հեզ որբեր աճիւններու մէջ կը միային: Տիկ. Թէոդիկը շատ քիչ կը ճանչնայի, երբ պահ մը քովս մօտենալով, իր համեստ ձեւովը քսաւ [...] ‘Թող օրիորդները իրենց հանդէսով զբաղին, բայց մենք անոր հասոյթին սպասելով ժամանակ չանցնենք: Պէտք է մեզմէ մէկը անմիջապէս մեկնի Ատանա, անձամբ որբերը հաւաքէ, դպրոց մը բանայ եւ իր ձեռքովը կարգադրէ ինչ որ պէտք է: ‘Ո՞վ կ’երթայ’ ըսի սրտաբեկ: – ‘Ես’ պատասխանեց [...] ‘Դո՛ւք, գոչեցի զարմանքով, բայց ինչպէս պիտի երթաք այդ արիւնի եւ աւերակի երկիրը առանձին, առանց դրամի, առանց պաշտպանութեան’: ‘Դրամի եւ պաշտպանութեան ի՞նչ պէտք կայ, շոգենաւային ընկերութեան մը կը դիմենք, ձրի տոմսակ մը ձեռք կը ձգենք. հոն հասնելէս ետքը Աստուած ողորմած է’: Եւ ինք տոմսակը հայթայթեց ու մեկնեցաւ անձայն անշշուկ: Ամիս մը ետքը երբ դարձաւ, արդէն Ատանայի մէջ դպրոցը բացուեց եւ յարմար շէնքի մը մէջ, հարիւրաւոր տղաք հաւաքուեց կ’աշխատէին գրասէղաններու առջեւ [...] Այս ամէնը տիկ. Թէոդիկ առանձին յաջողուցեր էր աստիճան-անդին դիմումներ ընելով, գիշեր-ցորեկ աշխատելով, տքնելով, զրկանքի եւ յարատեւ յուզմունքի կեանք մը ապրելով այդ տառապանքի երկրին մէջ, ուր դարմաններ, սրտապնդեր, կազդուրեր էր ինչ որ գտեր էր խուսափած՝ հուրին ու սուրին հարուածներէն: Ինք, միայնակ, մէկ ամսուան մէջ շատ աւելի գործունէութիւն ցոյց տուաւ քան ուրիշներ տարիներու ընթացքին»²:

Արդարեւ, Արշակունի Թէոդիկ 14 հոկտեմբեր 1909 թուականին ծովային ճանապարհով յօժարակամ մեկնեց էր Ատանա, եւ նշուած թուականէն սկսեալ տեսակ մը օրագրութեան նման ճամբորդական ուղեգրութիւն մը գրի առած է եւ զայն, ինչպէս վերագրեալ նշուեցաւ, «Ամիս մը ի Կիլիկիա – Կցկտուր նօթեր» խորագրով հրատարակած է Վ. եւ Հ. Տեր-Ներսէսեան տպարանէն, Կ.Պոլիս, 1910 թուականին: Յատկանշական է, որ ան իր նկարագրութիւնները՝ դէմքերն ու դէպքերը, հանդիպումները, որբահաւաքի անդուլ աշխատանքը, արիւնալի կոտորածներէն ետք տարածաշրջանին մէջ առկայ իրավիճակը, ապա հետագայ իրադարձութիւնները չի նկարագրեր իբրեւ պատմական փաստերն ու երեւոյթները սառն առարկայականութեամբ դիտող պատմաբան մը, այլ որպէս ականատես հոգի մը, որ ամբողջ սրտով իր անձին վրայ կը կրէ իր ժողովուրդին արնածոր վերքը: Այնուամենայնիւ հատորին ընթերցանութիւնը լոկ Երեմիայի մը անվերջ ողբը ըլլալու տպաւորութիւնը չի ձգեր, այլ իր մէջ կը կրէ վճիտ լաւատեսութիւն մը, որ հակառակ բոլոր արհաւիրքներուն, հուրի ու սուրի անողոք հարուածներուն, հայ ցեղը նորէն ոտքի կը կանգնի, անոր ոգին կը տոկայ, կը յարատեւէ ու կ’երթայ միշտ յառաջ:

Յատկանշական ուրիշ առանձնայատկութիւն մըն ալ, որ զիս ամէնէն շատ կը հրապուրէ, լեզուի գեղեցկութեան համանուագն է. այն ազնիւ ու բարձր հնչիւնները, որոնցմով արեւմտահայերէնը իր ամբողջ գեղեցկութեամբ կը փայլի: Հեղինակին գրիչին մէջ լեզուն կը դառնայ երաժշտութիւն. ան կը հնչէ վեհ ու լուսեղէն, կը հոսի անխռով ու մաքրամաքուր նման լեռնային այն բիրեղ աղբիւրին, որ ժայռերու ծոցէն կը բխի եւ կարկաչահոս իր ճամբան կը հունատրէ՝ ոռոգելով հայ գրականութեան անդաստանը: Ամէն էջ կը դառնայ կամովին կանգ առնելու պահ մը, շունչ քաշելու եւ խոկալու վայր մը, ուր նախադասութիւնները կը ծաղկին իրենց քաղցրաբոյր բովանդակ հմայքով: Հոն բառերու եւ ապրումներուն միջեւ տրոհում չկայ. անոնք կը միաձուլուին ու կը կազմեն ներդաշնակ ամբողջութիւն մը, ուր լեզուն կը շնչէ, իսկ հոգին կը խօսի:

² Հմմտ. Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», ԺԷ. տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ.Պոլիս, 1923, էջ 12:



Արշակունիի Թեոդիկ կազմած է նաեւ «Արդի բարոյագիտութիւնը»³ խորագրով դասագիրք մը միջին եւ բարձրագոյն դասընթացներու համար, որ հրատարակուած է Կ.Պոլիս 1911 թուականին: Այսպիսով ան կը հանդիսանայ այն առաջին հեղինակներէն մին, որ ընդհանրապէս Օսմ. կայսրութեան մէջ նախաձեռնած է նման ձեռնարկի մը հրատարակութեան: Բացի ընտիր յօդուածներէ, որոնք հրատարակուած է ան Կ.Պոլսոյ Ժամանակի հայկական անուանի թերթերէն ունաց մէջ, ինչպիսիք են՝ «Մանգումէ», «Սուրհանդակ», «Բիւզանդիոն» եւ «Ժամանակ», Անգլիոյ մէջ՝ Սքարպորօ, «Ուեսթլենտ հայ սքուլ» (The Westlands School – Scarborough) աղջկանց գիշերօթիկ դպրոցը աւարտելէ ետք, ուսումը շարունակելու նպատակով անցած է Փարիզ: Այս միջոցին ան իր կարեւոր մասնակցութիւնը բերած է Իշխան Գուիտոն Լուսինեանի երկհատոր ֆրանսերէն-հայերէն բառարանի⁴ պատրաստութեան, որ հրատարակուած է Փարիզ 1900 թուականին: Սակայն իր ամենամեծ ներդրումը եղած է իր ամուսնոյն՝ Թեոդիկի հրատարակած գրական ստեղծագործութիւններու յօրինման գործուն մասնակցութիւնը, ապա ոչ միայն ներշնչողը, այլեւ գոնէ մինչեւ 1920 թուականը եռանդուն աշխատակիցը «Ամէնուն տարեցոյց»-ներու հրատարակութեան, որոնք իրենց հանրագիտական տեսակին մէջ ցայսօր կը մնան գրեթէ անգերազանցելի:

Վերոնշեալ «Ամիս մը ի Կիլիկիա» հատորի ընթերցումէն ետք հոգիս այլեւս խաղաղ չէր: Անշուշտ գիտէի, որ այս տաղանդաւոր գրագիտուհին իր կեանքի վերջին օրերը անցուցած էր Զուիցերիոյ լեռներուն մէջ՝ Լէյզին (Leysin) անունով փոքրիկ գիւղը, ուր ան 2 յունուար 1922 թուականին թոքախտի պատճառով հրաժեշտ տուած էր կեանքին: Այդ օրերուն Լէյզինը Եւրոպայի նշանաւոր առողջարանային կեդրոններէն մէկն էր: Հազարաւոր թոքախտաւոր հիւանդներ կը բուժային հոն՝ փնտռելով լեռնային մաքուր օդին եւ արեւուն բուժիչ զօրութիւնը: Բայց այդ լեռները, որոնք շատերուն համար յոյսի ապաստան էին, ուրիշներու համար տարաբախտօրէն դարձած են իրենց կեանքի վերջին հանգրուանը:

Օրեր շարունակ ներքին հեւք մը, պատասխանատուութեան անօրինակ զգացում մը կը ճնշէր միտքս: Հակառակ անոր, որ ես այդ կիրակի սուրբ պատարագի արարողութեան ընթացքին առանձնակի աղօթքիս մէջ յիշեցի զինք, բայց միեւնոյնն է, ներքուստ կը զգայի, որ այդ բաւարար չէր: Ներսիդիս հնչող կոչ մը զիս կը մղէր դէպի լեռնային այն հեռաւոր գիւղը, որու գերեզմանատան մէջ կ'ենթադրէի, թէ կը գտնուի անոր շիրիմը: Այս միջոցին խորապէս համոզուած էի, որ ես ինծի բնաւ պիտի չներէի, եթէ գէթ անգամ մը չերթայի Լէյզին եւ այնտեղի գերեզմանատան մէջ հողակոյտին վրայ հոգեհանգստեան պաշտօն մը կատարելով՝ չ'աղօթէի անոր յոգնաբեկ ոսկորներու յաւիտենական հանգստեան եւ հոգւոյն լուսաւորութեան համար:

Արդէն դուրս եկած էինք մայրուղի: Սովորաբար Ժընեւէն դէպի Լէյզին ճամբան մէկուկէսէն մինչեւ երկու ժամ կը տւէ: Գիւղը կը գտնուի Ռոն (Rhône) գետի լայն հովիտին վերեւ՝ ծովու մակերեսէն շուրջ 1260 մետր բարձրութեան, լեռներու արեւոտ դարաւանդի մը վրայ: Բայց այդ օրը գոնէ ինծի համար ճամբան պարզ երթեւեկութիւն մը չէր: Ան լուռ ու խորհրդաւոր ուխտագնացութիւն մըն էր՝ յարգանքի տուրք մը հայ գրողի մը շիրիմին, որուն սիրտը ազգին համար բաբախած էր եւ աչքերը փակած հայրենիքի ազատութեան երազով:

³ Տե՛ս Թեոդիկ, Արշակունիի, «Արդի բարոյագիտութիւնը (Միջին եւ բարձրագոյն Ա. դասընթաց)», հրտ. Յ. Գըլլընեան գրատուն, Կ.Պոլիս, 1911, 230 էջ:

⁴ Լուսինեան, Գուիտոն, «Նոր բառագիրք, պատկերազարդ, ֆրանսահայ», Typographie Morris Père et Fils, Փարիզ, 1900:



Բնութիւնը նոր կը զարթնէր իր ձմեռնային երկար քունէն: Ճամբան մեղմ ու լուռ կը սահէր մուգ կանաչ անտառներուն միջով, ուր եղեւնիներու խեղճոտ բոյրը կը խառնուէր գարնան թարմ ու կենարար օդին: Լեռնային ոլորապտոյտ ճամբաներու բարձունքին երբեմն կը բացուէին լուսաւոր մարգագետիններ՝ ծածկուած երփներանգ ծաղիկներով, որոնք հեռուէն կը փայլէին փոքրիկ աստղերու պէս՝ ցանուած կանաչ, փափուկ գորգերու վրայ:

Զուակներս զարմանքով դուրս կը նայէին պատուհանէն: Անոնց աչքերուն մէջ այս բոլորը պարզապէս հաճելի զբօսանք մըն էր:

Լսեցի, թէ ինչպէ՛ս անոնք գուարթ կը խօսէին իրարու հետ:

– Թերեւս *փիքնիքի* կ’երթանք, – ըսաւ Գառնին:

– Կամ գուցէ լեռնային գիւղի մը ճաշարանին մէջ ճաշելու, – մեղմ ժպիտով աւելցուց կինս:

Ես լուռ մնացի: Նախընտրեցի, որ անոնք շարունակեն ապրիլ իրենց անմեղ ենթադրութիւններուն մէջ, մինչ մեր ինքնաշարժը հետզհետէ կը մօտենար լեռնային գիւղին: Նախապէս երբեք չէի եղած Լէյզին, ուստի չէի ճանչնար այն ճամբան, որ մեզ պիտի տանէր դէպի գիւղին գերեզմանատունը: Անցորդի կամ տեղացի բնակիչի մը գերեզմանատան տեղը հարցնելէ առաջ, յարմար սեպտեմբեր ինքնաշարժը պահ մը կայանելու Լէյզրնի մուտքին մօտ գտնուող փոքրիկ կայանատեղին, որպէսզի ի վերջոյ կնոջս եւ երեխաներուս բացատրեմ մեր ճանապարհորդութեան առաջնահերթ նպատակը՝ միաժամանակ խոստանալով անոնց, որ այս ուխտագնացութենէն ետք միասին պիտի նստինք ճաշարան մը՝ համտեսելու զուիցերիական խոհանոցի սիրուած ուտեստներէն պանիրի համեղ *ֆոնտիչ*: Դժգոհութեան որեւէ նշան չերեւցաւ: Ընդհակառակը՝ լուռ ու պարզ համաձայնութիւն մը կար անոնց հայեացքներուն մէջ: Ներքին ուրախութիւն մը զգացի՝ համոզուելով, որ ընտանիքս արդէն լաւ կը ճանչնար նախասիրութիւններս եւ կ’ընդունէր երբեմն իմ անակնկալ, բայց սրտէ բխած որոշումներս:

Լէյզին խաղաղ կը հանգչէր արեւոտ լեռնային դարաւանդի մը վրայ: շեռուն կարելի էր տեսնել անտառներու մութ զանգուածները, կանաչ դաշտերը եւ կապոյտ մշուշով պատուած Ալպեան հեռաւոր լեռնաշղթաները: Բնականաբար, մենք միայն այդ գեղեցիկ տեսարանը վայելելու համար չէինք եկած: Ուստի գիւղի նեղ ու խաղաղ փողոցներուն մէջէն դանդաղօրէն անցնելով՝ հասանք եւ կանգ առինք Լէյզրնի գերեզմանատան դարպասին առջեւ, այն լուռ ու խորհրդաւոր վայրին, ուր շուրջ դար մը առաջ իր վերջին հանգիստը գտած էր այն զգայուն հոգին, որուն գիրքը կրկին անգամ խորապէս յուզած եւ Կիլիկիոյ հայութեան համար իր ապրած ցաւերով ճմլած էր սիրտս:

Դանդաղ քայլերով ներս մտանք: Գերեզմանատունը ունէր նոր եւ ընդարձակ բաժին մը՝ բազմաթիւ հողակոյտերով եւ շիրմաքարերով: Մենք ուղղուեցանք գերեզմանատան հին բաժինը, ուր հաւանական կը կարծէի գտնելու Արշակունիի Թեոդիկի շիրիմը: Բայց այստեղ եւս տարածքը բաւական ընդարձակ էր՝ ծածկուած հարիւրաւոր գերեզմաններով եւ շիրմաքարերով, համեստ խաչերով կամ մաշած քարակոթողներով, որոնցմէ շատերուն վրայ ժամանակը մեղմօրէն ջնջած էր հանգուցեալներուն անուններն ու թուականները: Ծառերուն տերեւները հազիւ կը շարժէին գարնան թեթեւ հովին տակ, եւ այդ լռութեան մէջ կը թուէր, թէ բնութիւնը ինք եւս յարգանքով կը պահէր այս վայրին խորհրդաւորութիւնն ու խաղաղութիւնը:



Կիրակի էր՝ ոչ-աշխատանքային օր մը, ուստի գերեզմանի պաշտօնեաներէն ոչ ոք կը գտնուէր հոն, որոնցմէ որեւէ մէկուն դիմելով գուցէ կարենայի ունենալ որոշակի տեղեկութիւն Արշակունիի Թեոդիկի շիրիմին վերաբերեալ: Մեր որոնումներուն դրական արդիւնք մը ապահովելու նպատակով որոշեցինք չորսով՝ իւրաքանչիւր ոք հին գերեզմանի տարածքի հիւսիսային, հարաւային, արեւելեան եւ արեւմտեան կողմերը երթալ, եւ այդպէս շարժելով դէպի կեդրոնական մասը՝ շարունակել մեր փնտռութիւնը:

Սկսանք ուշադիր կարդալ շիրիմներուն վրայ փորագրուած անունները, թէկուզ գտնել հայկական խաչի մը նշանը, որ արդէն ստոյգ ցուցանիչ մը պիտի ըլլար մեր փնտռած գերեզմանին: Ամէն քարի վրայ կարծէք թաքնուած էր կեանքի մը պատմութիւնը՝ հեռու երկիրներէ եկած հիւանդներու կամ անձանօթ ճամբորդներու համառօտ կենսագրութիւնը, որոնք իրենց յաւիտենական հանգիստը գտած էին այս լեռներու լռութեան մէջ:

Ժամերը սահեցան եւ վերջալոյսը սկսաւ հետզհետէ նուաղիլ լեռնաշղթային ոսկենշոյլ պաստառին վրայ: Արեւի ջերմ ճառագայթներու հիւծումին հետ զգալի դարձաւ ցուրտը, իսկ մենք ինչքան ալ եռանդուն ճիգ կը գործադրէինք հասնելու համար մեր նպատակին, միեւնոյն է, մեր ջանքերը մնացին ապարդիւն: Արշակունիի Թեոդիկի անունը ոչ մէկ քարի եւ խոնարհած ոչ մէկ խաչի վրայ կարելի եղաւ գտնել: Այդ պահուն զգացի, թէ ինչպէ՛ս լեռներու խոր լռութիւնը կը ծանրանար սրտիս վրայ եւ անձրկած ըլլալու շփոթ մը կը համակէր էութիւնս: Կը ջանայի մնալ լաւատես, որովհետեւ միեւնոյն ատեն համոզուած էի, որ թէեւ շիրիմը կարելի չեղաւ գտնել, սակայն անոր աճիւնացած մարմինը տակաւին կը հանգչէր այս հողին մէջ, այս լեռներու խաղաղութեան տակ: Հետեւաբար կանչեցի կինս եւ զուակներս եւ մենք կեցանք Լէյզիմի հին գերեզմանատան մէջտեղը՝ աղբիւրակի կողքին: Բացատրեցի, որ թէպէտ ժամանակը քայքայումի իր բռնաւոր օրէնքով ջնջած է այն նշանները, որոնք պիտի վկայէին իր գերեզմանին գոյութիւնը, այնուամենայնիւ իր աճիւնէն անկորնչելի մաս մը մնացած ըլլալու էր հոն՝ խառնուած այն հողին, որուն վրայ կը գտնուէինք: Մենք եկած էինք աղօթքով յարգելու յիշատակը այն կնոջ, որ իր գրիչով երբեմն ձայն տուած էր ամբողջ ժողովուրդի մը ցաւերուն:

Քահանայական ծառայութեանս երկար տարիներուն յուղարկաւորութիւններու առթիւ բազմիցս երգած էի հոգեհանգստեան շարականները եւ արտասանած «Հոգուցն հանգուցելոց» աղօթքը: Բայց այդ օրը, Լէյզիմի լեռներու սրբազան վեհութեան մէջ, անոնք կարծես նոր իմաստ եւ ջերմեռանդ խորհրդաւորութիւն մը ստացան: Երբեք մինչ այդ այդքան սրտառուչ ու գեղեցիկ չէին հնչած այդ շարականները, եւ երբեք այդքան ներշնչումով ու խորագգած չէի արտասանած հոգեհանգստեան այն աղօթքը, ինչպէս այդ պահուն: Այդ խորհրդաւոր լռութեան մէջ մահուան տիեզերական եւ անխուսափելի օրէնքը աւելի խոր կերպով կը բացուէր գիտակցութեանս առջեւ՝ յիշեցնելով, թէ ան մշտապէս կը քալէ իւրաքանչիւրիս գոյութեան հետ, ան մեր մէջ կը գտնուի մեր ծննդեան իսկ օրէն՝ սկիզբէն մինչեւ վախճանը, իր անտեսանելի, բայց պարտադիր ներկայութեամբ:

Ընթրիքէն ետք, երբ տուն կը վերադառնայինք, ճամբուն երկայնքին կը մտածէի, թէ չի կրնար ըլլալ, որ բժախնդիւր ու կարգապահ զուիցերիացիներուն քով արձանագրութիւն մը պահպանուած չըլլայ Արշակունիի Թեոդիկի մասին, երբ հայ գրականութիւնը բազմիցս կը վկայէ, որ ան 1920 թուականին Կ.Պոլսէն մեկնած է Լոզան, ապա՝ Լէյզիմ, ուր, ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, կը գտնուէին թոքախտաւորներու համար նախատեսուած հոշակաւոր առողջարանները: 1890-ական թուականներէն սկսեալ Լէյզիմի մէջ հիմնուած էին բազմաթիւ առողջարաններ, որոնց թիւը մինչեւ 1940-ական թուականները կը հասնէր ութսունի, ուր միաժամանակ կը բուժուէին շուրջ 3500 հիւանդներ: Հետեւաբար անկարելի էր, որ



արձանագրութիւն մը եղած չըլլար իր կեցութեան բուժարանին, ի վերջոյ, մահուան եւ թաղման պարագաներուն մասին:

Արդարեւ, 24 մայիս 2001 թուականին ժընեւէն նամակ մը յղեցի Լէյզընի քաղաքապետարան՝ հետաքրքրուելով մասնաւորաբար Արշակունիի Թէոդիկի յուղարկաւորութեան պարագաներուն, անոր գերեզմանի ճշգրիտ թիւին եւ գտնուած վայրին վերաբերեալ: Նամակիս մէջ նաեւ նշած էի, որ քաղաքապետարանի տոմարներուն մէջ իր մասին որեւէ արձանագրութիւն փնտռուի մեզի ծանօթ իր գրական Արշակունիի Թէոդիկ անունով: Մակայն մեծ եղաւ յուսախաբութիւնս, երբ Լէյզինի համապատասխան պաշտօնէութենէն 14 յունիս 2001 թուագրութեամբ ստացայ պատասխան մը, ուր կը հաղորդուէր, թէ նշուած անունով գերեզմանի մը գոյութիւնը արձանագրուած չէ իրենց տոմարներուն մէջ: Այդ կարճ ու պաշտօնական տողերը, որոնք առաջին պահուն կարծէք կը փակէին յուսալի որոնումներու դռները, լուռ ու ծանր ստուեր մը ձգեցին սրտիս մէջ: Բայց այդ լռութեան մէջ անգամ ես կը զգայի, թէ փնտռելու եռանդս սա պահուս որքան ալ անթեղուած ըլլար, մոխիրներուն տակ տակաւին կը մնայ կայծ մը, որ նորէն հրդեհի կրնար վերածուիլ՝ լոյս սփռելով որոնումի ճամբաներու վրայ: Քանզի երբ մարդ ճշմարտութիւնը գտնելու համար կը հետեւի յիշողութեան հետքին, նոյնիսկ խաւարչտին հորիզոններու ետին յոյսի բարակ, բայց յամառ շող մը կը շարունակէ փայլփլիլ. մութ ամպերու ճեղքուածքէն աստղի մը շողարձակած լոյսի իւրաքանչիւր թրթռում սփոփանքի նոր ժպիտ մը կ'ուրուագծէ մեր դէմքին վրայ:

Այդպէ՛ս ալ եղաւ, երբ ատեն մը ետք նոյն հարցով կրկին դիմեցի Լէյզինի քաղաքապետութեան, բայց այս անգամ Արշակունիի Թէոդիկի գրական անունին փակագիծներու մէջ կցեցի նաեւ իր ամուսնական Լապճինճեան եւ օրիորդական Ճեզվեճեան մականունները: Ուրախութիւնս մեծ եղաւ, երբ այս անգամ քաղաքապետարանէն ստացայ աւելի քաջալերական պատասխան մը. ան կը տեղեկացէր, թէ որոշած է իր արխիւներուն մէջ վերստին հետազօտել Արշակունիի Թէոդիկի շիրիմին վերաբերեալ արձանագրութիւնները:

Այդ պահէն սկսեալ կը սպասէի նոր լուրի մը՝ այն ներքին համոզումով, թէ փաստացի տեղեկութիւններ պիտի հաղորդուին հանգուցեալ գրագիտուհիին մասին: Թէպէտ սպասումը ակնկալուածէն աւելի երկարատեւ եղաւ, այնուամենայնիւ, սակայն, ան առթեց գոհունակութեան անսահման զգացում մը: 6 յունիս 2002 թուագրութեամբ նամակ մը կու գար՝ առաջին անգամ ըլլալով արխիւային կարեւոր տուեալներ յայտնելու Արշակունիի Թէոդիկի իջեւանած առողջարանին, մահուան, թաղման եւ շիրիմին մասին.

«Տիկին Արշակունիի Թէոդի Կեանի [Թէոդիկեան] գերեզմանին վերաբերեալ

Պարո՛ն,

Յղում ընելով մեր նախորդ նամակագրութեան եւ հիմք ընդունելով ձեր տրամադրած լրացուցիչ տեղեկութիւնները, թաղման գրանցամատեանին մէջ պարզեցինք, որ՝

- *Տիկին Արշակունիի Թէոդի Կեանը, ծնած է 1875 թուականին Կ.Պոլիս, մահացած է Լէյզին՝ Տենթ [Տան] տիւ Միտի բուժարանը, թաղուած է 7 յունուար 1922 թուականին, թիւ 666 գերեզմանին մէջ:*

Այս գերեզմանը շահագործումէ դուրս հանուած է 1949 թուականին՝ համաձայն 21 հոկտեմբեր 1948 թուականի քաղաքապետարանի որոշումին:



*Շնորհակալութիւն յայտնելով, որ բարի ըլլաք նկատի առնելու մեր այս հաղորդագրութիւնը, կը խնդրենք ընդունիլ, Պարոն, մեր առանձնայատուկ յարգանաց հաւաստիքը:
Յանուն քաղաքապետարանի*

*Քաղաքապետ՝
Պ.-Ա. Լումպարտի*

*Քարտուղար՝
Պ. Իզենշմիտ»*

Մասնաւոր ուշադրութեան արժանի են նաեւ այս նամակին կցուած երկու փաստաթուղթերը, որոնցմէ մին յստակ կը բացատրէ այն վարչական որոշումը, ըստ որու ընդհանրապէս հանուած կամ գործածութենէ դադարեցուած է Արշակունիի Թէոդիկի շիրիմը:

*«ԼԷՅՁԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Գերեզմանոցի մասնակի փակման մասին:*

21 հոկտեմբեր 1948 թուականի իր նիստին մէջ Լէյզինի քաղաքապետարանը, նկատի առնելով Պետական խորհուրդին կողմէ 15 հոկտեմբեր 1948 թուականին տրուած թոյլտւութիւնը, որոշեց 31 մարտ 1949 թուականէն սկսեալ փակել Լարեթսի գերեզմանոցի վերին դարաւանդի արեւմտեան մասը, այսինքն՝ այն մասը, որ կը պարունակէ 590-էն մինչեւ 739 համարներով գերեզմանները (թաղումներ 9 մարտ 1920-էն մինչեւ 13 նոյեմբեր 1923 թուականը):

Այստեղ թաղուածներու հարազատները, որոնք կը փափաքին պահել տապանաքարերն ու [այդ գերեզմանները] շրջապատող [իրերը], կը խնդրուի զանոնք հեռացնել մինչեւ 31 մարտ 1949 թուականը, որմէ ետք քաղաքապետարանը զանոնք պիտի վերացնէ առանց հետագայ ծանուցման:

*Լէյզին, 21 հոկտեմբեր 1948 թ.
Քաղաքապետարանի քարտուղարի գրասենեակ»:*

Առկայ փաստաթուղթին մէջ կարելոր նշումը «գործածութենէ դադարեցնել» հասկացութիւնն է, որ կը նշանակէ, թէ տուեալ շիրիմը այլեւս չի պահպանուիր անձնական կամ ընտանեկան խնամքի տակ ու կը դադարի ըլլալէ օրինական թաղման վայր մը: Այսպիսի շիրիմներ կարելի չէ ծածկել նոր հողով կամ օգտագործել նոր թաղումներու համար՝ համաձայն տեղւոյն քաղաքապետարանի եւ գերեզմանատան կանոնակարգին, տրուած ըլլալով, որ այդ գերեզմաններուն հանդէպ երկար ժամանակ ընտանեկան խնամք կամ հետաքրքրութիւն չէ ցուցաբերուած:

Զուիցերիոյ գործող օրինակարգին համաձայն՝ նման ծանուցումներ սովորաբար նախօրօք կը հրապարակուին մամուլի էջերուն մէջ: Թէոդիկ իր մահկանացուն կնքած էր Փարիզ՝ 24 մայիս 1928 թուականին, իսկ դժուար է ըսել, թէ իրենց մէկ հատիկ զաւակը արդե՞՞ք ունէր կարելիութիւնը հետագային համապատասխան հետաքրքրութիւն ցուցաբերելու իր մօր շիրիմը պահպանելու համար: Ափսոս, որ այդ օրերուն Զուիցերիոյ հայ գաղութը, որքան ալ իր սրտին մէջ յարգանք ու սէր ունենար, ոչ միշտ զգօս գտնուած է պահպանելու համար այս մեծ գրագիտուհիին յիշատակը: Մինչդէռ զուիցերիացի այն մեծ հայասէրը՝ Անթոնի Քրաֆթ-



Պոննար (1869–1945), որ տարիներ շարունակ եղած էր Հայաստանի միջազգային լիկայի գործադիր յանձնաժողովի անդամ եւ բազմավաստակ տնօրէնը Ժընեւէն 30 քմ. հեռու՝ Լեման լիճի ափերուն մօտ գտնուող Պենին (Begnins) գիւղաքաղաքին մէջ հիմնադրուած հայկական որբանոցին, Արշակունիի Թէոդիկի մահուան գրեթէ նախօրեակին այցելելով իրեն՝ տուած է հետեւեալ փայլուն վկայութիւնը.

«Անցեալ դէկտեմբեր 30-ին առիթ ունեցանք վերջին անգամ տեսնելու հայ քաջարի հայրենասէր ու գրող Տիկին Թէոդիկը, որուն անունը սիրով ու յարգանքով կը յիշեն բոլոր անոնք, որոնք ճանչցած են զինք: Մեր լեռներուն մէջ գտնուող առողջարան մը ապաստանած, հեռու իր ընտանիքէն եւ իր ժողովուրդէն, զոր այնքան սիրած էր եւ որուն համար զոհաբերած էր իր անձը, սաստիկ կը տառապէր դաժան հիւանդութենէ մը, որ երկու օր ետք պիտի իլէր իր կեանքը: Երբ տեսաւ, թէ մենք մտահոգ էինք իր վիճակով, ան իր ծայր աստիճան տկարութեան մէջ ջանք գործադրեց արտասանելու հետեւեալ քանի մը բառերը, որոնք մեզի մնացին իբրեւ հայոց տառապանքի եւ հայրենասիրութեան գերագոյն կոչ մը.

‘Իմ ճակատագրով մի՛ գրադիք. ես պիտի մեռնիմ. զբաղեցէք Հայաստանով, ան պէտք չէ՛ մեռնի՛:՝

Թող այս ձայնը լսուի մեռեալներուն, հայրենիքէ ու օճախէ զրկուած թափառական զոհերուն, քրիստոնէական հաւատքի նահատակներուն, այն զինուորներուն հետ, որոնք իրենց կեանքը զոհեցին ժողովուրդներու իրաւունքին եւ ազատութեան, մարդկային համերաշխութեան եւ արդարութեան համար»⁵:

Այս ինքնատիպ եւ խօսուն վկայութիւնը, որ Անթոնի Քրաֆթ-Պոննար թողուց Արշակունիի Թէոդիկի մասին, կը հնչէ Լէյզինի լեռներուն մէջէն՝ իբրեւ վերջին արձագանգ մը այն ձայնին, որուն տառապահիւժ մարմինը հանգչեցաւ մոռցուած հողին տակ, բայց որուն պատգամը ո՛չ ժամանակի բռնաւոր մաշումը եւ ո՛չ սերունդներու փոփոխումը կրցաւ լռեցնել: Շիրիմը այսօր այլեւս տեսանելի չէ, իսկ անունը փորագրուած չէ տապանաքարի մը վրայ: Սակայն անոր ձայնը կը յարատեւէ իր գրական ստեղծագործութիւններուն եւ այն բառերուն մէջ, որ իր կենաց վերջին ժամերուն իբրեւ անլռելի դողանջ արտասանեց՝ ամբողջ ժողովուրդի մը ուղղուած իբրեւ վերջին պատգամ.

«Իմ ճակատագրով մի՛ գրադիք. ես պիտի մեռնիմ. զբաղեցէք Հայաստանով, ան պէտք չէ՛ մեռնի»:

Այս պատգամը այսօր ալ կը հնչէ Ալպեան լեռներու լռութեան մէջ՝ միանալով հայոց բիւրբիւրոց նահատակներու, տարագիրներու, արդարութեան եւ հայրենիքի ազատութեան համար զոհուածներու անլռելի ձայնին: Եւ գուցէ ճիշդ ինչն էր գտնուի Արշակունիի Թէոդիկի իսկական շիրիմը՝ ոչ թէ տապանաքարի կամ յուշարձանի մը տակ, այլ հայ ազգի հաւաքական յիշողութեան մէջ, ուր անոր ձայնը կը շարունակէ հրաւիրել մեզ յիշելու,

⁵ Krafft-Bonnar, Antony, « L'Heure de l'Arménie », Société Générale d'Imprimerie, Genève, 1922, p. 44.

խորհելու եւ զգալու իւրաքանչիւրիս անձնական պատասխանատուութիւնը պատմութեան առջեւ՝ հայրենիքի շինութեան, պետականութեան հզօրացման եւ ազգի բարօրութեան հանդէպ:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Ժըննել 15 մարտ 2026

Մեծի պահոց Ե. կիրակի, Դատաւորին

ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԻՐ ՍԵՒ ՈՒ ՃԵՐՄԱԿ ԱՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԸՆԴՄԷՋԷՆ

«ԱՊԱԳԱՆ ՄԵՆՔ ԵՆՔ» (ՌՌԲ), ՄԻՆՉԴԵՌ ԴՈ՛ՒՆ՝ ԱՆՑԵԱԼ ԵՄ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորական ընտրութեանց ժամկետը կը մօտենայ (7 Յունիս 2026), իսկ կիրքերն ալ հետզհետէ կը գրգռուին, առանց այդ ալ երկիրը գտնուելով խիստ անկայուն վիճակի մը մէջ, մէկ կողմէն՝ իշխանութիւն-ընդդիմութիւն բռնազբօսիկութեամբ, միւս կողմէն՝ պետութիւն-եկեղեցի յամեցող լարուածութեամբ:

Քացայայտուած եւ յայտարարուած կուսակցութիւններ կամ կողմեր, արդէն բուռն կերպով լծուած են իրենց կազմակերպչական ու մրցակցական արշաւանքներուն, իսկ ուրիշներ՝ լռելեայն թէ երկչոտ քայլերով, կը փորձեն իրենց ընտրանքները հաշուարկել:

Ակնյայտ է, որ իշխանութիւնը՝ իր Քաղաքացիական պայմանագրութեամբ ու գլխաւորութեամբ Նիկոլ Փաշինեանի, ինքզինք կը նկատէ յաղթական եւ առանց վարանելու, յականէ-անուանէ կ'արտայայտուի այդ մասին, իսկ ընդդիմութիւնը տակաւին ինքզինք չէ գտած, թէկուզեւ կը ճգնի միացեալ ուժերով հանդէս գալու, սակայն, մինչեւ օրս այդ իրագործման չէ հասած:

Անդին, միւսները տաղտոնուած ու ցիրուցանուած, չըսելու համար, անկազմակերպ ու թափթփած հոսանքի մը մէջ կը գտնուին, որուն եկած է միանալու, զարմանալ թէ չզարմանալ, երեք նախկին նախագահներու համախմբումը (անշուշտ, ոչ միասնական կարգով, այլ՝ անջատական), իսկ այլ խմբակցութիւններ եւ անկախականներ, կը դեգերին հոս ու հոն, կամ կատչելու ուրիշի մը (իմա՝ ուժեղի) կամ հանդէս գալու բախտագուշակի դերով եւ կամ՝ իր «բախտ»ը ձգելով պատահականութեան եւ անորոշութեան:



Ներկայ տուեալները, սակայն, ցոյց կու տան, որ իշխանական թերը ամենէն ցուցանշայինն է, քանի պետական վարչամեքենայի բազմաթիւ կառոյցներն ու համակարգերը, այսպէս թէ այնպէս, կամ իր տրամադրութեան տակ է, կամ իր ազդեցութեան գոտիներուն մէջ կը գտնուին:

Ասիկա չի նշանակեր, թէ իշխանութիւնը բացարձակատիրական է, քանի այժմու երեւոյթներն ու գործօնները, այնքան ալ ամբողջատիրական չեն կրնար դառնալ, եթէ «խաղաթուղթերը», յանկա՛րժ, շրջուին կամ նոր եւ անակնկալ պայմաններ ստեղծուին:

Այս առումով, պէտք չէ անտեսել օտարաբնակ հայորդիներու մեծ թիւը (յատկապէս՝ ռուսաբնակ), որ կրնայ «յեղաշրջել» որեւէ կողմի առաւելութիւնը, ուրիշի հաշույն, սեղանը շրջելով ասոր կամ անոր գլխին, որովհետեւ, իրենք զիրենք աւելի ապահով եւ զօրաւոր կարծողներ ու հաւատացողներ, դուրսէն «ներգադրած»ներու վրայ մեծ յոյսեր կապած են, թէ անոնք ինչպէ՛ս կրնան արժեւորել ու կենդանացնել, լուրջ, բայց, դիւրաբեկ ենթադրութիւն ալ կրնայ ըլլալ, ինչ որ բացառուած չէ, երբ նկատի ունենանք նման հաւանականութեան մը պարագային, փխրուն ու փրփուրային... հաւաստիքներն ալ, իրենց ուռուցիկ ու թռուցիկ դիտաւորութիւններով:

Ինչ կը վերաբերի ընդդիմութեան, իմ կարծիքով, նման որակում մը իսկ տալը անոր, ոչ միայն ճիշդ չէ, այլեւ՝ անհեթեթ, որովհետեւ, ոչ մէկ ձեռով ինքզինք արդարացուց կամ դարձաւ իսկական համախումբ ճակատ մը, որուն որպէս արդիւնք, ան դարձաւ անվստահելի եւ ապառոջ, քանի յոյս դնելը կամ անոր ապաւինիլը, ոչ մէկ երաշխիքի արժանի է:

Երեւակայել, որ ընդդիմութեան սկզբնական շրջանի շարժումները կը հաշուրուէին, մինչեւ տասը հազար եւ աւելի, երբ հետզհետէ, բոլորին համար պարզ դարձաւ, որ անիկա իրենց երազածը չէ, այլ աւելին, մեծ յուսախաբութիւն ապրեցան:

Այսօր, այդ ընդդիմութենէն մնացած է ափ մը հետեւորդներ, որոնք խարխափումի ու վարանումի մէջ կը ծփան, չգտնելով իրենց իսկական տեղն ու դերը, իսկ այժմ, ամէն գնով, կը փնտոեն ուժեղ զօրակիցներ, անոնց հետ միանալու կամ յենելու եւ այդ մեկնարկով ճամբայ ելլելու:

Վստահաբար, այդ մակընթացութեան մէջ, ամենէն «անբախտ»ն ու «անտէր»ն է Հայաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ կ'ապրի ահաւոր սարսափ ու մտահոգութիւն, տեսնելով այն «անապատութիւնը», որ կը սպառնայ իր գոյութեան, դէպի Ազգային Ժողով արշաւելու իր հեւքին մէջ, որովհետեւ, ցարդ արձանագրուած վիճակագրութիւնները ցոյց կու տան, թէ իր կարելիութիւնները երբեք յուսադրական ու քաջալերական չեն:

Աւելի քան պարզ եւ յստակ է, թէ՛ ինչո՞ւ ան գործընկեր գերադասեց, ընդդիմադիր «Հայաստան» կազմակերպութիւնը, գոր կը գլխաւորէ՝ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը, առանց լրջօրէն մտածելու, որ ընտրուած ուղին, թէ՛ անճիշդ է, թէ՛ խաբուսիկ, թէ՛ հպանցիկ, թէ՛ անիրատեսական, թէ՛ կասկածելիական:



Վերջին հաշուով, ՀՅԴն, եթէ ինքզինք կը նկատէ փորձառական հնարքներով, խոհուն հասկացողութիւններով ու ճկուն յարաբերութիւններով օժտուած կազմակերպութիւն, նոյնիսկ նման բարդ, խճճուած ու թեժ պայմաններու մէջ, ո՛չ օրին, ո՛չ յետագային, ո՛չ ալ ներկայիս, կրցաւ ինքզինք հեռու պահել այն որոգայթներէն, գառիթափներէն ու վերիվայրումներէն, որոնք կը վիստային (ու կը վիստան) շուրջը:

Պատահակա՞ն է, որ այսօր ան կը գտնուի նման անել կացութեան մը առջեւ ու կը գտնուի ոչ բարեյոյս հարթակի մը վրայ, հետեւաբար, արդեօ՞ք Քոչարեանի նման լարախաղաց մը, խաչագող մը կամ բռնատէր մը, կրնա՞յ դաշնակից ունենալ, երբ իր դիմաց յայտնուած է, անսահման եւ անչափելի (ան)բարեմասնութիւններով համալրուած վիշապ մը, որ ո՛չ ինչայած էր Ղարաբաղը (արդեօ՞ք իր ծննդավայր-հայրենիքը), իսկ Հայաստանը, իրեն համար դարձուցած իր իսկական «կթան կուլ»ի անսպառ աղբիւր մը:

Չենք գիտեր, թէ նման գործընկերութիւն-դաշինք մը, ո՞րքանով կը ծառայէ որեւէ կողմի (բայց, ի միջի այլոց, շա՛տ լաւ գիտենք), հետեւաբար, ինչո՞ւ այս շուտիկութիւնը, ապիկարութիւնը ու խաղքութիւնը, երբ դիմացը գտնուող անուղղան, ծանօթ է իր շահագործութիւններով, զեխութիւններով, թալանումներով եւ ոճրային աճպարարութիւններով:

Ո՛չ միայն հետաքրքրական, այլեւ հիմնովին անմիջական հարցադրում մըն է, որ ինքզինք կը պարտադրէ, թէ նման (ան)արժանիքներով, իրաւասութիւններով, (ան)պիտանիութիւններով եւ զսպելիութիւններով ՀՐԷՇ մը, ինչպէ՞ս կը պահուի Հայաստանի մէջ, որպէսզի շարունակե՞լ հայաթափել Հայաստանը, խոցոտել հայրենիքը, հարստահարել ժողովուրդը, տեղահանել հայաստանաբնակները, պատուազրկել հայութիւնը, յետոյ ալ հանդէս գալ անճոռնի եւ անպատկառ լոզունգներով ու հասցեագրումներով:

Այն տեսարանը, որ իր տգեղութեամբ, անհանդուրժողութեամբ, տխրահռչակութեամբ ու տխրեղծութեամբ, պարզուեցաւ «Կարէն Դեմիրճեան» համալիրին մէջ, միայն նոզկանք, զգուանք եւ անարգանք էր, այնքան ատեն, որ անոր կազմակերպիչները, երկրորդ նախագահ մը ընդունեցին, զանազան կեղծապարիթ ծափերով, բացականչութիւններով եւ յոտընկայս դերասանութիւններով, ի՞նչ ցուցադրելու եւ ի՞նչ ապացուցելու, թէ՛ անկախ Հայաստանի մը համար, նման թալանճի մը կը պատուէք եւ, դո՛ւք, հո՛ն հաւաքուածներդ, տակաւին երէկ, ի՛նչ անէծքներով կը յիշէիք նման մարդակուլի մը ու հայրենակուլի մը... ուրուականախառն կերպարը:

Ես անձնապէս, միշտ մօտէն հետեւած եմ այս Ռոբ կոչուած հերձուածի գործունէութեան, իր վարչական, պետական, քաղաքական ու հայրենական զանազան դրուածքներով ու դրուագներով, որոնք, միշտ ալ զիս չեն համոզած, վստահեցուցած ու հանգստացուցած, թէ ան, իրօք, մաքուր եւ անաղարտ, ուղղամիտ ու լրջամիտ անձ մըն է, ալ ո՛ր մնաց որ ան դառնար հայրենիքին, Հայաստանին նախագահը, ուր իրեն համար բացուեցան, թալանչիական, վրէժխնդրական, հալածական, անմարդկայնական, անհայրենական



մահացու դժոխքի մը լայնահունչ դռներ եւ դաշտեր, խրամատներ ու ճամբարներ, որոնք ո՛չ ստալինեան ո՛չ հիթլերեան շրջաններուն չէին արձանագրուած:

Սակայն, անմարդկային լղրճուկ-խամաճիկը, կրցաւ, ամենուրեք, թիավարել ու ճողոպրել, իր ամբողջական չարագործութեամբ, ստորութեամբ ու համարձակութեամբ, Հայաստանը ու հայ ժողովուրդը քամելով ու ճզմելով, որովհետեւ, իր մօտ չկար հայազգայութեան զգացում, հայրենասիրութեան խիղճ ու հայապատկանութեան վեհանձնութիւն:

Ուրկէ՞ այդ վսեմագոյն առաքինութիւնները, մարդկայնական արժանիքները, երբ անիկա, եթէ ունենար նուազագոյն գիտակցութիւն մը, ինք է իր միւս «հայրենակից»ը (Մերժ Սարգիսեան), ամէն մէկը, տասական տարիով իշխեցին, ծծեցին, լափեցին եւ յափշտակեցին Հայաստանը եւ տակաւին, առանց խպնելու (ասիկա տակաւին փո՛քր անձականութիւն մըն է), ո՛չ վերադարձան իրենց «հայրենիք» Արցախը, ոչ անոր զօրավիզ կանգնեցան, ոչ ալ ընդունեցին... որ անիկա իրենց ծննդավայրն է:

Ընդհակառակը, հայրենիքը՝ ուղղակիօրէն, իսկ Արցախը՝ հեռահասօրէն, թալանեցին ու պղծեցին, ստրկացուցին եւ արինաքամեցին, մերթ իրենց անմիջական գերակայութեամբ, մերթ՝ իրենց բռնապետութեամբ:

Անձս, որպէս լուստեղեակ ու հետեւողական այդ բոլոր զարտուղորդութիւններուն ու խարդախութիւններուն, միշտ ալ բարձրաձայնած եմ, թէ նման թափանցիկութեամբ ու հայելիութեամբ գործողութիւնները, երբ բեմերուն ու հարթակներուն վրայ են, իրենց տեսանելիութիւններով եւ աչքածակութիւններով, ինչո՞ւ ո՛չ ոք, պետութիւն, իշխանութիւն, հասարակութիւն ու ժողովուրդ, բոլորն ալ լուռ մնացին, չէ՞ որ թալանճիները ձեր աչքին առջեւն էին, ձեր իրաւունքները խլած, ձեր արժանապատուութիւնները ոտնակոխած:

Այս բոլորը տեսաք, ապրեցաք ու համտեսեցիք, ձեր ընտանիքներէն բաժնուեցաք, արտագաղթուեցան շատեր եւ հազար ու մէկ տեսակ աղէտներու ու հալածանքներու ենթարկուեցաք, իսկ այդ բոլորը բաւարար չէի՞ն, որ հաստատուն տեղ մը, ըսէիք ու բղաւէիք. «Ա՛լ կը բաւէ, հերիք ու պոլ եղաւ, թշուառականներ ու թուլամորթներ»:

Բայց, դուք այս սաստող քայլերուն չդիմեցիք, ընդհակառակը, ձեզմէ շատեր շարք կազմեցին, հերթագրուեցան, փոխան կաշառային գումարներու, որպէսզի արգահատելի մը դարձեալ փառաբանեն, մինչ անիկա, բեմին վրայ, վայրագային պոռթկումով, փորձեց ամեն ինչ մրտտել ու սեւացնել, իր թունաւոր լեզուով, ծուռ ծնօտով եւ անտաշ հայերէնով, ներկաներուն բուռն, բայց, անարժէք ծափողոյններուն տակ, իսկ խնդրայարոյց պատգամաւորուհին՝ Աննա Գրիգորեանը, ինքզինք նկատելով անփոխարինելի մը ու (միգրոցէ) վաղուան կառավարութեան մէջ նախարարուհի մը, գովքը հիւսեց իր շեֆին եւ Հայաստանը փրկելու անմիտ եւ անախորժ ձաբոտութիւններ դուրս տուաւ:

Այս գրաւումները, ոչ թէ ռեւէ մէկը վիրաւորելու համար է, այլ՝ բազմիցս կրկնելու, խլացնելու աստիճան, փորձուած աղուէսը, ոչ կը պաշտպանուի, ոչ ալ կը խնամուի, այլ՝ զայն կը վանեն, կը հեռացնեն, մինչեւ Յունաստանի իր կղզիին որջը, կղզի մը, որ ինչպէս իր միւս



գոյքերն ու կալուածները, այն ալ, ապօրինի ու խարդավարի միջոցներով սեփականացուած ըլլալով:

Մաղթելի է, որ այս եւ իր նմանները, հիմնապէս ու վերջնականապէս մեկուսացուին ու դատուին, արագօրէն եւ արդարօրէն, իրենց տեղ ընտրելով իսկական արժանատիներ, որոնց այնքան պէտք ունին հայրենիքը ու հայ ժողովուրդը:

Առ այդ, յիշել պէտք է Ռոբին մէկ գրնգուն զաւեշտախօսութիւնը. «Ապագան մենք ենք», մինչդէռ ինք եւ իր նմանները, վաղո՛ւց դատապարտուած են դառնալու ԱՆՑԵԱԼ:

(Պէլրուֆ)

ՄԻՏՆԻԷՆ ԳԱՀԻՐԷ՝ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ ՄԷՋԷՆ

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Հայկական սփիւռքը (ներ) գունաւոր եւ գեղեցիկ է: Բայց ան/անոնք նոյնքան նաեւ բարդ են եւ երեւի աւելիով պիտի բարդանան: Իսկ սփիւռքներու բարդանալը կը յատկանշուի քանի ան/անոնք ժամանակի եւ սերունդներու հետ կը փոխուին, կը կերպարանափոխուին ու կը ստանան նոր պիտակ եւ տարբեր լիցքաւորում: Եթէ պիտի մնան հայ-հայկական սփիւռքը, բայց պիտի ստանան տարբեր երանգներ: Եւ մենք բոլորս պատրաստ պէտք է ըլլանք տեսնելու եւ ընդունելու այս տարբեր երանգները:

Այս տարբեր իրավիճակներուն մէջ կայ պատմութեան յիշողութեան եւ անոր կեանքի շարունակականութեան գործընթացը: Պէտք է տեսնել, թէ ինչպե՛ս այս հայուն յիշողութիւնը եւ անոր շարունակականութիւնը պէտք է պահել սփիւռք-սփիւռքներու նոր տարագումներուն մէջ: Պէտք է ընդունիլ իրականութիւնը, թէ այս սփիւռք-սփիւռքները պիտի դառնան մնայուն կարգավիճակ ունեցող իրականութիւններ: Այս երեւի անխուսափելի իրականութիւն է:

Այս նոր երանգներուն մէջ կայ նաեւ ներսփիւռքեան գաղութներու տեղաշարժերը: Յստակ է, որ սփիւռքները իրենց տեղական ու ներքին պայմաններուն մէջ նաեւ մնայուն չեն: Մնայունը պիտի մնայ հայուն սփիւռքը՝ իր ընդհանրական առումով եւ հասկացողութեամբ:

Միտնի, 14-22 փետրուար 2026:



Գաղութը յստակ կերպով աճ կ'արձանագրէ՝ նկատի ունենալով, որ Մուրիոյ պատերազմի պատճառով շատ է թիւը հայերու, որոնք Աւստրալիա հաստատուած են, եւ տակաւին կը շարունակուի ընթացքը: Աւստրալիոյ գաղութին համար այս աճը եղած է օգտակար, որովհետեւ սուրիահայերը բերած են նոր ուժ եւ

եռանդ՝ գաղութի կեանքին մէջ:

Աւստրալիոյ գաղութին կազմաւորումը ունի իր պատմութիւնը: Այս պատմութեան մէջ կայ տեղափոխութիւնը մեծ թիւով հայորդիներու, յատկապէս՝ Եգիպտոսէն ու միջինարեւելեան այլ երկիրներէ, որոնք կայք հաստատուած են այս «նոր երկիրը»՝ 1950-ական տարիներէն սկսեալ: Այս իմաստով, տեղափոխուող այս հայերը իրենց հետ բերած են Միջին Արեւելքի ջերմութիւնը եւ կապը, որուն հետ կ'ապրին մինչեւ այսօր: Բայց կայ այս սերունդին շարունակականութիւնը. Աւստրալիա ծնած անոնց զաւակները ու անոնց զաւակները: Հոսկէ պիտի սկսի փոխուելու եւ նոր պիտակ ստանալու գործընթացը, որ պէտք է կամրջուի հայուն պատմութեան յիշողութեան եւ կեանքի շարունակականութեան խաչմերուկին միջեւ:



Վարդան եպս. Նաւասարդեանը հոգեւոր առաջնորդն է Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայոց թեմին: Ան կու գայ Հայաստանէն: Եղած է նաեւ առաջնորդ Պաթեան երկիրներու եւ, այս իմաստով, քաջատեղեակ է սփիւռքեան

իրականութիւններուն եւ անոնց մարտահրաւերներուն: «Սփիւռքի մէջ շատ մեծ մարդուժ եւ կարողականութիւններ կան,



գորս պէտք է ներմուծել հայաստանեան եւ համասփիւռքեան իրականութիւններու մէջ-, ըսաւ սրբազան հայրը: – Ես այս իրականութիւնը յաճախ կը ներկայացնեմ Հայաստանի մեր իշխանութիւններուն՝ իբրեւ կարելոր համահայկական ներդրումային գործօն»:

Մփիւռքը իր տարբեր կարգավիճակներու մէջէն չի դադրիր ուժ եւ կարողականութիւններ պարփակելէ: Այս իրականութիւնը դարձեալ մէջտեղ կու գայ եւ այս անգամ՝ հեռաւոր Աւստրալիոյ հայկական իրականութեան մէջէն:

Վահէ Արթինեանը պատանի տարիքին եկած է Եգիպտոսէն: Ան յաճախած է Գահիրէի Գալուստեան վարժարանը եւ Աւստրալիա հասնելով՝ դարձած է մասնագէտ դեղագործ: Վահէն նոյնքան նաեւ մասնակից է ազգային-գաղութային կեանքին, ստանձնած է կուսակցական եւ միութենական պատասխանատու պաշտօններ: Ան այն հայն է, որ գիտէ ազգային արժէքներու գիտակցութիւնը եւ կարելորութիւնը:

Վահէն կը սիրէ եւ կը պահէ Եգիպտոսի ջերմութիւնը: «Կը սիրեմ յաճախ խօսիլ եգիպտերէն (տեղական արաբերէն) եւ ինձի համար տակաւին անուշ լեզու եւ յիշողութիւն է», ըսաւ Վահէն: Եւ այս սփիւռքահայերու տարբերակներն են, եւ հայեր նոյնքան նաեւ կ'ապրին իրենց ծննդավայրի իրականութիւնը՝ իրենց նոր միջավայրին մէջ:

Վիք Գորթեանը մանուկ տարիքին Լիբանանէն եկած է Աւստրալիա: Ան այսօր դասախօս եւ ամպլոնի վարիչ է Սիտնիի Մեկուերի նշանաւոր համալսարանի մէջ: Անկախ այն երեւոյթէն, որ շատ փոքր տարիքէն եկած է Սիտնի, ան տիրապետած է հայոց լեզուին եւ նոյնքան նաեւ՝ ազգային ինքնութեան: Վիքը գործօն մասնակցութիւն կը բերէ ազգային-կուսակցական եւ միութենական կեանքին՝ վարելով պատասխանատու պաշտօններ:

Վիքին համար հայ ըլլալը ու հայութիւնը մէկ հասարակ յայտարար ունին, ինչ որ սփիւռքեան տարբեր գաղութներու պարագային: «Բոլորս ալ հայապահպանումի նոյն մտահոգութիւնը ունինք, երբ կ'ապրինք ամբողջ աշխարհի մէջ», ըսաւ ան: «Այս իմաստով, Աւստրալիոյ մէջ ապրող հայերը՝ մենք, պէտք է գերազանց կերպով ընենք ամէն ինչ, որպէսզի ցոյց տանք նոր սերունդին, որ կայ մեծ արժէք մը՝ պահել մեր ազգային մշակոյթը եւ ինքնութիւնը», եզրափակեց Վիքը:

Վիքին որակած այս «արժէք»-ն է, որ հայը պիտի դնէ եւ կերտէ իր հաւաքական յիշողութեան եւ շարունակականութեան պատմութեանը խաչմերուկին մէջ:

Յարութիւն Ճեպէճեանը ծնած է Մանսուրա, Եգիպտոս: Մանսուրայի մէջ հայկական դպրոցի բացակայութեան՝ Յարութիւն կրցած է սակայն կերտել հայկական կեանք եւ նկարագիր: Ան այսօր ծանօթ եւ համբաւ վաստակած հոգեբուժ է եւ կը գործէ Միտնիի ծանօթ հիւանդանոցներուն մէջ:

Յարութիւնին համար հայութիւնը կարելի չէ բաժնել իր քրիստոնէական-հոգեւոր արմատներէն: Այս իմաստով, ան ամուր կառչած է գաղութին եւ Հայ եկեղեցոյ ինքնութեան եւ հաւատամքին եւ կը սատարէ անոնց յառաջխաղացքին՝ բարոյապէս եւ նիւթապէս: Ան իր մասնագիտութիւնը դրած է ժողովուրդին սպասարկելու առաքելութեան մէջ եւ ոչ մէկ ճիգ կը խնայէ՝ հասնելու կարիքաւորին եւ հիւանդին:

Կարելի չէ հայր բաժնել իր ազգային ու քրիստոնէական ինքնութիւններէն:



Միտնիի հայ գաղութը օժտուած է երկու երկրորդական հայկական վարժարաններով: Առաջինը կը հովանաւորէ Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը, իսկ երկրորդը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը: Երկու գեղեցիկ վարժարաններ, որոնք օժտուած են նոյնքան գեղեցիկ դպրոցաշէնքերով՝ կահաւորուած եւ սարքուած արդիական միջոցներով եւ շրջապատուած՝ բնութամբ ու անտառներով: Երբ այս երկու դպրոցները այցելեցի, այնքան փափաքեցայ դարձեալ աշակերտ ըլլալ եւ այս վարժարաններու գեղեցիկ միջավայրը վայելել: Այս վարժարաններու ուսումնական բարձր մակարդակին հետ՝ անոնք նոյնքան հետամուտ են ջամբելու հայեցի դաստիարակութիւն:

Կրցայ շրջագայիլ երկու դպրոցներու մէջ եւ հանդիպիլ աշակերտներուն, ուսուցչական կազմի եւ տնօրէնութեան հետ: Տեսայ հայ դպրոցին արժէքը եւ կարեւորութիւնը՝ սփիւռքեան մեր իրականութիւններու համար: Տեսայ, թէ ինչպէ՛ս մեր հայ վարժարանները



ջատագով են հայակերտումի եւ մարդակերտումի վեհ առաքելութեան, եւ թէ որքան պէտք է հոգ տանիլ մեր կրթական համալիրները կանգուն պահելու:

Այս իմաստով, կայ մեծ պատասխանատուութիւն մը մեր հայ ընտանիքներուն եւ ծնողներուն համար:

Այն գաղութները, որոնք ունին հայկական միօրեայ կամ գէթ շաբաթօրեայ վարժարաններ, ծնողք պարտին իրենց զաւակները ուղղել հոն: Սփիւռքեան պայմաններու մէջ հասակ առնող հայ նոր սերունդը կը կոփուի հայկական վարժարաններու միջոցով:

Գահիրէ, 7-12 մարտ 2026:

Փարաւոններու մշակոյթով եւ Նեղոսի ջերմութեամբ՝ Գահիրէն կը բաշխէ իր չորս դին հմայք եւ պատմութիւն: Այս պատմութեան մէջ է նաեւ հայկական իրականութիւնը: Եթէ քաղաքը խճողուած է 24 ժամերու վրայ, բայց նոյնքան նաեւ՝ հայկական կեանքը:

Եգիպտոսի հայկական իրականութիւնը ունի իր պատմութիւնը, որ սկսած է Ցեղասպանութենէն առաջ: Այս պատմութեան մէջ կան մեծ նուաճումներ: Գահիրէն դէպի Ադեքսանդրիա տանող մայրուղիին վրայ կանգ կ'առնենք մէկ արուարձանի մը առջեւ, որ կը կոչուի «Նուպարի քաղաք»: Նուպար փաշան, որ Եգիպտոսի առաջին վարչապետն էր, եւ որ՝ մինչեւ այսօր տիրական դէմք մնացած է Եգիպտոսի համար:

Աշոտ եպս.Մնացականեանը հոգեւոր առաջնորդն է Եգիպտոսի հայոց թեմին: Ան կու գայ Հայաստանէն եւ ամուր կառչած է ջամբելու հոգեւոր եւ ազգային դաստիարակութիւն Եգիպտոսի հայ գաղութին: «Գաղութին թիւը նուազած է, բայց մենք կ'ուզենք մեր առաքելութիւնը ամուր պահել այս երկրին մէջ», կ'ըսէ սրբազան հայրը:

Եգիպտոսի գաղութի թիւը նօսրացած է: 1950-1960 տարիներէն սկսեալ՝ մեծ թիւով հայեր գաղթած են Քանաւտա, Աւստրալիա եւ այլ երկիրներ: Միտնի այցելութեանս ընթացքին ականերէւ էր եգիպտահայերու ներկայութիւնը: Այս փոքր թիւը յուսահատութեան չէ մատնած հայկական իրականութիւնը: «Ներկայ օրերուն ունինք Սուրիայէն եւ Լիբանանէն հայեր, որոնք հաստատուած են Եգիպտոս, եւ զիրենք ներառած ենք մեր գաղութէն ներս», ըսաւ սրբազանը:

Արմէն Մազլումեանը մասնագիտութեամբ բժիշկ է: Ան շատ աւելիով ներգրաւուած է ազգային կեանքի մէջ եւ մեծ աշխատանք կը տանի հայկական մշակութային արժէքները եւ Հայոց ցեղասպանութիւնը ներկայացնելու տեղական համայնքին: Ան ստանձնած է Եգիպտոսի Հայ դատի յանձնախումբի ատենապետութիւնը, հսկայական աշխատանք կը տանի, որ Եգիպտոսի մտաւորականներ խօսին եւ գրեն Հայոց ցեղասպանութեան վերաբերող վկայութիւններու մասին արաբերէն լեզուով եւ նոյնքան նաեւ՝ հրատարակելու անոնց աշխատանքները: Եւ չուշացաւ իմ դիպուկ ակնարկս Արմէնին. «Ե՞րբ բժշկութիւն կ'ընես»: «Երբ որ ազատ ժամեր ունենամ», նոյնքան ժպիտով եւ կատակով պատասխանեց Արմէն:

Արմէն Մազլումեանին համար «ժամեր»-ը՝ ազատ թէ այլ, հայուն համար է: Հայուն պատմութեան եւ անոր վկայութեան համար:



Եգիպտոսի գաղութը ունի մշակութային, մարզական կառոյցներ, որոնք կը համախմբեն գաղութին գործունէութիւնները: Նուպարեան վարժարան կը յաճախեն աւելի քան 140 հայ աշակերտներ եւ կը ստանան հայեցի դաստիարակութիւն: Դպրոցը ունի մինչեւ երկրորդական բաժին եւ ամէն յարմարութիւն՝ կրթական լաւ դաստիարակութիւն տալու հայ նոր սերունդին:

Հայ համայնքի համար մասնաւորապէս եւ Եգիպտոսի համար ընդհանրապէս հպարտութիւն է Միքայէլեան ընտանիքի նախաձեռնած «Ռիտըրզ քոռնըր» գրախանութ-ցուցասրահը՝ Գահիրէի կեդրոնական

քաղաքի մէկ շատ բանուկ մասին մէջ: Միքայէլեան չորս եղբայրներ՝ ժառանգելով իրենց հօր նախաձեռնած աշխատանքը, զոր սկսած է 1945-ին, այսօր հնչեղ անուն են Եգիպտոսի մէջ որպէս գիրքի՝ բայց շատ աւելիով արուեստի եւ նկարչական գործերու տեղադրումով ամբողջ երկրին մէջ: Անոնք մշակոյթի ջատագովներէն են, որոնք ոչ մէկ ճիգ կը ինսայեն



արուեստը գնահատելու եւ տարածելու աշխատանքին մէջ: Քրիստափոր՝ ճանչցուած որպէս Քրիս, եւ Գրիգոր երկու եղբայրներ են, որոնք նոյնքան աշխուժ մասնակցութիւն կը բերեն գաղութի կեանքի մէջ՝ ի մասնաւորի Հայ կաթողիկէ եկեղեցիի միջոցով:

Հայը յոգնիլ չի գիտեր: Հայը կը սիրէ արժէքը եւ կը սատարէ անոր համար:

Մարտահրաւերներէ եւ մտահոգութիւններէ զերծ չէ եգիպտահայ գաղութը, ինչպէս՝ բոլոր հայկական ներկայութիւնները սփիւռքի տարածքին: Այս մարտահրաւերները մեր «քաղցր լուծն» են, զորս իւրաքանչիւր հայ պիտի կրէ իր ուսերուն՝ ի խնդիր հայապահպանումի, ազգակերտումի եւ մարդակերտումի մեծ առաքելութեան:

Եւ հոս պէտք է ընդգծել մէկ կարեւոր իրականութիւն:

Եթէ սփիւռք(ներ)ը մնայուն ներկայութիւն է՝ անկախ իւրաքանչիւրի թիւէն ու քանակէն, այս պիտի նշանակէ, թէ պիտի յենինք մեր ազգային կառոյցներուն՝ իբրեւ ամուր յենարաններ մեր ինքնութեան եւ հաւատքի պահպանման: Նոյնիսկ եթէ մեր կառոյցները հինցած, մաշած եւ ժամանակավրէպ են, բայց կը մնան անոնք մեր ինքնութիւնը պահող իրականութիւններ: Մեր կառոյցներն են, որ մեր պատմութեան յիշողութիւնը եւ անոր կեանքի շարունակականութիւնը պիտի ապահովեն: Պիտի կառչինք մեր ազգային կառոյցներուն, զետեղենք զանոնք ներկայ օրերու եւ ժամանակներու մէջ եւ արդիակացնենք՝ յարմարեցնելով ներկայ օրերու պայմաններուն եւ պահանջներուն:

Միտնիէն Գահիրէ ու, տակաւին, իւրաքանչիւր հայաշատ գաղութներու մէջ կան յիշողութեան եւ շարունակականութեան խաչմերուկներ: Այս բոլոր խաչմերուկները պիտի պահենք եւ տանինք յառաջ:

Հայուն ապրելու հրամայականը հայուն պատմութեան յիշողութեան եւ կեանքի շարունակականութեան խաչմերուկներու մէջէն ապրեցնել է հայը:

Այսօր, վաղը ու տակաւին ...

Նիկոսիա, մարտ 26

ՓՈՒԹԻՆԻ ՆԵՏ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՉԱՓԱԶԱՄՑ ՇԱՏ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ»

Յարութ Սասունեան



Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի միջեւ Մոսկուայի՝ Քրեմլինի մէջ, 1 ապրիլին տեղի ունեցաւ անսովոր զրոյց մը:

23 վայրկեան տեւած հանդիպումը տեսագրուեցաւ եւ հրապարակուեցաւ, ներառեալ՝ երկու կողմերուն յայտարարութիւնները: Տարօրինակ է, որ հանդիպման ընթացքին

Փաշինեան կտրօքին կը կրէր իր կողմէ այսպէս կոչուած «Իրական Հայաստան»-ի քարտէսը: Ռեւէ խելամիտ ղեկավար նման հանդիպման ընթացքին իր երկրին քարտէսը չէր կրէր:

Ամենէն ցնցող բանը, զոր Փաշինեան ըսաւ Փութինին, հետեւեալն էր. «Հայաստանը ժողովրդավարական երկիր է... Ունինք քաղաքացիներ, որոնք կը կարծեն, թէ Հայաստանի մէջ չափազանց շատ է ժողովրդավարութիւնը... Օրինակ, մեր ընկերային ցանցերը 100 տոկոսով ազատ են, ընդհանրապէս որեւէ սահմանափակում չկայ, եւ շատ քաղաքացիներ կը կարծեն, թէ ատիկա չափէն աւելի է...»: Փաշինեան յանդգնեցաւ Հայաստանի մէջ իր բռնատիրական իշխանութիւնը ներկայացնել իբրեւ չափազանց ժողովրդավարական:

Ուրախ եմ, որ այս հանդիպման տեսագրութիւնը հրապարակուեցաւ, որպէսզի հանրութիւնը կարելիութիւն ունենայ տեղեկանալու, թէ ի՞նչ քննարկուած է: Պաշտօնական բանակցութիւններէն ետք երկու ղեկավարները շարունակեցին քննարկումները փակ ձեւաչափով՝ աշխատանքային նախաճաշի ընթացքին:

Նախագահ Փութին հանրային հանդիպումը սկսաւ Հայաստանի մէջ կայանալիք խորհրդարանական ընտրութիւններու վերաբերեալ մեկնաբանութեամբ՝ զգուշացնելով, որ «Հայաստանի ներքաղաքական գործընթացները թափ կը ստանան»: Մակայն, ըստ անոր, այս «սրացումը... որեւէ կերպով պէտք չէ վնասէ Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ մեր յարաբերութիւններուն»:

Փութինը զգուշացուց, որ՝ «Կարելի չէ միեւնոյն ատեն անդամակցիլ Եւրոպական Միութեան եւ Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ): Ատիկա պարզապէս անկարելի է»: Ան ակնարկեց, որ եթէ Հայաստանը շարունակէ խորացնել տնտեսական յարաբերութիւնները Եւրոպական Միութեան հետ, այլեւս չի կրնար ԵԱՏՄ երկիրներ, որոնց կարգին Ռուսիա, արտաձեւ միլիտար տոլարներ արժողութեամբ ապրանքներ, ինչ որ պատճառ պիտի դառնայ Հայաստանի տնտեսութեան փլուզման: Փութին ընդգծեց, որ «Վերջին տարիներուն ԵԱՏՄ երկիրներ Հայաստանի արտաձումը աճած է 10 անգամով»:



Ի պատասխան՝ Փաշինեան նշեց, որ Հայաստանը առայժմ պիտի շարունակէ օգտուիլ երկու առևտրական ուղղութիւններէն, մինչեւ հարկադրուած ըլլայ վերջնական ընտրութիւն կատարել: Սակայն ո՛չ Փութինը, ո՛չ ալ Փաշինեանը բաւարար պատճառ ունէին այս հարցը հիմա քննարկելու, քանի որ Հայաստան տակաւին տասնամեակներով հեռու է Եւրոպական Միութեան անդամակցութեան անհրաժեշտ չափանիշներուն համապատասխանելէն:

Փաշինեանին ուղղուած այլ խիստ մատնանշում մը կատարելով՝ Փութին յիշեցուց, թէ, հակառակ անոր որ՝ «Կազին գինը Եւրոպայի մէջ կը գերազանցէ 600 տոլարը՝ 1000 խորանարդ մեթրի դիմաց, Ռուսիան Հայաստանին կազ կը վաճառէ 177,5 տոլարով՝ 1000 խորանարդ մեթրի դիմաց: Տարբերութիւնը մեծ է: Տարբերութիւնը հսկայական է»: Եթէ Ռուսիա բարձրացնէ կազին գինը Հայաստանի համար, ապա Հայաստանի մէջ արտադրութիւնը կրնայ կանգ առնել, իսկ բնակչութիւնը ձմրան պիտի յայտնուի լուրջ դժուարութիւններու առջեւ:

Անսպասելիօրէն, Փութինը բարձրացուց, իր բնորոշումով՝ «Ամենէն զգայուն հարցը»՝ Ղարաբաղը: Վստահ եմ, որ նախագահ Ալիեւ դժգոհ էր, որ Ղարաբաղը ներկայացուեցաւ իբրեւ «ամենէն զգայուն հարց», քանի որ թէ՛ ան, թէ՛ Փաշինեանը Ղարաբաղի հարցը փակուած կը համարէն: Այնուհետեւ Փութինը անտեղի անդրադարձաւ Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) Հայաստանի ստեղծուած անդամակցութեան՝ նշելով, որ ՀԱՊԿ-ն չէր կրնար միջամտել Ղարաբաղեան հակամարտութեան Փաշինեանի կողմէ 2022 թուականին Ղարաբաղը իբրեւ Ազրայէճան մաս ճանչնալէ ետք: Այստեղ երկու կողմերն ալ կատարեցին շարք մը սխալ պնդումներ: Փութինը սխալեցաւ եւ Ղարաբաղի պաշտպանութեան ՀԱՊԿ-ի չմիջամտելը կապեց Փաշինեանի 2022 թուականի զիջման հետ: Նախապէս, երբ խօսք եղած էր ՀԱՊԿ-ի՝ Ղարաբաղեան պատերազմին չմիջամտելու մասին, Փութին ճիշդ բացատրած էր, որ ՀԱՊԿ-ն չէր կրնար պաշտպանել Ղարաբաղը, քանի որ անիկա Հայաստանի Հանրապետութեան մաս չէր կազմեր: Այն հարցը, որ Փաշինեանը պէտք է բարձրացնէր, հետեւեալն էր. ինչո՞ւ ՀԱՊԿ-ն չմիջամտեց, երբ ազրայէճանական զօրքերը 2021 եւ 2022 թուականներուն ներխուժեցին Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածք, այն պարագային, երբ ՀԱՊԿ-ն իր անդամ պետութիւնը՝ Հայաստանը պաշտպանելու լիազօրութիւն ունէր:

Փաշինեան իր կարգին սխալեցաւ եւ մեղադրեց Ռուսիան՝ Ղարաբաղը իրմէ առաջ Ազրայէճանի մաս ճանչնալուն համար: Սակայն ասիկա չի կրնար արդարացնել Փաշինեանի կողմէ Ղարաբաղը իբրեւ Ազրայէճանի մաս ճանչնալը, քանի որ աշխարհի ոչ մէկ երկիր, նաեւ՝ Ռուսիան, չէ ճանչցած Ղարաբաղը իբրեւ Հայաստանի մաս: Հայաստանը նոյնպէս չէ ճանչցած Ղարաբաղը իբրեւ Հայաստանի մաս: Աւելի՛ն. ինչո՞ւ Փաշինեանը իր որոշումը կը հիմնաւորէ Ռուսիոյ դիրքորոշումով:

Այնուհետեւ Փութին վերադարձաւ Հայաստանի յառաջիկայ ընտրութիւններու թեմային՝ նախագոյնացնելով՝ արեւի լաւ կ'ըլլար, որ Ղարաբաղի եւ ՀԱՊԿ-ի հարցերը՝ «չդառնան ներքաղաքական գործընթացի մաս, յատկապէս նախընտրական արշաւի ընթացքին»: Փութինը նաեւ յիշեցուց, որ Ռուսիոյ մէջ կ'ապրի արեւի քան երկու միլիոն հայ՝ թերեւս ակնարկելով, որ երկկողմանի յարաբերութիւններու վատթարացման պարագային, վերջին տարիներուն Ռուսիա տեղափոխուած հայերու զգալի մասը կրնայ հարկադրուած ըլլալ վերադառնալ Հայաստան:

Այնուհետեւ Փութին դիմեց Փաշինեանին խնդրանքով մը, որ կարելի է մեկնաբանել իբրեւ Ռուսիոյ կողմէ Հայաստանի ներքին քաղաքականութեան միջամտելու փորձ: Ահա թէ ի՛նչ



ըսաւ Փութին. «Կան բազմաթիւ քաղաքական ուժեր, որոնք ռուսամետ դիրքորոշում ունին... Մենք շատ կը փափաքէինք, որ այս բոլոր քաղաքական կուսակցութիւնները, քաղաքական գործիչները կարենային մասնակցիլ այս ներքաղաքական աշխատանքին (Հայաստանի մէջ)՝ ընտրութիւններու ընթացքին: Ոմանք, գիտեմ, կը գտնուին բանտերու մէջ, հակառակ այն հանգամանքին, որ ունին Ռուսիոյ անձնագիր: Ատիկա ձեր որոշումն է, մենք չենք միջամտեր, բայց կը փափաքէինք, որ անոնք, առնուազն, կարենային մասնակցիլ այս ներքաղաքական գործընթացին»:

Ասիկա Փաշինեանին առիթով տուաւ ըսելու Փութինին, որ Հայաստանի Սահմանադրութիւնը կ'արգիլէ այն թեկնածուներուն, որոնք չունին բացառապէս Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, Հայաստանի մէջ առաջադրուիլ բարձր պաշտօններու համար:


Շոայլօրէն գովաբանելով Փութինը՝ Փաշինեանը, հաւանաբար, կը փորձէր համոզել զայն, որ ինք բացառապէս Արեւմուտքի ճամբարին մէջ չէ, այդպիսով փորձելով նուազեցնել Ռուսիոյ զայրոյթը իրեն նկատմամբ՝ յառաջիկայ ընտրութիւններուն, եւ նուազագոյնի հասցնել անոր աջակցութիւնը ընդդիմութեան:

Չեմ գիտեր՝ Փաշինեան յաջողեցա՞ւ հասնիլ այդ նպատակին, թե՞ ոչ, սակայն Հայաստան վերադառնալէ ետք ան յայտարարեց լրատուամիջոցներուն, որ Փութինի հետ հանդիպումը «շատ յաջող» էր: Այնուամենայնիւ, չենք գիտեր, թէ ան եւ Փութինը ի՞նչ քննարկած են փակ դռներու ետին՝ աշխատանքային նախաճաշի ընթացքին: Յամենայնդէպս, խորամանկութիւնը միայն որոշ չափով կրնայ քաղաքական գործիչը յառաջ տանիլ, սակայն անիկա երբեք չի կրնար լրացնել անկարողութիւնը...

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԴԻԻԱՆԱԳԷՏՆԵՐՈՒ ԴՐԱԿԱՆ ԿԱՍ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԷՋ

Յարութիւն Իսկահատեան

2/3/2026



Վոլֆկանկ Կուսթ՝ գերմանացի լրագրող եւ պատմաբան պատահականօրէն կը ծանօթանայ Հայոց Ցեղասպանութեան. 1992-ին ան կը կարդայ Ժազ Տէր Ալեքսանեանի «Le ciel était noir sur l’Euphrate» («Եփրատի Վրայ Երկինքը Մեւ Էր») ֆրանսերէն գիրքը (*սոյն յուշագրութեան հայերէն ամփոփումը տե՛ս հատորաշարքիս Բ. գիրքը, էջ 15 – Յ. Ի.*): Կուսթ շատ կը զարմանայ առաջին անգամ կարդալով հայու մը տառապանքին մասին. մինչեւ այն ատեն իմացած էր միայն հրեաներու ողջակիզման մասին:

Հայոց Ցեղասպանութեան հարցը ան սկիզբը մամուլով կ’արծարծէ, ապա իբրեւ ուսումնասիրութիւն լոյս կ’ընծայէ «Հայերի Ցեղասպանութիւնը 1915-1916 – Գերմանիոյ Արտաքին Գործերի Նախարարութեան

Քաղաքական Արխիւի Փաստաթղթերից» (The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives 1915-1916) հատորը: Գիրքին հայերէնի թարգմանիչը՝ Ռուզան Պորիսի Եորտանեան կ’ըսէ, թէ մինչեւ գիրքի հրատարակութեան տարին՝ 2005 թուականը, Հայկական Հարցը Գերմանիոյ հասարակութեան յայտնի չէր պէտք եղած չափով: Այս պատճառաւ Վոլֆկանկ Կուսթ հարկադրուած է նկարագրելու պատմական փաստերը եւ միայն անկէ ետք ընելու իր ընդհանրացումները:

Էռնսթ Զոմմեր՝ գերմանացի պատմաբանը կը նշէ, թէ Հայոց Ցեղասպանութիւնը ամօթանքն է նաեւ ողջ Եւրոպայի, որ իր անտարբերութեամբ քաջալերեց ցեղասպանը:

Պատասխանատուութիւնը մեծ է մանաւանդ քայգերական Գերմանիոյ, որ մեղքի մեծ բաժին ունի մարդկութեան դէմ այս մեծագոյն ոճիրին իրականացումը թոյլ տալու համար: Աւելին՝ գերմանացի սպաներ մասնակցած են թուրքերու գործած ոճիրներուն: 1914-1923-ին եւ նոյնիսկ աւելի ետք, Գերմանիոյ իշխանութիւնները ուշի ուշով կը հետեւէին մամուլին, որպէսզի գերմանացի ժողովուրդը անտեղեակ մնար հայ ժողովուրդին դէմ գործուած եւ գործուող ոճիրներէն ու անմարդկային բռնութիւններէն: 1917-ին Գերմանիոյ գրաքննիչ



ատեանը լրատուական բոլոր միջոցներուն կը հրահանգէ. «Լաւագոյնը կը լինի հայերի մասին լռել»:

Վերոյիշեալ երկու փաստագրութիւնները, միացած ցարդ յայտնաբերուած բազմահազար վաւերաթուղթերուն, յստակօրէն կը հաստատեն, որ Գերմանիա ոչ միայն մեղսակից է Օսմանեան Պետութեան գործած Հայոց Ցեղասպանութեան, այլ նաեւ անոր կանխամտածման ահաւոր ոճիրին:

Անկարելի է քաղաքականութեան մէջ պատահականութիւն տեսնել: Ամէն բան նախապէս ձեւուած չափուած եւ ծրագրուած էր թուրքերու եւ գերմանացիներու կողմէ: Իսկ գերմանացի դիւանագէտներու արարքներն ալ բոլորովին տարբեր են գերմանացի մտաւորականներու կեցուածքներէն:

Հայոց Ցեղասպանութեան դժնդակ օրերուն Գերմանիոյ մէջ իշխանութիւնը մամուլը անտեղեակ կը պահէր Հայաստանի եւ Կիլիկիոյ իրադարձութիւններէն, սուտ ու երեւակայածին լուրերով կը սնուցէր զայն, թուրքերու գործած բարբարոսութիւններուն պաշտպան կանգնելով: Գերմանացիներէն միայն շատ քիչեր իրագեկ դարձած էին իրականութեան: Անոնցմէ են Եռհաննէս Լեփսիուս եւ Էռնսթ Չոմմեր, որոնք իրենց ականատեսի վկայութիւնները գրի առած ու հրատարակած են: Երբ թուրքերը հայեր կը կոտորէին վայրագօրէն, նոյն պահուն գերմանական մամուլը լայն տեղ կու տար թրքական կառավարութեան մասին ապակողմնորոշող տեղեկութիւններու, որոնք սահմանը անցնելով, շատ անգամ թրքասիրութիւն կը սերմանէին գերմանացիներու միտքերուն եւ սիրտերուն մէջ: Այս պատճառաւ Գերմանիոյ մէջ հասարակական սխալ կարծիք կը ստեղծուէր:

Թէեւ գերմանացի պատասխանատուները թուրքերու կողքին հայոց դէմ կը գործէին ոյժի տրամաբանութեամբ եւ հզօրի հոգեբանութեամբ, այդուհանդերձ անոնք լքօրէն մտահոգ էին իրենց նկատմամբ հայոց անվստահութեան փաստով եւ կը փորձէին սուտերով ու կեղծիքներով շպարել իրենց թրքասիրական վարուելակերպը: Գերմանիոյ առաջնորդներուն հակահայ կեցուածքները չէին բխեր միայն իրենց երկրի գերագոյն շահերէն, այլէ քրիստոնէայ աղանդաւորական ծայրայեղական որոշ խումբերու համոզումէ մը. այս շեղանքները հաճոյք կը զգան տկարն ու իրաւագրկուածը աւելի վատ վիճակի մատնելէ կամ զանոնք այդպիսի վիճակներու մէջ տեսնելէ ու իրենք զիրենք «կ'արդարացնեն», թէ Աստուած զանոնք այդ վիճակին մատնուելու համար ստեղծած է: Ի դէպ, Արեւմուտքի մէջ եղած են ու այսօր ալ կան աղանդաւորներ, որոնք աղքատներուն եւ



տկարներուն օգնութեան ձեռք բնաւ չեն երկարեր, պատճառաբանելով, թէ Աստուած այդպէս կ'ուզէ: Անոնք նոյնիսկ հարուած մըն ալ իրենք կու տան տկարին՝ եթէ կարենան:

Դժբախտաբար, հիւանդագին մարդոց հոգեբանական բարդոյթները տեղ կը գրաւեն անոնց սեփական կամ խմբակային գերագոյն շահերու հետապնդման կողքին ու մեծ դեր կը խաղան անոր մէջ:

Կ. Պոլսոյ մէջ Գերմանիոյ դեսպան Հանս ֆոն Վանկենհայմ իր 1915-04-15-DE-002 (տպագրուած՝ Գ. Եւ Ն. փաստ. 026/խմբ. Եւ կրճ./- սկզբնաղբիւրը՝ PA-AA/R14085) նամակով իր երկրի ռայխսքանցներ (վարչապետ) Թեոպալտ ֆոն Պեթման-Հոլվեկին կը տեղեկագրէ՝ առաջին համաշխարհային պատերազմի առաջին ամիսներուն Փոքր Ասիոյ ներքին գաւառներուն մէջ մէկ կողմէ հայոց, միւս կողմէ թուրքերու եւ քիւրտերու յարաբերութեանց մասին: Ան նկատել կու տայ, թէ երկու կողմերուն միջեւ արդէն իսկ լարուած յարաբերութիւնները աւելի եւս կը սրին ու կացութիւնը հետզհետէ կը վատթարանայ: Իր տեղեկութիւնները գետնին վրայ կատարուող իրադարձութիւններէն քաղելով՝ ֆոն Վանկենհայմ կը խոստովանի, թէ հայոց հետապնդումներ եւ հալածանքներ տեղի կ'ունենան, աւելցնելով, որ բռնութիւնները հետզհետէ աւելի աղմկայարոյց կը դառնան:

Աւելի յառաջ երթալով, ֆոն Վանկենհայմ ուրիշ անհիմն մեղադրանքով մը կ'ամբաստանէ հայերը. ռազմական գործողութիւններու ատեն, հայ զինուորներ իրենց զէնքերը իբր թէ ուղղած են թուրքերու դէմ: Հոս կ'արժէ յիշել Եոհաննէս Լեփսիուսի տեղեկագրին մէջ հայոց հաւատարմութեան մասին վկայութիւնը՝ օսմանեան բանակին մէջ կռուող հայ քաղաքացիները լաւ պահուածք ցուցաբերած են, օսմանեան ռազմական վարժարանին մէջ թուրքերէ աւելի հայեր պահեստի սպայ արձանագրուած են: Անոնք կը փափաքէին գործող բանակին միանալ, քան թղթատարութեամբ զբաղող գրասենեակներու պաշտօնեայ դառնալ: Լեփսիուս կը գրէ. «Երբ պատերազմական նախարար Էնվեր *իշաշա* Կովկասի ճակատէն Փետրուարին Կ. Պոլիս վերադարձաւ, հայոց պատրիարքին իր մասնաւոր գոհունակութիւնը յայտնեց կռիւներու ընթացքին հայ զօրագունդերու վարմունքին եւ քաջութեան մասին, որոնք իրենց պարտականութիւններուն մէջ կատարեալ եղած էին»: Էնվեր գովեստով կ'արտայայտուի յատկապէս Օհաննէս *չաւուշ* անունով հայ զինուորի մը մասին, որ վտանգի տագնապալի պահուն իր սպայակոյտը փրկած էր:

Հանս ֆոն Վանկենհայմ հայերն ու թուրքերը հաւասարապէս յանցաւոր կը նկատէ՝ գրելով. «Իւրաքանչիւր կողմ միւս կողմի մեղադրանքները հերքում է իբրեւ անհիմն կամ էլ իրադարձութիւնների մեղքը բարդում է միւս կողմի վրայ» (էջ 32): Այս տեսակի արտայայտութիւններէն ամէն արդար մարդ բնականաբար կ'ընդվզի. իր սեփական հայրենի հողին վրայ դարերով ճնշուած, հալածուած եւ իրաւագրկուած հայ ժողովուրդը տակաւին



յանցաւո՞ր է ու պարտաւոր է իր մեղաւորութի՞ւնն ընդունիլ: Անարդարութեան գագաթնակէտն է սա, որ միայն հիւանդագին հոգիներէ կամ անիրաւ արարածներէ կը բխի որպէս մահացու թոյն: Հայոց դէմ թուրքերու եւ քիւրտերու գործած ու շարունակուող վայրագութիւններուն դիմաց աչք գոցող գերմանացի դիւանագետը՝ կրնա՞ր դէպքերը առարկայականօրէն ներկայացնել իր երկրի ղեկավարներուն երբ ինք տեղեկ էր անոնցմէ ու կ'աշխատէր հայ ազգը բնաջնջելու ծրագիրն իրականացնել թուրքերուն հետ:

Այդուհանդերձ, Հանս ֆոն Վանկենհայմ կը խոստովանի, թէ հայերը ապստամբութեան որեւէ ծրագիր չէին մշակած երբ կ'ըսէ. «Երեւի թէ միայն մի կէտում կայ համաձայնութիւն (թուրքերու եւ հայերու ըսածներուն մէջ – Յ. Ի.), որ սահմանադրութեան հաստատումից յետոյ հայերը հրաժարուել են յեղափոխական մտքից, եւ դրա համար ոչ մի կազմակերպութիւն չկայ» (էջ 31):

Իր նամակ-գեկուցագիրին ամէն մէկ պարբերութեան մէջ ֆոն Վանկենհայմ կը ջանայ արդարացնել հայոց նկատմամբ թուրքերու գործած վայրագութիւնները. «Անկասկած հիմա Արեւելեան Անատոլիայում առկայ են հայերի դէմ օրինազանցութիւններ ու բռնութիւններ, եւ ընդհանուր առմամբ իրադարձութիւնները հայերը նկարագրել են ճշմարտացի, թեպէտ ինչ որ տեղ չափազանցրել են: Խօսքն աւելի շատ զրկանքների ու տառապանքների մասին է, որոնցից գերծ չի կարող մնալ ոչ մի պետութիւն՝ նոյնիսկ քաղաքակիրթ երկրներում, բայց միւս դէպքերում մեղքն ընկնում է հայերի վրայ, իսկ իշխանութիւններին վերաբերում է այն յանդիմանութիւնը որ նրանք ժամանակին նախազգուշական միջոցներ չեն ձեռնարկել եւ ուշացումով միջամտել են անտեղի խստութեամբ» (էջ 31):

Մենք՝ հայերս չենք բաւարարուած Գերմանիոյ խորհրդարանի՝ Պունտըսթակի Հայասպանութիւնը ճանչնալու առած քայլէն: Ճիշդ է, թէ մեղքին խոստովանութիւնը ներման կէս ճամբան անցնիլ կը նշանակէ – ինչպէս կ'ըսէ առածը – սակայն մնացեալ կէտը շատ բան կը պահանջէ: Պէտք է Գերմանիա նիւթական հատուցում ընէ հայոց, եւ տարբեր տեսակի ճնշում Թուրքիոյ վրայ՝ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայոց իրաւունքները վերականգնելու: Այս ուղղութեամբ ոչ միայն Գերմանիա, այլեւ բոլոր հզօր պետութիւնները շատ ընելիքներ եւ բարոյական պարտք ունին հայոց նկատմամբ: Ինչ ալ ըլլան պարագաները, ովքեր ալ ըլլան չարիքին մեղսակիցները, հայը միշտ արթուն եւ վճռական պարտի ըլլալ՝ իր իրաւունքները պահանջելու:

Հակառակ վերոյիշեալ փաստերուն աշխարհով մէկ հրապարակման, օրէնք պարտադրելու կոչուած պատասխանատուներ, խաղաղութիւն եւ արդարութիւն հաստատելու համար պաշտօնի կոչուած մարդիկ, քաղաքագետներ, զինուորականներ եւ մանաւանդ Թրքական

Հանրապետութեան պատասխանատուները, երես կը դարձնեն ճշմարտութենէն ու կը շարունակեն իրա՛ւ ճշմարիտին սուտ ըսել:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ՏԵՍԱԿԷՏ

Ցեղասպանական Համասպանդի Լոյսին Տակ

ԲԱԶՄԱՍՈՒՐ ՈՒ ԲԱԶՄԱՂԷՏ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒ ԴԻՄԱՑ,

Ո՞ՒՐ ԵՆ ԶԳԱՍՏԱՑՈՒՄՆԵՐՈՒ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒ «ԽԱՐԱԶԱՆ»ՆԵՐԸ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Իսրայէլ-Ամերիկան ցեղասպանական համասպանդը նոր գոհերով... կը փառաւորուի, նոր աւերներով... կը հպարտանայ, նոր տեղահաններով... կը սքանչանայ, նոր կործանումներով... կը լիանայ:

Մինչ Նաթանիահու-Թրամփի վարչակազմերը, դարձած են մարդասպանական վոհմակներ, բայց, ուշագրաւ է, որ անոնց ժողովուրդներու մեծ մասը, հաշտ աչքով չի դիտեր այդ բոլորը, ոչ ալ համաձայն է մարդկային այդ նախճիրներուն, հոսկէ-հոնկէ իրենց դատապարտելի ձայները լսցնելով, ապա, կոչ ընելով դադարեցնելու կոտորածները:

Ամերիկացի ծերակուտականներ եւ անուանի քաղաքագետներ (հոգ չէ թէ մեծամասնութիւն չեն), բացարձակապէս կը մերժեն Թրամփի բարբարոսութեան այս ոճը, ապա, անընդունելի կը գտնեն անոր ինքնագլուխ սանձարձակութիւնը, հակաօրինական նկատելով զայն, իսկ ամերիկացիք երբեք չեն բաժներ անոր ոճրային գործողութիւնները, վարկաբեկիչ եւ ամօթալի համարելով անոնց գործադրման վարչաքաղաքները:

Ամերիկացիք, նաեւ իրենց դժգոհութիւնն ու սրտնեղութիւնը կը յայտնեն, ի տես իրենց կրած տնտեսական ցնցումներուն եւ դիմագրաւած ապրուստային զրկանքներուն եւ առհասարակ սղութեան աճերուն:

Իսրայէլի պարագային, եթէ պետական աւագանիի կարգով, նուազ է հակադրութիւնը Նաթանիահուի վարած անբարոյ ռազմաքաղաքականութեան, սակայն, ժողովրդային խաւերէն ներս, ահաւոր բողոքի ու ցասումի ալիքները երթալով աւելի կը սաստկանան, ի



լուր իրենց կրած վնասներուն ու հարուածներուն, զոհերուն, ֆիզիքական ու հոգեկան տագնապներուն:

Այն հրեաները, որոնց «հրաւեր» տրուած էր անցեալին Իսրայէլ վերադառնալու կամ հոն բնակելու, նախորդ եւ այս մահացու կրակատարափներուն տակ ապրելու, ոչ միայն խորապէս զոջացած են, այլեւ որոշած... լքել երկիրը եւ վերահաստատուիլ իրենց նախկին երկիրներուն մէջ:

Այդպիսիներ, իրենց աչքով տեսան ու մորթերուն վրայ զգացին, որ Իսրայէլը չի կրնար դառնալ ու մնալ «յաւերժական հայրենիք» մը, հետեւաբար, լաւագոյն առիթն է, հեռանալ անկէ, մանաւանդ իրենց չվարչապետին ինտելեկտուական ծրագիրներէն ու գոծրողութիւններէն, որոնք դժոխքի վերածեցին ամբողջ տարածաշրջանը:

Իսկ բարբարոս չվարչապետը գիտէ, թէ այս խելակորոյս պատերազմը կորսնցնելու կամ անկէ հրաժարելու պարագային, նոյնիմանք իսրայէլեան պատժական օրէնքներու հիմամբ, զինք կալանաւորելն է եւ ինք՝ կը սարսափի այդ հաւանականութենէն, ճիգ թափելով մնալ իր դիրքին վրայ, շարունակելով իր անմարդկային գծութիւնները ու քանդողական ուղեգիծերը:

Վերջին հաշուով, որքան ալ կողմնակից ու գործակից ունենայ, ի ծնէ անոր արիւնը պղտոր է, նկարագիրը՝ սեւ, դեկավարումը՝ թունաւոր, բնաւորութիւնը՝ զգայագուրկ, մարդուկը, իր շահամուլական քաղաքականութիւնը կը նկատէ գերհզօրութիւն մը, որ զինք եւ իր հետեւորդ թափփուքները պիտի առաջնորդեն, դէպի նոր անկայունութիւններու եւ անորոշութիւններու:

Թրամփը, փոխանակ ինքզինք պահէ արժանավայել եւ անկողմնակալ նախագահ մը, յատկապէս իբրեւ մե՛նձ պետութեան մը առաջնորդ, իր շուրջ հաւաքած է այնպիսի կոտորուածներ, բորենիներ ու ստահակներ, որոնք թէ՛ իր աւելածուններն են եւ թէ՛ մանկլաւիկները:

Այլապէս, ինչո՞ւ ան, անպատկառօրէն, պիտի պահանջէր, բարձրաձայներ, որ բոլոր արաբները պէտք է միանան, պայքարելու ու ճզմելու համար... Իրանը, իսկ այս ձաբոտութիւնը ի՞նչ կը նշանակէ Թրամփի մը կամ թրամփամետներու համար, եթէ ոչ՝

ա) Անկարողութիւն Իրանը իր ափին մէջ առնելու ու զայն դարձնելու... ենթակայական-երեւակայական նահանգ մը, իր նախընտրած վարչախումբով ու վարչակազմով:

բ) Արաբական աշխարհը աւելի մեկուսացնել եւ աւելի ջլատել իրարմէ եւ ընդհանրապէս այլ պետութիւններէ, լրիւ իր քմահաճ իշխանութեան ծիրէն ներս պահելով անոր ամբողջականութիւնն ու կարգավիճակը:

(Զմոռնա՛լ, որ՝ Թրամփ տակաւին նոր նախագահական աթոռին վրայ բազմած, ամերիկեան «հոգերն ու կարիքները» թողլքած, Քանատան ուղեց կցել (միացնե՛լ) իր կառքին, ապա, Սքանտինաւեան Հանրապետութիւններէն մէկը, Վենեզուելան (զոր սինիքօրէն... նուաճեց), հուսկ՝ Քուպան առնել իր արքանին մէջ, որմէ առաջ, արդէն Միջին Արեւելքի կարգ մը



«մնացորդ»ները անճիտելով, չանդրադառնալով որ՝ մինչեւ իր նախագահական աւարտը, ո՞վ կը մնայ եւ ո՞վ կը չուէ...):

զ) Ձեւացնել՝ որ՝ Լիբանանի ու լիբանանցիներուն հետ է, բայց, գործնապէս զանոնք ալ պահելու իր ծոցին մէջ եւ սիրաշահելու համար Նաթանիահուն, անոր «կանաչ լոյս» տալու, լիբանանեան ընդդիմութեան հետ ի սպառ հաշուեյարդար տեսնելու, ինչ որ հիմնական նպատակակէտ մըն էր իրեն համար, միայն կը մնար Թրամփի հովանաւորութիւնը եւ օրհնութիւնը, ինչ որ անիկա ալ գործադրուեցաւ:

Հետեւաբար, երկուքն ալ, իրենց «մուրազ»ին հասա՞ն, երկիր քանդելով ու բնակչութիւն ոչնչացնելով, ոչ իրենց բացայայտած լոզունգներուն սիրոյն, այլ՝ անկախաբար Իրանէն, Լիբանանը կոխկոտելով ու լիբանանցիները բզբտելով:

Այս գրառումները ու մտորումները, արտաքին ճակատի վրայ, իրենց դէպքերու զարգացումներով եւ իրավիճակներու բռնկումներով, ինքզինքնին կ'արտայայտեն ու կը պատկերեն, առնուա՛զն, իրենց սուր կողմերով ու ծալքերով:

Սակայն, աւելի ցաւալին ու ողբերգականը այն է, երբ ներքին սահմաններէն ներս (իմա՝ լիբանանեանէն), խոպոտ ձայներ կը լսուին, խժալուր խօսքեր կը շրջագայուին, անիմաստ գաղափարներ կը շեփորուին, անտեղի կարգախօսներ կը տարածուին, ամօթալի կեցուածքներ կ'որդեգրուին, որոնք ոչինչով կը նպաստեն Լիբանանի հեղինակութեան, ոչինչով կ'օժանդակեն անոր գոյութեան:

Ընդհակառակը, նման այլանդակ կեցուածքներ ու մօտեցումներ, անհաղորդ կարծիքներ ու տեսակէտներ, անտեղի յիշոցներ ու նախատինքներ, հիմնուած՝ անձնական, քաղաքական, դաւանանքային կամ համայնքային նեղմիտ շահերու ու շահադիտարկութիւններու վրայ, ոչ միայն կը վնասեն ու կը ստուերեն Լիբանանի պետականութեան ու լիբանանցիութեան արժանապատուութեանց վրայ, այլե՛ւ՝ հարցականներու տակ կը պահեն, անոնց գոյութեան ու համակեցութեան նուիրականութիւնները, ինչ որ, իրօք, խիստ պատուհասաբեր են, երբ զանոնք կը խորաչափենք իրենց համակողմանիական լիարժէքութեանց ու լիակատարութեանց ծիրերէն ներս:

Աւելի յստակացնելով կամ պարզաբանելով այդ այլամերժութեանց ու խայտառակութեանց որոշ ախտաբանումները, անոնք կը վերաբերին այն աղմկարար ու խառնահնչուն արձագանգներուն, որոնց միջոցով, պետականութիւն բնորոշող, ներկայացնող ու խորհրդանշող դէմքեր ու հաստատութիւններ կը կշտամբուին, կ'այպանուին ու կը պախարակուին (հանրապետութեան նախագահ, խորհրդարանի նախագահ, վարչապետ, բանակի հրամանատար) եւ անոնցմէ անպատկառօրէն կը պահանջուին հրաժարականներ, փոխանակ ըլլալու իսկական լիբանանցիներ ու պաշտպան՝ երկրի հողային ու ժողովրդային միասնութեան ու համատեղութեան, հանդէս կու գան, խօսքի ու գործի անարգանքներով, վիրաւորանքներով ու թշնամանքներով:



Աստուծոյ ինչի՞ կը միտին, երբ ոտիւր ոչ թէ դրան մօտ է, այլ՝ սահմաններէն ալ ներս անցած է ու կը յամառի ինքզինք պարտադրել, ամէն տեսակի զազրելիութիւններով եւ ոտնձգութիւններով:

Շատեր ինքզինքնին կ'արդարացնեն (ի՛նչ նորամտութիւն), որ իրենց կատարածը, պարզապէս երկրի պաշտպանութիւնն ու ժողովուրդին անվտանգութիւն են, մինչդէռ, իրենց ամենօրեայ փշոցներով, նոզկանքներով ու բարբաջանքներով, շատ աւելիով աղէտներ կը բերեն գործող իրականութեան, երբեմն՝ անգիտակցաբար, երբեմն ալ՝ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ, իսկ այս երկրորդը, ամենէն խոցելին ու զարհուրելին է:

Այս խուճապային, խռովքային, շփոթային, այլեւ՝ իրարանցմային թնճուկներուն մէջ, ո՞ր կը գտնուի լիբանանահայութիւնը իր համայնքային, ընկերային, թաղային, կուսակցական, միութենական եւ ընդհանրապէս համախոհութեան առումներով:

Ո՛չ մէկ կասկած, թէ հարցադրումը մոլորեցնող է, թէ՛ կացութեամբ, թէ՛ մեկնաբանումը, թէ՛ ալ կողմնորոշումը, որովհետեւ «թղթածրար»ը ինքնին բարդ է, կնճռոտ, խորհրդաւոր ու բազմազլխանի, միանգամա՛յն:

Բայց, աստուծոյ չեն նշանակեր անճար կամ անփոյթ մնալ, որովհետեւ, պատուհասը, մերթ ոլորապտոյտ, մերթ ծալքակողմ անկիւններով կը սպրդի, կը յարձակի ու կը փճացնէ ամէն ինչ, որոնց ականատեսը կ'ըլլայ նաեւ լիբանանահայութիւնը, թէկուզե՛ ոչ ուղղակի միջամտութիւններով, բայց անպայմանօրէն, իր «բաժին» ալ ստանալով:

Լիբանանահայութիւնը, միշտ ալ դէմ յանդիման գտնուած է նման «անուղղայ» ճակատումներու, սակայն, անոնցմէ դուրս եկած է նուազագոյն (՞) վերքերով ու սպիներով, իսկ ներկայիս տեղի ունեցածը, բոլորովին այլ «խժապատկեր» մըն է, իր գոյնով ու ձեւով, տեսակով եւ եղանակով, ծաւալով ու տարողութեամբ, ահագնութեամբ ու խորութեամբ, որուն համար, լիբանանահայութիւնը, առանց իյնալու չափազանցութիւններու ու ծայրայեղութիւններու մէջ, բայց մանաւանդ, առանց դառնալու «կողմ կամ դէմ», ինքզինք պէտք է պահէ լուրջ ու զգօն, խոհեմ ու զուսպ, իրատես ու գործնական, որպէսզի կարենայ դիմակալել ու դիմագրաւել մարտահրաւերները, որոնք կրնան ցցուիլ ու ծագիլ, այս կամ այն կողմէն:

Պէտք է ընդունիլ, որ կացութիւնը բազմասուր ու բազմաղէտ է, բայց, պէտք է ընդունիլ նաեւ, որ զգաստ ու սթափ մնալը այլընտրանք չի ձգեր, բացի, լաւագոյն, յարմարագոյն եւ էագոյն միջոցներով, դառնալ մեր ազնուագոյն առաջադրանքներուն կրողն ու զօրակցողը:

(Պէյրութ)

25/3/2026

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ - ՊԱՅՔԱՐ 468



Պետութեան մը սահմանադրութիւնը ժողովուրդի մը պատմական կամքին քաղաքական արտայայտութիւնն է, ազգային յիշողութեան ամրագրումը եւ պետականութեան գոյութեան հիմնաքարը: Ան այն գերագոյն փաստաթուղթն է, որ կը սահմանէ պետութեան գաղափարական հիմքերը, կ'ամրագրէ անոր արժէքները եւ կը գծէ ժողովուրդի մը վաղուան ուղին:

Սահմանադրութիւնը միաժամանակ կը պահպանէ ժողովուրդին պատմական յիշողութիւնը եւ անոր համազգային նպատակները:

Սահմանադրութիւնը սերունդներու պայքարով կերտուած պատմական ուխտ մըն է, որ կը միացնէ անցեալը, ներկան եւ ապագան:

Հայաստանի Անկախութեան հռչակագիրը քաղաքական եւ պատմական ուղերձ մըն է, որ կ'արտայայտէ հայ ժողովրդի ազգային կամքը, ինքնապաշտպանութեան եւ ինքնորոշման անքակտելի իրաւունքը, եւ սատար կանգնիլը Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման պայքարին: Ան ամրագրուած է նաեւ պետականութեան գաղափարական հիմքերով եւ երաշխաւորութիւն կու տայ արցախահայութեան հիմնարար իրաւունքներուն պաշտպանութեան: Հեղինակները զայն խմբագրած են սերունդներու պայքարով կերտուած պատմական արդարութիւնը դարձնելով անկախ եւ ինքնուրոյն ապագայի անխզելի երաշխիքը:

Այս սկզբունքները պատմութեան ընդմէջէն ծնած պարտաւորութիւններ են:

Բայց երբ իշխանութիւն մը սահմանադրութեան միջոցով կը փորձէ խզել պատմութեան եւ ազգային յիշողութեան հետ իր կապը, վտանգի տակ կը դրուի պետական համակարգը եւ ժողովուրդի պատմական գոյութեան հիմքը:

Այսօր սահմանադրութեան փոփոխութիւն կը պարտադրուի Հայաստանի մէջ: Անոր հետեւանքը պիտի ըլլայ ազգային յիշողութեան նսեմացումը: Նոր սահմանադրութիւն՝ առանց յղում կատարելու Հայաստանի Անկախութեան Հռչակագիրէն կը նշանակէ ջնջել պետականութեան արմատները այն պատմական փաստաթուղթէն, որ ծնունդ տուաւ Հայաստանի Հանրապետութեան:

Պետութիւնը ինքնաբերաբար հրաժարած պիտի ըլլայ իր պատմական պատասխանատուութենէն, երբ նոր սահմանադրութիւնը անտեսէ այս պարտաւորութիւնները:



Ազրպեյճան եւ Թուրքիա բացայայտօրէն քաղաքական եւ պատմական դիրքորոշումներու վերաձեւում կը պահանջեն Հայաստանէն: Երեւան տեղի կու տայ: Պետութեան պատմական ինքնութիւնը եւ ազգային պարտաւորութիւնները գիտակցաբար կը խոնարհին վարկաբեկումի առջեւ: Նոր սահմանադրութիւնը ինքնաբերաբար պիտի դառնայ քաղաքական զիջում:

Անկախութեան հռչակագիրին յղումը սահմանադրութենէն հանելով, Հայաստան հաւանութիւն տուած պիտի ըլլայ Ալիեւի եւ Էրտողանի պահանջին՝ օրինականացնել անոնց թեզը՝ Արցախը Ազրպեյճանի անքակտելի մասն է:

Ժողովուրդը դարձած է քաղաքական ճնշումի եւ հարկադրանքի առարկայ: Անոր ազատ կամքը ենթարկուած է պետութեան եւ արտաքին ուժերու քաղաքական քմայքին:

Իշխանութիւնը երկընտրանքի առջեւ դրած է ժողովուրդը՝ սահմանադրութեան փոփոխութիւն կամ՝ պատերազմ: Սակայն անկախութեան հռչակագիրը անկարելի է ունէլ անհատի ցանկութեամբ ջնջել:

Արցախը, ուր հայ ժողովուրդը հազարաւոր տարիներ ապրած էր իր նախնեաց հողին վրայ, այսօր հայաթափուած է: Տասնեակ հազարաւոր ընտանիքներ բռնի տեղահանուած են իրենց օճախէն, եկեղեցիներէն, մշակութային ժառանգութենէն: Իշխանութիւններուն համար Արցախի հարցը փակուած է: Արաքսէն արեւմուտք Թուրքիա է: Ուրացումի կարգը հասած է Հայոց Ցեղասպանութեան...: Արարատը պիտի դադրի ըլլալ մեր ժողովուրդի ինքնութեան խորհրդանիշը...:

Այսօր ակնյայտ է, որ հայ ժողովուրդի պատմական պահանջները կը ներկայացուին՝ բեռ: Ազգային պայքարը՝ խոչընդոտ, պատմական յիշողութիւնը՝ վտանգ:

Եկեղեցիներու մէջ Արցախի յիշատակութիւնը ներկայացուի իբրեւ «պատերազմի յայտարարութիւն»: Արցախը մեր ժողովուրդի քաղաքական եւ հասարակական գիտակցութեան մէջ տարածքային, պատմական եւ ինքնութեան հարց է:

Պատմութիւնը բազմիցս ապացուցած է, որ այն ժողովուրդները, որոնք արտաքին ճնշումներու տակ վերաձեւած են իրենց ինքնութիւնը, կորսնցուցած են թէ՛ իրենց ինքնութիւնը եւ թէ՛ իրենց պետութիւնը:

Այս սպառնալիքները կը հնչեն այն իշխանութենէն, որուն վարած քաղաքականութեան հետեւանքով հայ ժողովուրդը ապրեցաւ իր նորագոյն պատմութեան ամենաճանր կորուստները: Վարչապետը քայլ մըն առջեւ երթալով, հանրութիւնը կը զգուշացնէ՝ խորհրդարանական ընտրութիւններուն ընդդիմութեան յաղթանակի պարագային պատերազմ պիտի պատահի...: Այս սպառնալիքները հնչեցնելու փոխարէն, նախընտրելի պիտի ըլլար, որ Փաշինեան յիշէր իր իշխանութեան տարիներուն մարդկային եւ տարածքային կորուստները: Ինք էր իսկական պատերազմը սադրողը, հրապարակաւ ոգեշնչող, յաւակնոտ ելոյթներ կ'ունենար՝ Արցախը Հայաստան է եւ վերջ կարգախօսով...: Փաշինեան եթէ իսկապէս խաղաղութիւն հաստատած ըլլար, խաղաղութիւնը կախեալ



պիտի չըլլար Հայաստանի մէջ տեղի ունենալիք ընտրութիւններուն արդիւնքէն: Սադրիչ մը փնտռելու անհրաժեշտութիւն ըլլալու պարագային, առաջին սադրիչը Փաշինեանն է, որ ներկայիս կ'արգիլէ Արցախի անունը արտայայտել:

Սակայն այս ամբողջ ողբերգական պատկերը ունի նաեւ բարոյական մէկ ծանր շերտ, որուն վրայ անպայման անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, կամ այդ մասին համապարփակ եւ յստակ արտայայտուիլ:

Հայաստանի վարչապետը Ազգային Ժողովի ամպիոնէն խոստովանեցաւ. « Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կ'ունենայինք նոյն վիճակը՝ առանց զոհերի»: Ինչու՞ չկատարեց...: Այսօր այդ նոյն վարչապետը զգենած է «խաղաղութեան կուսակցութեան» պատմուճանը, իսկ եկեղեցին եւ ընդդիմադիրները՝ պատերազմի:

Այդ խոստովանութիւնը կը բարձրացնէ ծանր եւ անխուսափելի հարց մը՝

Եթէ այդ լուծումները կարելի էին առանց պատերազմի, ապա ինչու՞ Հայաստան եւ Արցախ անցան այն կործանարար ճանապարհով, որ հազարաւոր երիտասարդներու կեանքը խլեց եւ ամբողջ ժողովուրդ մը տարաւ տեղահանութեան:

Երբ պետութեան ղեկավարը կը խոստովանի, որ առանց պատերազմելու ալ կարելի էր նոյն արդիւնքներուն հասնիլ, ակամայ ընդունած կ'ըլլայ, որ հազարաւոր երիտասարդներու մահը կախուած էր իր որոշումներէն: Անձամբ ինք կը կրէ այս ազգային ողբերգութեան հիմնական պատասխանատուութիւնը:

Արցախեան պատերազմը միայն ռազմական պարտութիւն չէր: Ան համազգային խոր ողբերգութիւն էր: Պատերազմը փշրեց հազարաւոր երիտասարդներու ապագան, խաթարեց հազարաւոր ընտանիքներ, եւ խեղդեց ժողովուրդի հաւաքական յոյսերը: Ան նաեւ բացայայտեց այն խոր բարոյական ու պատմական ճգնաժամը, որ կը խարխիլէ Հայաստանի պետականութեան եւ ազգային ինքնութեան հիմնասիւնները:

Հազարաւոր հայ երիտասարդներ իրենց կեանքը զոհեցին հայրենիքի պաշտպանութեան համար: Անոնք իրենց արիւնով փորձեցին պահել այն հողը, ուր դարերով ապրած էին իրենց նախնիները:

Այդ երիտասարդները զոհուեցան այն համոզումով, որ կը պաշտպանեն իրենց հայրենիքը եւ իրենց ժողովուրդի ապագան:

Երբ այսօր պետական բարձրագոյն մակարդակով կը հնչէ այն միտքը, թէ նոյն զարգացումները կարելի էր իրականացնել առանց այդ զոհողութիւններուն, այդ խոստովանութիւնը կը դառնայ նաեւ բարոյական ծանր հարցադրութիւն ամբողջ պետական ղեկավարութեան հասցէին:

Նոյն վարչապետն էր, որ 2018-ի իշխանափոխութենէն ետք մերժեց «տարածքներ՝ խաղաղութեան դիմաց» լուծումի տարազը:



Եւ երբ ութ տարիներու քաղաքական ընթացքը կը յանգեցնէ Արցախի ամբողջական կորուստին, արցախահայութեան բռնի տեղահանութեան եւ հազարաւոր երիտասարդներու նահատակութեան, անոր խոստովանութիւնը ինքնաբերաբար կը դառնայ պատմական դատաստանի հայց:

Հայաստանի Հանրապետութիւնը իր գերիշխան տարածութիւններէն ալ զիջումներ կատարեց Ազրպէյճանին: Քանի մը օր առաջ Ազրպէյճան պաշտօնապէս մերժեց հեռանալ Ջերմուկի տարածութիւններէն

Այս բոլոր աղիտալի իրադարձութիւններուն պատասխանատուութիւնը անտեսելով, իշխանութիւնը տակաւին կը յաւակնի «Խաղաղութեան» աղանի ներկայանալ ժողովուրդին:

Խաղաղութիւն կը կառուցուի միայն վստահելի քայլերով, պայմանաւորուած՝ հայրենիքի անվտանգութեան, ժողովուրդի արժանապատուութեան եւ կայունութեան երաշխիքներով:

Արժանապատիւ խաղաղութեան հիմքերը հարուածող որեւէ ծրագիր դատապարտուած է մնալու միայն բառերու եւ յայտարարութիւններու մակարդակին վրայ:

Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ լպրծուն քաղաքականութիւնը, աւելի քան վտանգաւոր լարախաղացութիւն կը յիշեցնէ, քան՝ դիւանագիտութիւն:

Անկախութեան հռչակագիրը անկարելի է ռեւէ անհատի ցանկութեամբ ջնջել:

Մահմանադրութիւնը սերունդներու պայքարի արձանագրութիւնն է:

Եզրափակելով՝ երբ իշխանութիւնը քաղաքական քայլերով կը հրաժարի պատմական պատասխանատուութենէն, իր ազգային պարտաւորութիւններէն, ինքնաբերաբար կը խախտէ սեփական ժողովուրդին հետ բարոյական կապը եւ կը սպառնայ համայն հայ ժողովուրդի ինքնութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ՓՐԿԻՉՆԵՐԸ ՇԱՏ, ԲԱՅՑ ԿՈՏՈՆ Ո՞ՒՐ Է



✉ **ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ**

5/4/2026



Հայաստանի մեջ նախընտրական շրջանը միշտ ունի հրաշալի յատկություն մը. ան յանկարծակի գարուն կը յիշեցնէ, երբ ձինի տակէն ոչ թէ ծաղիկներ դուրս կու գան, այլ «փրկիչներ»: Ամբողջ փունջ մը բազմերանգ ու բազմիմաստ աղմուկի, որուն նպատակը իշխանութիւնն է, բայց որ, բնականաբար, կը կատարուի մէկ նպատակով՝ «փրկելու»:

Հայաստանի մեջ, նախընտրական շրջանը շատոնց դադրած է քաղաքական գործընթաց մը ըլլալէ. ան դարձած է թատրոնի պարբերական ներկայացում մը, ուր դերակատարները կը փոխուին, բայց բեմադրութիւնը նոյնն է, խօսքերը

նոյնն են, նոյնիսկ ժեսթերը նոյնն են: Չորս-հինգ տարի լռութիւն, հեռաւորութիւն, անտեսում, իսկ յետոյ յանկարծ՝ ժողովուրդին հանդէպ մեծ սէր, մեծ ցաւ, մեծ պատասխանատուութիւն: Մարդիկ, որոնք տարիներ շարունակ հասարակութեան հետ կապ չունէին, կամ շատ վատ կապ ունէին, յանկարծ կը յայտնուին բակերու, գիւղերու, փողոցներու մէջ՝ խիստ մտահոգ դէմքերով, եւ կը պարզուի ժողովուրդը վտանգի մէջ է: Ժողովուրդը մոլորած է: Ժողովուրդը խեղճ է: Եւ ամենէն կարելորը այն է, որ ժողովուրդը պիտի «փրկուի»: Իսկ փրկիչները շա՛տ են, այնքա՛ն շատ, որ նոյնիսկ մրցակցութիւն կը սկսի, թէ ո՞վ առաջինը կը հասնի փրկելու: Ու կը գոռան, թէ պիտի փրկեն, իսկ ան որ չի փափաքիր իրենց ձեռով փրկուիլ, այնպիսի անհասկցող եւ յիմար անձ մը կը նկատուի, գոր պէտք է ուժով փրկել: Եթէ անհրաժեշտ է՝ հայիոյել, կամ կաշառք տալ, կամ վախցնել, մէկ խօսքով՝ նպատակը կ'արդարացնէ միջոցները: Իսկական քաղաքական Ռոպին Հուտ մը:

Այդ պահուն կը սկսի փրկութեան մրցումը. մէկը կը փրկէ անվտանգութիւնը, միւսը՝ տնտեսութիւնը, երրորդը՝ արժանապատուութիւնը, չորրորդը՝ պետութիւնը, հինգերորդը՝ բոլորը միասին:

Մակայն, այս բոլորը շատոնց արդէն դադրած են որպէս քաղաքական պայքար ընկալուելէ: Աւելի կը յիշեցնեն սովորական թատերախաղ մը, ուր ամենէն կարելորը ոչ թէ գաղափարն է, այլ դերաբաշխումը: Ո՞վ որու պէտք է միանայ, ո՞վ որմէ պէտք է բաժնուի, ո՞վ որու հետ պէտք է դաշինք կազմէ: Երէկուայ հակառակորդները յանկարծ կը դառնան գործակիցներ,



Իսկ երեկուայ գործակիցները՝ անհաշտ ընդդիմախօսեր: Այս դաշինք-դաշինք խաղալը դարձած է քաղաքականութեան հիմնական բովանդակութիւնը: Գաղափարները դարձած են երկրորդական, սկզբունքները դարձած են փոխանակելի, իսկ ընտրութիւնը վերածուած է թեքնիք գործընթացի մը. ո՞վ որու միացաւ, ո՞վ որմէ բաժնուեցաւ, ո՞վ քանի տոկոս կ'ապահովէ:

Այս բոլորին հետեւանքը շատ աւելի խոր է, քան պարզապէս քաղաքական անճաշակութիւնը: Այս թատրոնը աստիճանաբար սկսած է քանդել ընտրութեան հանդէպ հաւատքը: Երբ ընտրութիւններէ ընտրութիւն, նոյն դէմքերը կը վերադառնան նոր անուններով, երբ նոյն խոստումները նոր ձեւակերպումներով կը կրկնուին, երբ դաշինքները կը ստեղծուին ոչ թէ գաղափարներու, այլ հաշուարկներու հիմամբ, ընտրութիւնը կը կորսնցնէ իր էութիւնը: Ան այլեւս չ'ընկալուիր որպէս որոշում, այլ որպէս հերթական ձեւակերպութիւն մը, որ պէտք է տեղի ունենայ, որովհետեւ պարզապէս ժամանակն է:

Ժողովուրդը այս ընթացքին մէջ աստիճանաբար դուրս կը մղուի իրական քաղաքականութենէն: Անոր անունով կը խօսին, անոր անունով կը միանան, անոր անունով կը բաժնուին, բայց իրականութեան մէջ ան պարզապէս դիտորդ է: Կը հետեւի, թէ ինչպէս նոր դաշինքներ կը կազմուին, ինչպէս բարձրագոյն խօսքեր կը հնչեն, ինչպէս մեղադրանքներ կը փոխանակուին, բայց կը հասկնայ, որ այս բոլորը շատ քիչ ազդեցութիւն ունի իր կեանքին վրայ: Ընտրութիւնը կը դառնայ ոչ թէ փոփոխութեան ակնկալութիւն, այլ յոգնեցուցիչ պարտականութիւն մը: Ժողովուրդը կը տեսնէ, որ «փրկութեան» աղմուկը այնքան մեծցած է, որ արդէն զինք կը «փրկեն»... իրմէ:

Քաղաքական բեմին վրայ ստեղծուած է իրավիճակ մը, ուր բոլորը կը խօսին փրկութեան մասին, բայց ոչ ոք կը բացատրէ, թէ ինչու ւ այդ փրկութիւնը միշտ կը յետաձգուի յաջորդ ընտրութիւններուն: Բոլորը կը խօսին ժողովուրդին անունով, բայց ժողովուրդը կը շարունակէ դիմագրաւել նոյն խնդիրները: Բոլորը կը խօսին փոփոխութեան մասին, բայց փոփոխութիւնը չի գար... Պէքէթի Կոտոյին նման: Այդտեղ ալ կը ձեւաւորուի վտանգաւոր հոգեբանական վիճակ մը. սպասում առանց յստակ ակնկալութեան:

Հասարակութիւնը կարծես ինչ-որ բան մը կը սպասէ: Կը սպասէ նոր ուժի, նոր դէմքի, նոր լուծման, բայց այդ սպասումը կը դառնայ անվերջ: Քաղաքական ուժերը հերթաբար կը յայտնուին, կը խոստանան, յետոյ կը հեռանան, իսկ ընդհանուր պատկերը չի փոխուիր: Ոչ ոք իրականութեան մէջ չի գար, ոչ ոք իրականութեան մէջ չ'երթար, որովհետեւ համակարգը կը մնայ նոյնը: Կը փոխուին միայն անուններն ու ձեւակերպումները: Իսկ քաղաքական Կոտոն անվերջ կ'ուշանայ: Կ'ուշանայ եւ անոր փոխարէն միայն քաղաքական փերեզակներ են, որ անվերջ ու անընդհատ, հոժ շարքերով կու գան նորէն խոստումներ շոռայլելու: Քանի-քանի նման փրկիչներ տեսած է հայ ժողովուրդը եւ անոնցմէ ոչ ոք մխիթարութիւն չէ բերած իրեն՝ սկսեալ հօգը կայսրերէն՝ մինչեւ տեղական խեղկատակներն ու փանջունիները:

Ընտրութիւնները կը վերածուին ինքնանպատակ գործընթացի: Անոնք տեղի կ'ունենան, բայց չեն վերականգնէր վստահութիւնը: Քարոզարշաւներ կը կազմակերպուին, բայց չեն ստեղծեր իրական ընտրութիւն: Դաշինքներ կը կազմուին, բայց չեն ներկայացնէր գաղափարական այլընտրանք: Հետեւանքը՝ քաղաքական կեանքը կը սկսի նմանիլ փակ շրջանակով շարժող մեքանիզմի մը, ուր շարժում կայ, բայց յառաջընթաց չկայ: Երբ

քաղաքականութիւնը այսպիսի թատրոն կը դառնայ, քաղաքացին աստիճանաբար կը կորսնցնէ մասնակցութեան զգացումը: Ան այլեւս չի հաւատար, որ իր ընտրութիւնը կրնայ փոխել իրավիճակը: Ան կը տեսնէ նոյն դէմքերուն վերադառնալը, նոյն խօսքերուն կրկնութիւնը, նոյն դաշինքներուն վերաձեւաւորումը, եւ կը սկսի ընտրութիւնը ընկալել որպէս ձեւականութիւն: Այդ պահուն ընտրական գործընթացը կը կորսնցնէ իր ամենէն կարեւոր բովանդակութիւնը՝ հանրային վստահութիւնը:

Նախընտրական Հայաստանը այսօր նոյնիքն այս տրամադրութեան մէջ է: Շատ խօսքեր, շատ դաշինքներ, շատ փրկիչներ, բայց քիչ հաւատք: Քաղաքականութիւնը դարձած է ինքնանպատակ շարժում, ուր գործողութիւնները կը կատարուին ոչ թէ փոփոխութիւն ստեղծելու, այլ հերթական փուլը անցնելու համար: Իսկ ժողովուրդը կը մնայ նոյն տեղը՝ դիտելով հերթական բեմադրութիւնը, որուն աւարտը նախապէս յայտնի է, բայց որ այնուամենայնիւ կը կրկնուի իւրաքանչիւր ընտրութենէ առաջ:

Հիմա ընդհանրապէս իւրաքանչիւր հայու առնուազն չորս-հինգ փրկիչ կ'ելլէ: Կը մնայ, որ փրկիչները չկործանեն Հայաստանը՝ Յանուն Հայաստանի:

Արայիկ Մկրտումեան

Ս. Զատկուան ճշմարտութիւնը՝ վիրաւոր աշխարհի մը մէջ

«Ե՛ս եմ՝ մի՛ երկնչիք» – «Ես եմ՝ մի՛ վախնաք» (Յովհ. 9, 20):



Սուրբ Զատիկ է՝ Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնը: Հայոց քրիստոնէութեան դարձի վաղագոյն շրջաններէն նաեւ այսօր, զայն բերկրանքով զեղուն աւետիսին սա խօսքերով կ'ողջունէ հայ մարդը աշխարհի չորս ծագերուն.

Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Ս. Զատիկը կեանքի, ճշմարտութեան եւ յոյսի տօնն է. իրադարձութիւն մը, որ մեզ կը հրաւիրէ ոչ միայն ուրախանալու, այլեւ աչալուրջ դիտելու մեր կեանքը եւ աշխարհի իրականութիւնը: Այսօր, երբ շուրջ 8,3 միլիառ մարդ կը բնակի մեր երկրագունդին վրայ, աւելի քան երբեք կը զգանք մարդկային կեանքին գերագոյն արժէքն ու վսեմութիւնը, բայց, ափսոս, միաժամանակ՝ անոր խոցելի դիւրաբեկութիւնը: Մարդիկ միայն թիւեր չեն, այլ կեանքեր, անհատական ճակատագրեր՝ առցուն յոյսերով, սիրով, արարելու ցանկութիւններով եւ ապագայի ակնկալիքներով: Իւրաքանչիւր կեանք ինքն իր մէջ անփոխարինելի արժէք մըն է, իւրաքանչիւր մարդ անհուն տիեզերք մըն է իր Արարիչին շունչը կրող, օծուն՝ աստուածանմանութեան պատկերով:

Այնուհանդերձ, այս անհամար բազմութեան՝ 8,3 միլիառ մարդկութեան ճակատագիրը կը գտնուի համեմատաբար շատ աւելի փոքրաթիւ քաղաքական գործիչներու, այսպէս կոչուած



երկիրներու եւ ազգերու ղեկավարութիւնը ստանձնած պետական այրերու ձեռքը: Անոնք են, որ կը վճռեն պատերազմի եւ խաղաղութեան բարակ սահմանագիծը, եւ իրենց բազմատեսակ շահերէն թելադրուած որոշումներով ազգերու եւ երկիրներու միջեւ կը հրահրեն կործանարար հակամարտութիւններ, կը սփռեն մահ ու ւաւեր, ծաղկուն եւ շէնշող քաղաքներ կը վերածեն աւերակոյտերու՝ մատնելով միլիոնաւոր կեանքեր անասելի տառապանքի ու անդառնալի կորուստներու:

Այս դաժան իրողութեան դիմաց, մինչ մարդկութեան ճնշող մեծամասնութիւնը խաղաղութեան վերջնական իրականացումին եւ արժանապատիւ կեանք մը ապրելու իրաւունքին կը ձգտի, Երկիր մուլտրակին վրայ տարուէ-տարի կը շարունակուին իրարայջօրդ պատերազմները՝ իբրեւ մարդկութեան երեսին «դամբանի սեւ մրուր»-ով գրուած անխուսափելի ճակատագիր մը, որմէ կարծէք անկարելի դարձած է խուսափիլ: Միլիոնաւոր ձայներ լռութեան կը մատնուին թնդանօթներու ահեղ որոտումներուն մէջ, եւ տառապող ժողովուրդներու մինչեւ երկինք բարձրացող աղաղակը ցաւօք կը մնայ անլսելի: Ահա այս հակասութիւնն է, որ մեզ կը մղէ վերաքննելու մեր ընկալումը քաղաքական պատասխանատուութեան եւ ժողովրդավարութեան իսկական էութեան մասին:

Ակամայ հարց կու տամ. ի՞նչ է ժողովրդավարութիւնը, եթէ ոչ ընտրական համակարգ մը, որ ձայնի իրաւունք կու տայ ժողովուրդին՝ դրսեւորել կարենալու համար իր կամքը երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական եւ յարակից բազմաթիւ հարցերու բարօր ղեկավարումը՝ վստահելով հաւասարակշռուած եւ արժանահաւատ պետական գործիչներու կամ առաջնորդներու: Եղո՛ւկ, որքան մեծ է յաճախ ընտրագանգուածներու յուսախաբութիւնը, երբ հուսկ կ'անդրադառնան, թէ խաբուսիկ էին տրուած խոստումները եւ մին միւսին ետեւէն կը խորտակուին այն բոլոր ակնկալիքները, որոնք դրուած էին այս կամ այն ղեկավարին վրայ: Արդե՞օք ժողովրդավարութիւնն այսօր իսկապէս կը գործէ, երբ բազմիցս չարաշահուելով ան կը վերածուի ընդամէնը հարթակի մը, որու վրայ ժողովուրդը պարտաւորուած կ'ըլլայ ընտրելու իր սեփական բռնապետը եւ իր ճակատագրին վերահսկողութիւնը յանձնելու քանի մը խոստումնադրուծ ղեկավարներու:

Ս. Զատիկը մեզ կը կանգնեցնէ ճշմարտութեան դիմաց՝ կեանքը ընդդէմ մահու, յոյսը ընդդէմ յուսահատութեան եւ ճշմարտութիւնը ընդդէմ անարդարութեան ու իշխանութեան չարաշահումին: Քրիստոսի յարութիւնը լոկ միխթարութեան կամ ինքնախաբէութեան պատգամ մը չէ, այլ զարթօնքի կոչ՝ տեսնելու անարդարութիւնը, զանազանելու ճշմարիտը սուտէն, եւ երբէք չկնքելու ծոյլ զիջում մը սուտին, կեղծիքին ու բռնութեան հետ:

Եթէ բազմութեան ձայնը բռնաճնշումներու պատճառով կը տկարանայ, ապա իւրաքանչիւր քրիստոնէայ մարդու սեպուհ պարտականութիւնն է զօրացնել զայն: Եթէ համակարգերը կը խախտին իրենց նպատակային գործառնություններէն, ապա պատասխանատուութիւնը չի վերաբերիր միայն ուրիշներու, այլ մեզմէ իւրաքանչիւրին եւ բոլորիս անխտիր:

Որքա՛ն վիատեցուցիչ է, երբ Երկիր մուլտրակին վրայ ապրող մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը ի վիճակի չէ ամենեւին կանխարգիլելու իրագործուող չարիքը՝ կախուած քանի մը մարդերու կանխակալ որոշումներէն: Արդարեւ, ամէն ինչ կը փոխուի, երբ կ'անդ-



րադառնաս բոլորովին այլ իրականութեան մը, երբ միլիոնաւոր մարդիկ կը մահանան անիմաստ ու շահամոլ պատերազմներէ, երբ ոսկրացած, ցաւատանջ մայրեր արցունքէ չորցած աչքերով կը հակին իրենց նորածին երեխաներու անթաղ դիակներուն վրայ, երբ գոեհկութիւնն ու բիրտ ուժը կը ոտնահարեն մարդկային բոլոր արժէքները, երբ դիտաւորեալ կը հեղինակագրկուին Միացեալ ազգերու կազմակերպութեան բոլոր ատեաններն ու կառոյցները, ու այդ ժամանակ կը գիտակցիս, որ այս աշխարհի վրայ «ինչ-որ մի տեղ, ինչ-որ մի բան սխալ է...»: Եւ ի գուր կը թուի, թէ պիտի կարենաս ուղղել այդ սխալը, բայց միեւնոյնն է, դուն անգոր էս, տկար ու անկարող՝ որպէս անհատ եւ միլիառներէ կազմուած հաւաքականութիւն, այնքան ատեն, որ հաշտուած էս անձնատուր ըլլալու գաղափարին հետ:

Քրիստոսի հրաշափառ յարութեան պարգեւած յոյսը փախուստ մը չէ աշխարհէն, այլ կենդանի հրաւեր մը՝ ծառայելու կեանքին, բարձրացնելու խաղաղութեան ձայնը եւ աներկբայ մերժելու այն խեղաթիրուած իրականութիւնը, ուր անպարկէշտ պատասխանատուներու եւ երբեմն ուղղակի հտպիտներու փոքրիկ ածու մը կը տնօրինէ բազմութիւններու ճակատագիրը:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Պաթոն Ռուժ, 5 ապրիլ 2026

Տօն հրաշափառ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՀԻՄՔ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ, ՍՓԻՒՌՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ



Արեւմտահայերէնը հիմք է ոչ միայն մեր լեզուական ինքնութեան, այլեւ՝ մեր հաւաքական յիշողութեան, մեր պատմական արդարութեան պահանջին՝ Հայ Դատին, եւ ընդհանրապէս հայութեան գոյատեւման: Արեւմտահայերէնը բառերու պարզ շարան մը չէ, ոչ ալ անցեալի փոշոտ էջերու մէջ փակուած հնութիւն մը: Արեւմտահայերէնը կենդանի գոյութիւն է՝ շունչով, յիշողութեամբ եւ պայքարով լեցուն:

Այս լեզուն ծնած է մեր մեծ մայրերուն շուրթերուն վրայ՝ անոնց օրօրոցային երգերուն մէջ, անոնց լուր ցաւին եւ աննկուն յոյսին մէջ եւ թեւ առած է մանաւանդ այն ժամանակներուն, երբ փորձեր

կ'ըլլային զայն լռեցնել՝ տեղահանութիւն, կոտորած, աքսոր: Երբ հարիւր հազարաւոր ձայներ մարեցան, արեւմտահայերէնը մնաց իբրեւ վերջին ապաստան՝ ձայն մը, որ կը վկայէր թէ մենք դեռ կանք:

Այսօր ալ արեւմտահայերէնը կը շարունակէ ապրիլ՝ երեխայի մը առաջին բառին մէջ, մօր մը աղօթքին մէջ, ուսուցիչի մը նուիրումին մէջ եւ գրողի մը տողերուն մէջ: Ամէն արտասանուած բառ՝ դիմադրութիւն մըն է մոռացութեան դէմ: Ամէն գրուած նախադասութիւն՝ հաստատում մըն է մեր գոյութեան: Լեզուն այստեղ պարզ հաղորդակցութեան միջոց չէ, այլ՝ ինքնութեան հիմքը, հոգեւոր հայրենիքը:

Արեւմտահայերէնը նաեւ կամուրջ մըն է՝ անցեալէն դէպի ներկայ եւ ապագայ, հայրենիքէն մինչեւ Սփիւռք, միացնելով սերունդներ՝ նոյն պատմութեան, նոյն ցաւին եւ նոյն յոյսին շուրջ: Առանց այս լեզուին, այդ կապը կը սկարանայ, եւ սերունդները կամաց-կամաց կը հեռանան իրենց արմատներէն:

Դժբախտաբար, գոյութիւն ունի մակերեսային մտածողութիւն մը, որ արեւմտահայերէնը անկարելի է եւ անոր պահպանումը՝ անիմաստ: Այս տեսակի մտածողութիւն ունեցողները, առանց խորքային քննարկումի կամ վերլուծութեան, արեւմտահայերէնը կ'անուանեն «բարբառ»: Սա մեծ թիրիմացութիւն է: Արեւմտահայերէնը բարբառ չէ, այլ հայերէնի ճիւղաւորում:

Կայ նաեւ այն թիր ըմբռնումը, թէ հայ ազգը պէտք է ունենայ միայն մէկ լեզու, եւ այդ լեզուն պէտք է ըլլայ արեւելահայերէնը: Անշուշտ, կարելի է ընդունիլ պաշտօնական մէկ լեզուի գաղափարը, սակայն այդ երբեք պէտք չէ ըլլայ արեւմտահայերէնը մոռնալու գնով:

Արդ, ինչո՞ւ չմտածել այլընտրանքի մը մասին: Ինչո՞ւ չընդունիլ գրաբարը իբրեւ ընդհանուր պաշտօնական լեզու՝ միաժամանակ պահպանելով եւ ուսուցանելով հայերէնի երկու ճիւղաւորումները՝ արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը: Այսպիսի մօտեցում մը ոչ



միայն կը պահպանէ մեր լեզուական բազմազանութիւնը, այլ նաեւ կը հարստացնէ մեր ազգային ինքնութիւնը:

Այս մէկը աննախադէպ գաղափար չէ: Օրինակ՝ արաբական աշխարհը ունի մէկ ընդհանուր պաշտօնական լեզու՝ «նահաուի», որ կը գործածուի բոլոր արաբական երկիրներուն մէջ, միեւնոյն ժամանակ պահելով եւ զարգացնելով արաբերէնի տեղական ճիւղաւորումները: Նման մօտեցում մը օրինակ կրնայ ծառայել նաեւ մեզի՝ միասնութեան մէջ բազմազանութիւնը պահպանելու:

Հայ Դատի պայքարը, որ արդարութեան, ճանաչման եւ իրաւունքի պահանջ է, չի կրնար ամբողջական ըլլալ առանց արեւմտահայերէնին, որովհետեւ այն է, որ կը փոխանցէ յիշողութիւնը, կը պատմէ ճշմարտութիւնը եւ կը ձեւաւորէ Հայ Դատի գիտակցութիւնը: Եթէ արեւմտահայերէնը տկարանայ, կը տկարանայ նաեւ պայքարի հիմքը: Արեւմտահայերէնը, այս իմաստով, ոչ միայն մշակութային ժառանգութիւն է, այլեւ՝ քաղաքական ու պատմական դիմադրութեան միջոց:

Եւ եթէ օր մը, Աստուած մի արասցէ, արեւմտահայերէնը լռէ, այդ լռութիւնը միայն բառերու կորուստ մը պիտի չըլլայ, այլ ամբողջ ազգի մը ներքին ձայնի յանգում: Պիտի լռեն սերունդներու յիշողութիւնները, պիտի խզուի անցեալի եւ ապագայի միջեւ կապը, եւ մենք պիտի վերածուինք սին արձագանգ մը՝ առանց խորքի, առանց արմատի:

Հետեւաբար, արեւմտահայերէնը պահպանելը ընտրութիւն մը չէ, այլ պարտաւորութիւն եւ կը պահանջէ գիտակցուած ու համադրուած ջանք, որուն մէջ ամէն անհատ իր բաժինը ունի:

Վերջապէս, երբ կը մտածենք կորուստի մասին, պէտք է յստակ հասկնանք, որ կորսուածը բառերը չեն, այլ այն լեզուն, որ մեզ կը կերտէր, կը ձեւաւորէր մեր մտածումը, մեր զգացումը եւ մեր ինքնութիւնը: Առանց անոր, մենք կը դառնանք հաւաքականութիւն մը դատարկ ձայներու, որոնք կը հնչեն, բայց չեն ապրիր:

Արեւմտահայերէնը մեր անցեալն է, մեր ներկան եւ մեր ապագային բանալին: Զայն պահել՝ կը նշանակէ պահել մեզ՝ հայութիւնը:

Յարութ Մկրտիչեան

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՌԱՓՕՏԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՊԷՍ

Արեւալո՛յս արդար ու հեզ,
Հե՛ւք մը տուր ինձ քու կրակէդ,
Նշո՛յլ մը կայծ ձենձերումէդ,
Բո՛ց սիրակէզ հեղեղումէդ,
Լուսավարար քու բաշխումէդ,
Ինքնանուէր մատուցումէդ,
Միրոյ անափ հրկիզումէդ...

Լոյսդ սե՛ր է որ կը վառի
Դար ու դարեր ու չի հատնիր,
Լոյսդ՝ բարի ք ամենեցուն,
Որ կը տրուի մշտացնծուն,
Լոյսդ կեանք է ինքնապարգէւ
Որ կը ստեղծէ ու կ'արարէ
Տիեզերքն համակ ու աշխարհներ...

Ո՛չ վարձք կ'ուզես, ո՛չ երախտիք
Լուսացնցուղ վարարումիդ,
Ո՛չ աղերսանք, ո՛չ աղաչանք
Լուսաբերկրուն ինքնընծայմանդ...

Բարեաց աղբիւր հրալոյսէդ



Թող տոչորի՛մ լուսածարաւ,
Ըմպե՛մ անյագ ճաճանչներէդ
Եւ մնա՛մ միշտ ես անսուադ:
6/4/2025

.....

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԹԱՐԹ

Վարդասպիտակ գոյներ հագած,
Ծառերը լուռ կը շողշողան,
Գարնան շունչով լուսացնծուն
Համբոյր կու տան երկնին լազուր...

Կ'ըմպեն լոյսը արեգական,
Մինչ ճնճղուկներն ուրա՛խ-գուա՛րթ
Կը թռչկոտին ճիւղերուն վրայ,
Դայլայլելով սիրավարա՛ր...

Սիրտերուն մէջ գարունը վառ
Զարթօնքի երգ ունի կայտառ,
Եւ մարդ էակն բնութեան հետ
Կը նոյնանայ գարնանահե...

Օ՛, գարնան երգն ու մեղեդին
Մտնեն բոլոր սիրտերէն ներս,
Նոր յոյս ու լոյս, սէրեր վառեն
Ու սիրերգէն կեանքը յուռթի...

Գարնան հրաշքով կենսողողուի՛ն
Յոգնած սիրտերն տառապահար,
Թօթուե՛ն ցուրտը ու բռնկի՛ն
Ծաղիկներով գարնանավառ:
11/3/2021

.....

ԵՐԱՆԻ

Երանի անոր ո՛վ հիւլէ մը լոյս կու տայ աշխարհին
Անձայն, անաղմուկ, բերկրանքով ներքին որ անուն չունի,
Զերթ շողն արեւին որ կը ճառագէ ու կը ջերմացնէ
Անվա ըձ, անհատո՛յց կը մնայ իր ճիգին միշտ հոգենուէր...

Լոյսի հիւլէներն սիրով ընծայուած կարծես կը շատնան,
Կը մտնեն յուշիկ բի՛ւր-բի՛ւր սիրտերէն ներս լուսածարաւ,
Տաք սիրալոյսովն իրենց կ'ողողեն սիրտերը չորցած,
Որոնք կը բանան ծաղիկներ բուրեան, թոյրերով վառման...

Ամէն մի ծաղիկ օրհներգութիւն է լոյսին, արեւին,
Ամէն մի ծաղիկ սիրերգութիւն է կեանքին, աշխարհին,



Ամէն մի ծաղիկ նորոգ ճաճանչ մ'է գեղեցիկին,
Որ կը պարուրէ աշխարհն ու մարդը լոյսով խնդագին:
26/3/2024

.....

ԼՈՅՍԻ ՃԱՄՔԱՍ

Մութն ու գորշը ետին թողած, Լոյսը միայն կ'ուզեմ տանիլ,
Լոյսով օծուիլ, լուսողողուիլ, պայծառանալ ես նորովի,
Լոյսով խայտալ, լուսարբենալ, լոյսի ճամբան է իմ ուղիս...

Դար ու դարեր այդպէս ապրեր, յարատեւեր եմ կորովի,
Փառքի ճամբաս ա՛յս է եղեր իմ լեռան պէս աստուածամե՛րձ,
Որուն նման ես չեմ տեսեր լուսագագաթ, արեւահե՛ւ...

Ան է միայն զիս ուղղորդեր դարերու մէջ տառապահեւ,
Որ չչեղի՛մ իմ ճամբայէս, չմոյրի՛մ գորշ մթան մէջ,
Մընամ լոյսի ու յաւերժի ճանապարհորդ մը աներեր...

Եւ հիմա ալ ես կը մնամ լոյս իտէալին միշտ սիրահար,
Թէկուզ ինչնամ ես մերթ ընդ մերթ ու սայթաքիմ պահ մը միայն,
Վերագտնե՛մ ուղիս շիտակ, աստուածներուն տանող ճամբաս:
4/3/2020

.....

ԿԵԱՆՔ ԻՄ ԱՆԳԻՆ

Կը փարիմ քեզ՝ նորոգ սիրով մը տենդագին,
Լուսաբացի վառ շողերուդ ճանանչավառ,
Իրիկնային խամրող լոյսիդ տրտմաթախիժ
Ու գիշերուան անհուն երկնիդ աստղածորան...

Կը փարիմ քեզ, ժպիտ սփռող ծաղիկներուդ,
Միւքիդ մեղմիւ որ քնքշութեամբ գգուէ հոգիս,
Տերեւներուդ որոնք հեքիաթդ պատմեն լուռ,
Երբ թրթռան շոյանքին տակ սեր-հովիկին...

Հիմա գորով մ'այնքան ջերմիկ հոգիս պատե՛
Քու տրոփիւնիդ, բաբախիւնիդ, շունչիդ, հեւքիդ,
Երբ կը տեսնեմ՝ որք կը ձգես բիւր-բիւր սիրտեր,
Կը հեռանաս յանկարծօրէն երագի պէս...

Կրկնապատիկ սիրով մ'անհուն կը կառչիմ քեզ՝
Կեանք իմ անգին, իմ մէկ-հատիկ, զիս չքես,
Դեռ հեքիաթիդ կ'ուզեմ փարիլ ես անձկագին,
Մի՛ անհետիր, զիս թողելով մեծ անյայտին...
31/3/2021

.....

ՊԻՏԻ ԱՊՐԻՍ



Ի՞նչդ երգեմ, գարնա՛ն ամիս,
Երբ մեր ծառը պերճ ու փարթամ
Ծիլ-բողբոջով մատղաշ, յուռթի,
Կմախացաւ ձմեռնացեալ...

Ի՞նչդ երգեմ, Ապրի՛լ ամիս,
Մեւ սուգ բերիք ժողովուրդիս,
Մահ ու աւեր եւ կոտորած,
Միլիոն ու կէս սուրբ նահատակ:

Ազգս դարձաւ աստանդական,
Իր բնօրրանէն արմատախիլ
Փոշի ազգ մը աշխարհացրիւ,
Աշնան տերեւ հոս-հոն քշուած:

Նշխար հացը անապական
Մեր սուրբ գիրին ու հաւատքին
Դարձաւ բաժին շուն ու գայլին,
Բզքտուեցաւ բզի՛կ-բզի՛կ...

Մեր հողը սուրբ, տունը նախնեաց,
Մեր օճախը հազարամեայ
Ոտքի կոխան պղծուեցան
Եւ կույ գացին որկորին շան:

Մեր ստեղծած խաչքար ու վանք,
Բերդ ու ամրոց, բիւր կոթողներ
Խլուեցան բիրտ թշնամիէն,
Դարձան աւեր ու աւերակ:


Ազգս հնամեայ թափառեցաւ
Անապատին մէջ Տէր Չօրի՛
Նօթի, ծարաւ, անպատսպար,
Բայց տէր կեցաւ իր պատիւին:

Ու հրրաշէկ աւագին վրայ
Դրոշմեց իր սուրբ Այբուբենը,
Չայն փոխանցեց հոյիին մատղաշ՝
Յարատեւման մեր գաղտնիքը:

Ու ապրեցաւ ու պիտ'ապրի
Արարչական կամքով Վերին,
Մեսրոպեան գիր ու ոգիով
Պիտի տոկայ ամրակորով:
2/4/2021

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

«Գարուն ա, ձիւն ա արել»:



Դուք լսե՞ր էք Կոմիտասի այս երգը լարային գործիքաւորմամբ: Տպաւորիչ ազդեցութիւն կը ձգէ ունկնդիրներու ականջին վրայ: Գարունը փթիթաւորած էր հայոց աշխարհի յանդերը, երբ յանկարծ ցանքը ցրտահարուեցաւ : Ձիւնը պատեց հազարամեակներու հայոց բնօրրանը...:

Մեծ Եղեռնի ոգեկոչման օրերուն, Սփիւռքի հայկական վարժարանները զոց կըլլային՝ ի յարգանս մէկուկէ միլիոն նահատակներուն, որոնք զոհ գացին թուրք եաթաղանին: Նուպարեան ազգային վարժարանի աշակերտներուս կը տանէին Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ աղօթելու անոնց անմար հոգիներուն վրայ: Խորանին առջեւ մենք կը գրաւէինք մեր տեղերը՝ երկիւղածութեամբ ոգեկոչելու անոնց յիշատակը: Բուրվառին միւսացող խունկը կը կախուէր օդին մէջ՝ վերի պատուհանէն ներթափանցող ճառագայթները հատելով: Վերնատունէն կը լսուէր Պր.Ղազարոս Ղազարոսեանի ղեկավարած երգչախումբը, մինչ մեզմէ ոմանք կը ձայնակցէին պատարագի շարականներուն:

Երբոր Կիպրոս գացի, ՄԿՀ-ի սաները դասարան առ դասարան կը շարուէին մեր անմահ բարերարներու դամբանին առջեւ՝ հոգեհանգստեան արարողութեամբ խաղաղացնելու հոգիները Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններուն, որոնք իրենց ողջ հարստութիւնը կտակեցին Եղեռնէն վերապրած որբերուն, կառուցել տալով մեր գիշերօթիկը: Գիտակից մեր առաքելութեան, մենք մէկ բոպէ յոտնկայս լռութեամբ կը յարգէինք ապրիլեան զոհերու յիշատակը, աղջկանց շէնքի հանդիսասրահին մէջ: Օրուան բանախօսը ամպիոնէն հանգամանօրէն կը ներկայացնէր օրուան խորհուրդը, որմէ ետք բեմ կը բարձրանային ասմունքողներ՝ ի խորոց սրտի արտասանելու նահատակ գրողներու սրտառուչ եւ յուզիչ բանաստեղծութիւնները: Վերջաւորութեան սգահանդէսը կը փակէին ՄԿՀ-ի զոյգ երգչախումբերը՝ Պր.Վահան Պետելեանի եւ Պր.Սեպուհ Աբգարեանի ղեկավարմամբ: Ի տարբերութիւն տարուան մշակութային միւս ձեռնարկներուն՝ Ապրիլ 24ին արտօնուած չէր ծափահարել: Մենք կեղրոնացած կը վերանորոգէինք մեր ուխտը՝ դառնալու մեր նախահայրերու արժանի գաւակները:

Մեծ Եղեռնի յիսնամեակին, յանկարծ կիրքերը բորբոքեցան հայոց մայրաքաղաքին մէջ: Հայրենաբնակ ժողովուրդը, տասնեակ տարիներէ ի վեր, իրաւունք չունէր ոգեկոչելու մեր նահատակաց յիշատակը: Յուշակոթող մը անգամ չկար, յիշեցնելու 1915ի սեւ թուականը: Համայնավարական կուսակցութիւնը արգիլած էր նշել որեւէ ազգային տօն: Ոմանք, անցնելով ընդլայնակէայ գործունէութեան, սկսան տպել հակապետական թռուցիկներ: Տեղի կ'ունենային բուռն ցոյցեր, զորս կասեցնելու համար ՀՍՍՀ-ի Կոմկուսը ստիպուած կըլլար ժողովներ գումարելու: Ապրիլ 24ի օրը ցուցարարները կը պաշարեն օպերայի շէնքը եւ



կառավարութենէն կը պահանջեն նշել Հայոց Մեծն Եղեռնը: Մոսկուայէն կը սկսին մտահոգուիլ Երեւանի մէջ ծագած անկարգութիւններուն համար, եւ Հայաստանի կոմկուսէն կը պահանջեն բացատրութիւն տալ: ՀՍՍՀի պոլիտբյուրօն կը վստահեցնէ, թէ բողոքները ամենեւին ուղղուած չէին սովետական կարգերուն դէմ, այլ մարդիկ պարզապէս կը ցանկանային իրենց տուրքը մատուցել օսմանեան եղեռնի գոհերուն: Մոսկուայէն կանաչ լոյս կը վառի, որպէսզի Երեւանի մէջ արագ կառուցուի «ապրիլեան գոհերի յուշարձանը»: Սակայն Ապրիլ 24ը կը շարունակէ մնալ աշխատանքային օր, որու ընթացքին բոլոր աշխատատեղերը կը հաւաքուին իրենց աշխատավայրերուն մէջ, որմէ ծաղկեպսակներով կը շարժին դէպի Ծիծեռնակաբերդի յուշարձանը, որմէ ետք անոնք կը վերադառնային աշխատելու համար: Հոգեւոր երաժշտութիւնը, որ մինչայդ արգիլուած կը մնար, կը սկսի հնչել անշեշտ հուրին շուրջ:

1968-ի Ապրիլ 24-ին, մեր Նախապատրաստական ֆակուլտետի սփիւռքահայ ուսանողներէն ոմանք պոյքթեցին դասընթացքները: Մէկ մասը անկողինէն չէր ելած՝ կարծելով թէ հանգիստի օր էր: Ես գացի համալսարան՝ մեր տնօրէնին տեղեկացնելու, թէ Ծիծեռնակաբերդ պիտի բարձրանայի: Ճամբան հանդիպեցայ համալսարանէն վերադարձող կարգ մը սփիւռքահայ ուսանողներու, որոնք սաստելով զգուշացուցին թէ

—Դեկանատ չմտնես. ընկեր Յարութիւնեանն ու ընկեր Առուստամեանը ծայրաստիճան կատողած են, որ դասախօսութիւններուն չենք ներկայացած: Եթէ քեզի հոն տեսնեն՝ վրադ պիտի պռռան եւ լաւ մը պիտի խայտառակեն:

Կարեւորութիւն չտալով անոնց յորդորներուն՝

ներս մտայ դուռէն եւ ձեռքս պարզեցի՝ տնօրէնին բարեւելու միտումով: Փոխ-տնօրէնը, որ անկիւնը կեցած զիս կը դիտէր, ինքն ալ ձեռքը պարզեց օղին մէջ եւ սկսաւ վազել դէպի հանդիպակաց պատը: Պահ մը շուարած մնացի եւ ձեռքս մնաց օղին մէջ: Յանկարծ տնօրէնը անխնայ կերպով սկսաւ զիս կոպտել՝ ուշ գալուս համար:

—Եկել եմ միայն յայտնելու, թէ քիչ ետք Ծիծեռնակաբերդ պիտի բարձրանամ:

Այս մարդը չուզէր անգամ ձայնս լսել, եւ սկսաւ զլխուս «լօլօներ կարդալ»: Միւսը զիս ծաղրելով փորձեց մեղմացնել անոր բարկութիւնը՝ ըսելով թէ առնուազն ես պարտաճանաչ գտնուած էի եւ եկեր էի իրենց բարեւելու...:

Ծիծեռնակաբերդ հասնելուս պէս հանդիպեցայ պոլսահայ Մուրատին եւ Պետիկին: Անոնք զիս ներկայացուցին իրենց տեղացի ընկերներուն: Անոնցմէ մէկը յառաջ անցաւ եւ առաջարկեց, որ միանամ իրենց գաղտնի շարժումին՝ արտասահման հասցնելով իրենց գրքոյկներն ու գրատր բողոքագիրները: Տարօրինակ առաջարկ մըն էր ըրածը, որուն շատ ականջ չկախեցի: Ես միտք չունէի հակապետական գործունէութեամբ զբաղուելու եւ ուսումն չաւարտած երկրէն արտաքսուելու:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, իջանք Ծիծեռնակաբերդէն եւ 7-8 հոգիով, ծանօթ-անծանօթ, մտանք ճաշարան: Ամբողջ օրը բերանս պատտաւ մը հաց չէի դրած: Ստամոքսէս

տարօրինակ ձայներ կուգային: Հոնտեղ, ապուրի պէս ջրալի բան մը կերանք, որուն հետ ըմպեցինք նոյնքան ոգելից ըմպելիքներ՝ կարմիր գինի, քաղցր լիքոր եւ դառն օղի: Ալքոհոլով խեղդեցինք մեր կսկիծն ու մորմոքը: Այսպէս անցաւ Մեծ Եղեռնի ոգեկոչման օրը Հայաստանի մէջ՝ նոր ծանօթութիւններու ներկայութեամբ: Անոնք պատրաստ էին վտանգել իրենց ողջ կեանքը՝ յանուն մեր ազգային պահանջներուն:

Ահռելի գլխացաւանքով եւ անզգաստ վիճակով, ուշ գիշերին չափազանց յոգնած վերադարձայ հանրակացարանի սենեակս: Օրուան հակասական տպաւորութիւնները ծանրաբեռներ էին միտքս եւ...նոքերս: Առանց հանուելու մեռելի պէս՝ փռուեցայ մահճակալիս վրայ: Յաջորդ առտու դանդաղօրէն ուշքի գալով՝ ուղեղիս մէջ բարդ հարցեր սկսան գոյանալ: Փորձեցի կեղրոնանալ եւ գտնել անոնց տրամաբանական պատասխանները: Ի գո՛ւր...: Այդ հարցերը այնպէս ալ անպատասխան մնացին:

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ

ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ՁԵՐՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԻԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Օրացոյցի վրայ յիշեցումներու օրեր կան, ուղղուած մարդկային ներաշխարհին:

Արժէքներ գնահատելու օրեր:

Յիշեցումներ,՝ վերադառնալու մեր էութեան խորքը, վերագտնելու այն արժէքները, որոնք իմաստ կու տան կեանքին: Մայրութեան եւ Գեղեցկութեան օրը այդպիսի բացառիկ առիթ մըն է:

Մայրը մարդկային կեանքի ամենասրբազան երեւոյթներէն մէկն է: Ան միայն ծնող չէ, այլ՝

սիրոյ առաջին դպրոցը, գուրգուրանքի անսպառ աղբիւրը եւ զոհողութեան լուր խորհրդանիշը: Մայրական սերը կեանքի առաջին լոյսն է, որուն շողերուն տակ մարդը կը կազմաւորուի իբրեւ անձնաւորութիւն:

Ի՞նչ է մայրութիւնը, եթէ ոչ անսահման նուիրում:Նուիրում, որ կու տայ առանց հարցնելու, կը ներէ առանց վարանելու, կը սիրէ առանց վերջ ունենալու:Անքուն գիշերներ, անտես եւ անվերջ զոհողութիւններ...:

Մայրը միայն բառ մը չէ. ան տիեզերք մըն է՝ ամբողջացած մէկ սրտի մէջ:

Սիրոյ առաջին լեզուն է, որ մենք սորվեցանք՝ առանց բառերու:

Գուրգուրանքի այն մեղմ հպումն է, որ կը բուժէ անբուժելին:



Մայրը զոհողութեան լուռ բարձունքն է. կու տայ առանց հաշուելու, կը զիջի առանց խօսելու, լուռութեամբ կը կառուցէ մեր երջանկութիւնը: Մայրը կեանք է, բայց նաեւ կեանքէն աւելի, շարունակուող աղօթք մըն է՝ միս ու արիւն դարձած:

Մայրը կը մարմնատրե՛

սեր՝ մաքուր,

գուրգուրանք՝ անսահման,

զոհողութիւն՝ լուռ,

նուիրում՝ ամբողջական:

Այս օրը նաեւ կը յիշեցնէ գեղեցկութեան իրական իմաստը: Ժամանակակից աշխարհը յաճախ արտաքինով կ'արժեւորէ գեղեցկութիւնը, ձեւով եւ անցողիկ տպաւորութիւններով: Գեղեցկութիւնը աւելի խոր է, քան աչքերուն մատուցուող հաճոյքը:

Իսկական գեղեցկութիւնը կը ծնի հոգիէն եւ կը հաստատուի մարդկային առաքինութիւններուն մէջ:

Գեղեցիկ է այն մարդը, որ կը սիրէ անկեղծութեամբ:

Գեղեցիկ է այն հոգին, որ կը ներէ, երբ իրաւունք ունի չներելու: Գեղեցիկ է այն հոգին, որ կը մնայ բարի՝ հակառակ դժուարութիւններուն: Գեղեցիկ է այն սիրտը, որ չի կարծրանար տառապանքէն:

Գեղեցկութիւնը պէտք է որոնել ոչ թէ հայելիին, այլ՝ հոգիներու մէջ: Գեղեցիկ ըլլալ՝ կը նշանակէ բարի ըլլալ: Պայծառ ըլլալ՝ կը նշանակէ լոյս տալ ուրիշներուն:

Այսօրուան խորհուրդը պարզ է, բայց խորիմաստ. արժեւորել մայրը ոչ միայն խօսքով, այլեւ վերաբերմունքով: Յիշել, որ գեղեցկութիւնը կը ծնի ներաշխարհէն եւ մարդոց միջեւ կը սփռէ ջերմութիւն եւ վստահութիւն:

Այս օրը մեզի մղէ վստահելու մարդու բարութեանը եւ դառնայ ուղեցոյց՝ դէպի աւելի մարդասէր, աւելի բարի եւ արժանապատիւ կեանք:

Մայրութեան եւ Գեղեցկութեան օրը խոստումի օր է.

Խոստում՝ աւելի սիրելու,

աւելի ներելու,

աւելի մարդ ըլլալու:

Որովհետեւ ի վերջոյ, իւրաքանչիւրիս մէջ կայ մայրական կայծ մը՝


կարողութիւն՝ սիրելու անշահախնդիր,

կարողութիւն՝ ներքնապէս գեղեցիկ ըլլալու:

Եւ երբ այդ կայծը կը բոցավառենք, աշխարհը քիչ մը աւելի կը նմանի այն ջերմ գիրկին, որուն անունն է՝ ՄԱՅՐ:

ԱԻՆԷԻ ՔԱՆ ԲԱՌ ՄԸ՝ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Լիզա Բանճարճեան Թելվիզեան



30/1/2026



Հին օրերու բարեկամութիւնը նուրբ հիւսուածք մըն էր, որ սիրտէ սիրտ կը ձգուէր՝ անտեսանելի, բայց ամուր թելերով: Մարդիկ զիրար կը ճանչնային դանդաղ, տարիներու ընթացքին եւ այդ դանդաղութենէն վստահութիւն կը ծնէր: Բարեկամ մը, յանկարծ տանդ մէջ կը յայտնուէր, առանց նախապէս տեղեկացնելու կամ հեռաձայնելու եւ լուռ ներկայութիւն մը կը դառնար թէ՛ ուրախութեանդ եւ թէ՛ ցաւիդ մէջ: Ներկայիս, բարեկամութեան էութիւնը չէ փոխուած: Ան դարձեալ կը պահանջէ ներկայութիւն, ազնուութիւն եւ զոհողութիւն: Հին օրերուն պէս, իսկական բարեկամութիւնը կը դիմանայ ժամանակի փորձութեան: Թէեւ թուայնացած աշխարհը այսօր կրնայ կապեր ստեղծել վայրկեաններու մէջ, բայց նոյնքան

արագ ալ կրնայ զանոնք քանդել:

Բարեկամութիւնները բազմերես են եւ անընդհատ շարժման մէջ: Կան այնպիսիները, որ ժամանակի աննկատ հոսքին մէջ կը խամրին, կը դառնան յիշատակ մը միայն, իսկ ուրջներ փորձութիւններով սնուած, օրէ օր կ'ամրապնդուին: Շատ անգամ պատահած է, որ մէկը ճանչցած եւ իր կեանքի որոշ հանգրուանին, եւ տարիներ ետք, անակնկալ հանդիպումի մը ընթացքին, դիմացդ կանգնի բոլորովին «ուրիշ» մարդ մը: Այդ լուռ, խպնտու եւ ինքնամփոփ պատանին յանկարծ դարձած է զուարճախօս, համարձակ եւ կեանքի վերիվայրումներուն մէջ կոփուած հասուն անձ մը: Բայց արդեօք աւելի գեղեցիկ բան կա՞յ, քան տարիներ ետք հանդիպիլ բարեկամի մը եւ զգալ, թէ «բան մը չէ փոխուած» ձեր յարաբերութիւններուն մէջ: Նոյն ջերմութիւնը, նոյն անխօս կապը... Բարեկամութիւնը կարծես գետ մըն է, որ իր հոսքին մէջ կը քշէ մակերեսայինն ու աւելորդը, կը զատէ ծանրութիւնը թեթեւէն, եւ իր խորքերուն մէջ կը պահէ միայն ճշմարիտը:



Վահան Թեքեան կ'ըսէ. «Բարեկամը հոգիիդ հայելին է»: Իրական բարեկամութեան մէջ, մարդ ինքզինք կը գտնէ առանց դիմակի, իր հարագատ ինքնութեամբ: Ան այդ հագուազիւտ կապն է, որ ժամանակէն եւ հեռաւորութենէն չի մաշիր, որովհետեւ կը սնանի վստահութեամբ եւ անկեղծութեամբ: Իրական բարեկամը քեզի կը ճանչնայ ոչ թէ ըսածովդ, այլ այն ինչ որ չես կրնար արտայայտել: Մէկ հայեացք, մէկ ժպիտ կամ նոյնիսկ լռութիւն մը կրնայ արեւի ճշգրիտ ըսել այն, ինչ որ հազար նախադասութիւններ չեն կրնար: Դիմացինդ այնքան լաւ կը ճանչնաս, որ կը զգաս անոր ուրախութիւնը կամ տխրութիւնը, առանց հարցնելու:

Իսկական բարեկամութիւն մը հիմնուած կ'ըլլայ խորիմաստ հասկացողութեան, փոխադարձ վստահութեան եւ հաւատարմութեան վրայ: Մէկը միւսին բարօրութիւնը խթանելով, կը ստեղծուի խորունկ կապ մը: Իրարու մտիկ ընելով եւ ապահով զգալով՝ բարեկամութիւն մը կը դառնայ մինակութեան սպեղանի: Յովհաննէս Թումանեան կ'ըսէ: «Բարեկամութիւնը այն գանձն է, որ դժուար օրերուն կը բացուի»: Կեանքի դժուարութիւններուն դիմաց՝ բարեկամը եթէ նոյնիսկ լուծումներ չի խոստանար, բայց կրնայ բաժնել մեր բեռը եւ զայն դարձնել տանելի:

Ներկայ մեր կեանքին մէջ, բարեկամութիւն մը պահպանելը մարտահրաւէր մըն է, որովհետեւ հին արժեքները նոր պայմաններուն մէջ պահելը դժուար է: նոր բարեկամութիւններ ստեղծելն ալ նոյնքան դիւրին չէ, քանի վստահութիւնը բարակ ապակիի մը պէս դիւրաբեկ կը թուի ըլլալ: Յաճախ անձի մը խօսքերը չեն համընկիր իր կատարածներուն: Պէտք է ժամանակ տալ, մինչեւ «դիմակները իյնան» եւ տեսնել, թէ ո՞վ պիտի գոյատեւէ այդ բարեկամութեան մէջ:

Իսկական բարեկամութիւնը թէեւ հագուադէպ է այս օրերուն, սակայն տակաւին գոյութիւն ունի: Հակառակ որ, շփումները կը սահմանափակուին կեանքի արագընթաց հեքին մէջ եւ պաշտօնականութիւնը հսկայ տեղ կը գրաւէ մեր առօրեային մէջ: Բարեկամութիւն մը կը ծնի ոչ միայն վստահութենէն, այլեւ անկեղծութենէն եւ զիրար լաւ հասկնալու իրողութենէն: Մանաւանդ երբ երկու կողմերը համեմատութիւն ալ չեն դնել իրենց ձեռքբերումներուն եւ իրագործումներուն միջեւ:

Վերջ ի վերջոյ, բարեկամութիւնը պայմանագիր մը չէ, այլ լուր բայց վառ ներկայութիւն մը: Ան մեզ կը յիշեցնէ, թէ մարդ մինակ չէ, նոյնիսկ կեանքի ամենէն մութ ճանապարհին վրայ եւ երբ այդ ներկայութիւնը կայ, ընթացքը կը դառնայ տանելի, սիրտը՝ արեւի մարդկային, իսկ խաւարը՝ քիչ մը արեւի լուսաւոր:

Լիզա Բանճարճեան Թելվիզեան

ՀԱՅԵԼԻՍ



ՏԱՐԲԵՐԱԿ21

28/3/2026



Անդաւաճան եւ խիստ դաստիարակս, անյիշաչար դատաւորս, որու հետ առճակատումէն յաճախ կը խուսափիմ:

Խուսափիլ հայելիէն՝ այսինքն խուսափիլ անձէս, էութենէս, թերութիւններէս եւ առաւելութիւններէս:

Օրերու քմայքին սեւն ու սպիտակը ճաշակած կնճիոներուս հետ հաշտութիւն կնքելու հայելիիս հրաւերը երբեմն կը մերժեմ, գեղագիտական հնարքներով կը թաքցնեմ զանոնք, բայց հոգւոյս մէջ աճած մոլախտտերը, փուշերը ո՞ր թաքցնեմ...:

Ներհայեցողութիւնը էական է. աչքերուս խորութեամբ կը դեգերիմ հոգւոյս բաւիղներուն մէջ. հայելիս կը զգաստացնէ:

Երբեմն հայեացքս կը վանեմ իրմէ, Աստուած ճ իմ, նոյնիսկ իր լռութիւնը կը սպաննէ:

Միրելի՛ս, արդէն հասուն եմ, քիչ մը իմաստութիւն ամբարեցի, վերիվայրումներ ունեցայ, դաժանօրէն վիրաւորուեցայ, ներեցի, սխալեցայ. բայց գիտե՞ս , չէ՞, որ կրնամ ներել բոլորին, իսկ ինքզինքիս հանդէպ այնքա՛ն խիստ եմ եւ աններող:



Հայելի՛ս, եկուր հաշտուինք, մահկանացու եմ եւ մեղաւոր, իսկ թանկարժէք գանձս, որուն գոյութեամբ կը շողարձակես եւ կը ճառագայթես՝ խիղճս է. այնքան ատեն որ կը փայլփլիս աչքերուս խորութեան հետ, հաշտ ենք...:

Չեմ փշրեր գոյութիւնդ:

ԱՐԱՔՍ ՓԻԼԱԻՃԵԱՆ-ԽՏՐԼԱՐԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Նոր գաղափարներ, նոր միտքեր յղանալու համար, ազատագրուած պիտի ըլլաս թապուներէ, ուրիշին կամ հասարակութեան, հատուածի մը թէ ղեկավարութեան հաճոյ թուալու ստրկամտութենէն, հինի բռնակալութենէն, քարացած կարծրատիպերէն, որոնք կը կաշկանդեն ազատ միտքը եւ պատնէշներ կը ստեղծեն անոր թռիչքը արգելակող...

.....

Նոր ժամանակներու մարդը ՄԷԿ ՕՐՈՒԱՆ ՄԱՐԴ է, շատ յաճախ...հոգեգուրկ եւ արմատախիլ...Կ'ապրի օրուան պահանջներուն համեմատ, այսօր հոս է, վաղը՝ հոն...Այսօր ա՛յս բարեկամները ունի, վաղը՝ ա՛յն: Նոյն ձեւով ալ կը փոխուին իր հակառակորդները՝ գաղափարական գետնի վրայ...Կ'ընէ ա՛յն ինչ որ իր տուեալ պահու շահերը կը պահանջեն, եւ կը ծիծաղի ալ անոնց վրայ, որոնք սկզբունքի տէր են, արժանապատուութեան հարց կը բարձրացնեն...Տեսած եմ երդուեալ հակառակորդներ, որոնք յանկարծ կը բարեկամանան, նոյնիսկ կը սերտանան, երբ կան հասարակաց շահեր...ՇԱՀՆ Է ՈՐ ԿԸ ԹԵԼԱԴՐԷ ՆՄԱՆՆԵՐՈՒՆ ՎԱՐՔԸ: ԻՍԿ ՇԱՀԸ ՅԱՐԱՓՈՓՈՒՄ Կ'ԸԼԼԱՅ ՄԻՇՏ:

.....



Որքան ալ դուն ազնիւ ըլլաս, արդար եւ նրբանկատ, ՉԱՐԸ կա՛յ ու կա՛յ...մենք մեզ չխաբենք: Եւ ամէն մարդ պարտի պայքարիլ չարին դէմ, գիտակից չարութիւն գործող չարին դէմ, որպէսզի վերջինը չքաջալերուի շարունակելու իր կործանարար վարքագիծն ու ընթացքը, զգաստանա՛յ, գտնէ իր արդար պատիժը...: Ամէն անգամ որ ԱՆՏԱՐԲԵՐ գտնուած ենք չարին հանդէպ, ան քիչ մը աւելի համարձակ, նոյնիսկ լկտի դարձած է չարիք գործելու իր ընթացքին մէջ...: Այսպէս է որ չարիքը կրկնապատկուած, բազմապատկուած է...Սա հաւասարապէս ճիշդ է անհատին եւ պետութեանց համար ալ..:

.....

Պճեղ մը անուշ սիրտը հրաշքներ կրնայ գործել:
Պուտ մը բարութիւնը դրական մթնոլորտ կը ստեղծէ:
Սիրող սիրտը լոյս կրնայ սփռել իր շուրջը:
Իսկ չարութիւնը միշտ ալ կործանարար է, թէկուզ իբր յանուն բարձր նպատակի...

.....

Ճշմարտութիւնը որքան հեռու է անոր մատուցումէն, անոր ընկալումէն, ինչպէս բուն իրադարձութիւնը՝ լրատուամիջոցներու հրամցուցածէն...Եւ այսպէս, հանրութիւնը տակաւ կը հեռանայ առարկայական ՃՇՄԱՐԻՏԷՆ, որ տեսաբար կը ձեռնավարուի, կը բռնաբարուի ու կ'այլասերի՝ ապակողմնորոշելու համար հանրային կարծիքը, եւ բուն ՃՇՄԱՐԻՏԻՆ փոխարէն ստեղծելու ՇԻՆԾՈՒ ՃՇՄԱՐԻՏԸ, որ ձեռնտու է աշխարհը կառավարող խումբ մը մարդկանց շահերուն: Սա կարելի է կոչել ՃՇՄԱՐՏԱՇԻՆՈՒԹԻՒՆ, կամ աւելի ճիշդ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՂԾԱՆՈՒՄ:

.....

Մարդկային պատմութեան մէջ, բոլոր յեղափոխութիւններն ալ իրագործուեր են որպէս արդիւնք ՈԳԻԻ ՅԱՆԴԳՆՈՒԹԵԱՆ...Ստրկամիտ եւ համակերպող ժողովուրդներն ու հաւաքականութիւնները չեն կրնար յեղափոխութիւն ընել, նոյնիսկ իրենց գիտակցութեան եւ ոգիին մէջ, ուր կ'իշխէ գերազանցօրէն ՎԱԽԸ...ՎԱԽԸ՝ ոտքի ելլելու զօրաւորին դէմ, ՎԱԽԸ՝ պատժուելու, տուժելու, ՎԱԽԸ՝ կորսնցնելու այն քիչը կամ շատը գոր ունին, ՎԱԽԸ՝ անյայտին, աննախատեսելիին: Վերջապէս, եթէ ՎԱԽԸ իր հազար ու մէկ ձեւերով սողոսկած է մարդ էակին էութեան մէջ, յայնժամ ինչպէ՞ս կարելի է ըմբոստանալ տիրող անարդարութեանց, անարգութեանց, կամայականութեանց, կեղեքումներուն դէմ: Սակայն, ամէն ինչ սահման մը ունի, եւ համբերութեան կամ համակերպողականութեան բաժակը միշտ ալ կրնայ յորդիլ:

.....

Շատ հազուադիւտ են այն անձերը, որոնք գիտեն գնահատել ուրիշին բարի, ազգանուէր գործը, քաջալերել զայն, արժեւորել ի գործ դրուած հոգեւոր աշխատանքը, զոհողութիւնը...Շատ-շատեր գիտեն միայն բարձրագոյն եւ բարձրադասակ խօսիլ, բարբառել ազնւութեան մասին, ազգասիրութեան մասին, հայրենասիրութեան մասին, միաժամանակ



ուրիշինը անտեսել, արհամարհել, նոյնիսկ սեւցնել...Ահա թէ ինչու հայ կեանքը կը հեւայ, կը հեւայ, կը հեւայ...ՇՆՉԱՍՊԱՌ:

.....

Ի՛նչ մեծ երանութիւն է, պահ առ պահ մտածել, խորհրդածել, խոկալ, վերլուծել եւ յետոյ գրի առնել մտորումներդ...Սա ալ ներքին պահանջք է կարծես, որ քեզ կը ստիպէ բառերու եւ տողերու վերածել երբեմն անվերծանելին, թերեւս ալ քիչ մը աւելի լաւ հասկնալու համար դուն քեզ, շրջապատդ, երեւոյթները, կեանքն ու աշխարհը վերջապէս:

.....

Երանի՛ սերը, բարեկամութիւնը եւ նման նուիրական զգացումները ըլլային անպայմանական, առանց որեւէ օգուտ ու շահ քաղելու ակնկալութեան, մաքուր ու անարատ...Մարդը մարդուն հասկնար կէս-խօսքէն, աչքի նայուածքէն, անոր լռութենէն, գիտնար ներել նոյնիսկ, քանզի ամէն ինչ հասկնալը ամէն ինչ ներել կը նշանակէ...(Խօսքը չի վերաբերիր անշուշտ անմարդկային արարքներու)...Կեանքը այնքա՛ն գեղեցիկ պիտի ըլլար՝ մարդկային փոխարարութեանց նման պայմաններուն, ուր մարդասիրութիւնը դառնար այնքան բնական, ինչպէս պտղատու ծառին պտղաբերումը՝ անհաշիւ, անսակարկ, բխումը հոգիի մաքրամաքուր ակունքին...

.....

Յուշերու աշխարհը տիեզերք է անեզր, լայնածիր, ուր յաճախ կը ճամբորդեմ առանձին պահերուս, եւ ամբողջ աշխարհ մը կարծես կը վերակենդանանայ....հի՛ն-հի՛ն դեմքեր կը յառնեն տարիներու եւ տասնամեակներու խորերէն, անոնց մէկ խօսքը, հայեացքը, արարքը կը կառչի յիշողութենէս, եւ այնպէս կը թուի որ կարծես երէկ էր ա՛յդ...Յուշերու այս առկայծումը համակ հարստութիւն է, յուզա-իմացական ամբողջ աշխարհ մը որ իր յորձանքին մէջ կ'առնէ քեզ եւ ժամանակը կը դառնայ ոչ-իրական: Անցեալի եւ ներկայի այս կամրջումը էական է մարդ էակին համար, քանզի մարդը միայն այսրոպէական չի կրնար ըլլալ: Ան կայծ մը կը կրէ յաւիտենական շունչի...:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Բիրտ ոյժն առանց իմաստութեան վառօդով լի տակառ մըն է,
Ուշ թէ կանուխ ան կը պայթի ձեր ձեռքին մէջ, ձեր գլխուն մէջ,
Զգոյշ վարուէք դուք անոր հետ, խղճի ձայնին լոկ ունկնդիր,
Թէ չէք ուզեր դուք կործանել մարդ ու աշխարհն ու ամէն ինչ:

.....

Արմատներով է ծառը՝ ծառ, իր աւիշով յորդահոսան,
Թէ կտրես զայն արմատներէն, ան կը փրտի ու կը չորնայ,
Կինարմատէն ծնունդ կ'առնէ ազգը ամբողջ ու կը մեծնայ,
Թէ ուժեղ է կինը, մայրը, զօրեղ կ'ըլլայ ազգը համակ:

.....

Մի՛ պոկէք զիս արմատներէս, իմ պապերուս պատմութենէն,
Մի՛ խլէք դուք Արարատը իմ հայեացքէն, միտքէն, սիրտէն,
Ան է միշտ ինձ ոգի տուեր, բարձունք վսեմ, տեսիլք լուսէ,
Առանց անտնց ՀՄՅ չի մնար, կ'ոչնչանանք, զգաստացէ՛ք:

.....

Մրտիս փոքրիկ սափորին մէջ,
Ի՛նչ կրակներ մոխիր դարձան,
Բայց հոգիս դեռ կ'որոնէ յար
Անթերուած բոց մը անտնց մէջ:

.....

Ո՛վ աշխարհի հօր տէրեր, խելքերնիդ կա՛րձ, սիրտերնիդ քա՛ր,
Մի՛ կառուցէք ձեր գահերը անմեղ մարդոց արեան վրայ,
Այդ արիւնը ուշ թէ կանուխ կրնայ պայթիլ ձեր գլխուն մէջ,



Դուք չէք կրնար հանգիստ գտնել նոյնիսկ ձեր շիրիմին մէջ:

.....

Եթէ խիղճը չէ օրէնքի հսկիչ
Եւ մարդը դատուի օրէնքով անխիղճ,
Խիղճն յայնժամ պարտի բիրտ օրէնքին դէմ
Ելլել ու կանգնիլ պայծառ ու վսեմ...

.....

Ազատութի՛ւն, ամէն պահ դուն կը տրորորուիս,
Սմբակներուն տակ ուժեղին, անպատկառին,
Որ քեզ ունի որպէս լոգունճ իր շուրթերուն,
Քեզ կը պղծէ յանուն միայն իր շահերուն:

.....

Անցողիկ են սին փառքերը,
Փրփուրի պէս կ'անհետին,
Կը մնայ սոսկ մարգարիտը՝
Ծովու խորունկ յատակին:

.....

Կեանքը համակ անհերթի թատրոն մըն է տարօրինակ,
Դերակատարն մարդ էակն է որ իր ձեռքերով սեփական
Կեանքը դարձնէ՝ փոխան դրախտի, երկրի վրայ, կատարեալ դժոխք,
Յերիւրելով սին պայքարներ յանուն շահին ամենագոր...

.....

Ահաւոր ես, մա՛րդ արարած,
Դար ու դարեր գոհն ես դարձեր
Յիմարութեանդ սեփական
Եւ չես խրատուիր, նոյնն ես մնացեր:

.....

Ահեղ կռիւ էր, կոտորած անգութ,
Եղեռն էր դաժան, ոսոխ արիւնոռուշտ,
Բայց կայ դեռ, կ'ապրի, կը շնչէ լիաթոք
Հայոց հաստաբետ կաղնին հինաւուրց:

.....

Թէ հայն հայուն յարգը գիտնար,
Ունենար սէ՛ր, գո՛ւթ, գորովա՛նք,
Կ'ըլլայինք բունցք անպարտելի,
«Մենք» մը հզօր, անխոցելի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ